

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼ ՍԱՐԱՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԳԵՈՐԳԻ ՄԱԹԿՈՍԻ

**ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿՈՒ ԹՅՈՒՆՆԵՐԻ
ՎԱՐԿՈՒ ՆԱԿՈՒ ԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԻՄՆԱԽԱԴԻՐՆԵՐԸ
ՀՀ-ՈՒՄ**

Ատենախոսություն

Ը.00.02 - «Տնտեսություն, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությունը տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Գիտական ղեկավար՝
Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
ԲՈՍՏԱՆՁՅԱՆ ՎԱՐԴԱՆ ԲԱԲԿԵՆԻ

ԵՐԵՎԱՆ – 2017

ԲՈՎԱՆԴԱԿՈՒ ԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ.....	2
ԳԼՈՒԽ1. ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿՈՒ ԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒ ԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՊԱՐՈՎԿԱԾՈՒ ԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ.....	9
1.1. ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿՈՒ ԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ	9

1.2. ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԲԻԶՆԵՍԻ ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԱՌԱՆՁՆԱՅ ԱՏԿՈՒ ԹՅՈՒՆՆԵՐԸ	24
1.3. ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԶԵՌՆԱՐԿՈՒ ԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ՌԻՍԿԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ	35
ԳԼՈՒԽ2. ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԶԵՌՆԱԿՈՒ ԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐԿՈՒՆԱԿՈՒ ԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ.....	44
2.1. ՎԱՐԿՈՒՆԱԿՈՒ ԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒ ԹՅՈՒՆ ԵՎ ԳՆԱՅ ԱՏՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ	44
2.2. ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԶԵՌՆԱՐԿՈՒ ԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐԿՈՒՆԱԿՈՒ ԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՅ ԱՏԿՈՒ ԹՅՈՒՆՆԵՐԸ	63
2.3. ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԶԵՌՆԱՐԿՈՒ ԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐԿՈՒՆԱԿՈՒ ԹՅԱՆ ԳՆԱՅ ԱՏՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԻ ՎԵՐԼ ՈՒԾՈՒ ԹՅՈՒՆԸ.....	73
ԳԼՈՒԽ3. ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԶԵՌՆԱՐԿՈՒ ԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐԿՈՒՆԱԿՈՒ ԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ԿԱՏԱՐԵԼ ԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂՂՈՒ ԹՅՈՒՆՆԵՐԸ	85
3.1. ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԶԵՌՆԱՐԿՈՒ ԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ Լ ՈՒԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ.....	85
3.2. ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԶԵՌՆԱՐԿՈՒ ԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐԿՈՒՆԱԿՈՒ ԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒ ԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒ ՄՆԵՐԸ	95
ԵԶՐԱԿԱՑՈՒ ԹՅՈՒՆՆԵՐ	115
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒ ԹՅԱՆ ՑԱՆԿ.....	127

ԱՌԱՋԱԲԱՆ

Շուկայական հարաբերությունների պայմաններում տնտեսության բնականոն կենսագործունեության ապահովման գործում առանցքային դեր և նշանակություն ունի փոքր և միջին ձեռնարկատիրությունը (ՓՄՁ), որը տնտեսության առավել ճկուն և դինամիկ զարգացող ոլորտներից է: ՓՄՁ ոլորտի սուբյեկտների հիմնական առավելություններից են շուկայի փոփոխությունների ճկուն և համարժեք ռեակցիա ցուցաբերելու ընդունակությունը, կառավարչական որոշումների արագ և օպերատիվ կայացման

հնարավորությունը, տեղական շուկաների ու հաճախորդների վերաբերյալ լիարժեք տեղեկացվածությունը և այլն: Միաժամանակ պետք է նկատի ունենալ, որ այդ սուբյեկտները հնարավորություն չունեն լուծել բարդ կապիտալատար խնդիրներ, քանի որ ունեն մեկնարկային փոքր կապիտալ և գործունեության ռիսկայնության բարձր աստիճան: Չնայած գոյություն ունեցող ռիսկերին և այլ բացասական երևույթներին՝ ՓՄՁ ոլորտն ունի զգալի ներուժ երկրի քաղաքական և տնտեսական զարգացման գործում ծանրակշիռ մասնակցություն ապահովելու հարցում, ինչը պահանջում է կենսագործունեության համար անհրաժեշտ նախադրյալների ստեղծում և գոյություն ունեցող հիմնախնդիրների արդյունավետ լուծման ուղիների մշակում, համապատասխան տնտեսական և իրավական միջավայրի ձևավորում, այդ թվում՝ ոլորտի ֆինանսական ապահովվածության մակարդակի բարձրացում: Ներկայումս հանրապետությունում ՓՄՁ ոլորտի զարգացման հիմնական խոչընդոտներ են վարկային ապահովվածության ցածր աստիճանը, երկարաժամկետ վարկային ռեսուրսների բացակայությունը, վարկային միջոցների «թանկությունը», միկրոֆինանսավորման ինստիտուտների թերզարգացվածությունը և միջարքայլ գործոններ: Առևտրային բանկերի և ՓՄՁ սուբյեկտների փոխհարաբերության արդյունավետ կազմակերպումը և դինամիկ զարգացումը կարևոր նշանակություն ունեն վերջիններիս ֆինանսական ռեսուրսներով ապահովելու գործում: Միևնույն ժամանակ գոյություն ունեն փոքր և միջին բիզնեսի վարկավորման միջարք խոչընդոտներ ու արգելքներ, որոնք կապված են տվյալ սուբյեկտների և առևտրային բանկերի միջև ֆինանսավարկային հարաբերությունների առանձնահատկություններով: Փոքր և միջին ձեռնարկությունները բանկերի կողմից վարկավորման տեսանկյունից դիտարկվում են որպես ռիսկայնության բարձր մակարդակ ունեցող խումբ, հատկապես պայմանավորված այդ սուբյեկտների մեկնարկային կապիտալի և իրացվելիք միջոցների սահմանափակությամբ: Անշուշտ, առևտրային բանկերի կողմից ՓՄՁ սուբյեկտների վարկավորման ռիսկայնությունը նախևառաջ պայմանավորված է տրամադրված ֆինանսական միջոցների հետ

չվերադարձման բարձր հավանականությամբ: Նման իրավիճակում կարևոր նշանակություն է ստանում փոքր և միջին ձեռնարկությունների վարկավորման հետ կապված ռիսկերի բացահայտումը և դրանց արդյունավետ կառավարումը: Նշված խնդրի լուծմանը կարող է որոշակիորեն օգնել վարկունակության գնահատումը, որը կնպաստի բանկերի կողմից վարկավորման վերաբերյալ օբյեկտիվ որոշումների կայացմանը: Միաժամանակ վարկունակության ապահովումը հնարավորություն է կտա ՓՄՁ սուբյեկտներին լուծել սեփական ֆինանսական ապահովվածության խնդիրը՝ արդյունավետ նախադրյալներ ստեղծելով տնտեսական գործունեության իրականացման համար:

Պետք է նշել, որ կազմակերպության վարկունակության գնահատման համար գոյություն ունեցող մեթոդները մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով փոքր և միջին բիզնեսի դեպքում կիրառելի չեն՝ ամենից առաջ պայմանավորված լիարժեք և արժանահավատ տեղեկատվության բացակայությամբ: Խնդիրն այն է, որ վարկունակության գնահատման ավանդական մեթոդները, որպես կանոն, հաշվի չեն առնում ՓՄՁ ոլորտի առանձնահատկությունները, իսկ դրանց կիրառման համար անհրաժեշտ տեղեկատվությունը փոքր և միջին ձեռնարկությունների պարագայում կա՛մ բացակայում է, կա՛մ թերի է: Յետևաբար առաջին հերթին անհրաժեշտ է դիտարկել փոքր և միջին ձեռնարկությունների գործունեության հետ կապված այն խնդիրները, որոնք զգալիորեն անդրադառնում են բանկերի կողմից նման սուբյեկտների վարկունակության գնահատման գործընթացի վրա: Այդ նպատակով պետք է մշակել վարկային պարտավորությունների կատարման համար փոքր և միջին ձեռնարկությունների ֆինանսատնտեսական հնարավորությունների լիարժեք գնահատման և վարկունակության կառավարման արդյունավետ մոտեցումներ: Ատենախոսությունը նվիրված է նշված հարցերի ուսումնասիրությանը, ինչով էլ պայմանավորված են թեմայի **հրատարակությունն ու արդիականությունը:**

Վերջին տարիներին հանրապետությունում իրականացվել են տարբեր ուսումնասիրություններ կազմակերպությունների

վարկուհակու թյան կառավարման հարցերի վերաբերյալ, այդ թվում նաև գիտական հետազոտությունների և ատենախոսությունների տեսքով¹: Սակայն դրանք հիմնականում վերաբերել են տնտեսավարող սուբյեկտների վարկուհակու թյան հարցերին՝ առանց փոքր և միջին ձեռնարկությունների տարանջատման և վերջիններիս վարկուհակու թյան կառավարման առանձնահատկությունների վերլուծության: Սույն ատենախոսությունը նվիրված է ՓՄՁ սուբյեկտների վարկուհակու թյան կառավարման հիմնախնդիրներին և դրանց լուծման ուղիներին, հենց դա էլ աշխատանքի հիմնական առանձնահատկությունն է:

Չետազոտության նպատակը և խնդիրները: Աշխատանքի հիմնական նպատակը փոքր և միջին ձեռնարկությունների վարկուհակու թյան կառավարման մոտեցումների և առաջարկությունների մշակումն է, որին հասնելու համար աշխատանքում դրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել փոքր և միջին ձեռնարկատիրության երկրները և դերը երկրի տնտեսական զարգացման գործում, վերլուծել դրա արդյունավետ գործունեության ապահովման նախադրյալները և պետության կողմից տվյալ ոլորտի ֆինանսավարկային աջակցության մեխանիզմները,
- հետազոտել փոքր և միջին ձեռնարկությունների ֆինանսական ռեսուրսների ձևավորման աղբյուրները և դրանց առանձնահատկությունները, քննարկել ՓՄՁ ոլորտի ֆինանսական ապահովվածության հիմնախնդիրները և դրա վրա ազդող գործոնները,
- ուսումնասիրել վարկային ռիսկերի տնտեսական բովանդակությունը, վերլուծել փոքր և միջին ձեռնարկությունների վարկավորման ռիսկերը և դրանց արդյունավետ կառավարման խնդիրները, բացահայտել ՓՄՁ ոլորտի վարկավորման ռիսկայնության վրա ազդող

¹ Զ. Զակոբյան, Վարկառուի վարկուհակու թյան գնահատման արդի հիմնախնդիրները /ԶԶ նյութերով/: Ատենախոսություն: Զայաստանի պետական տնտեսագիտական համալսարան: Երևան, 2013 թ., 151 էջ:

գործունեությունը և գնահատել դրանց ազդեցությունը վարկունակության վրա,

- ուսումնասիրել վարկունակության տնտեսական բովանդակությունը և գնահատման մեթոդները, հիմնավորել փոքր և միջին ձեռնարկությունների համար դրանց կիրառման սահմանափակ հնարավորությունները,
- բացահայտել ՀՀ-ում ՓՄՁ ոլորտի վարկավորման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները, մշակել փոքր և միջին ձեռնարկությունների վարկունակության կառավարման արդյունավետության բարձրացման եղանակներ:

Ուսումնասիրության օբյեկտը և առարկան:

Ուսումնասիրության օբյեկտը ՓՄՁ ոլորտն է, իսկ առարկան՝ փոքր և միջին ձեռնարկությունների վարկունակության կառավարման հիմնահարցերը:

Ատենախոսության տեսական, տեղեկատվական և մեթոդական հիմքերը: Ատենախոսության համար հիմք են հանդիսացել տնտեսագիտության տեսության դասական աշխատությունները, տնտեսական քաղաքականության տարբեր բնագավառներին վերաբերող հայրենական և արտասահմանյան գրականությունը, ՓՄՁ ոլորտը կարգավորող ՀՀ օրենքները, իրավական այլ ակտերը: Հետազոտության համար տեղեկատվական հիմք են հանդիսացել ՀՀ կենտրոնական բանկի, ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության, համապատասխան պետական մարմինների, ինչպես նաև միջազգային կառույցների պաշտոնական նյութերն ու տվյալները: Հետազոտության ընթացքում կիրառվել են տնտեսավիճակագրական, համակարգային, համեմատական և գործոնային վերլուծության մեթոդները:

Ատենախոսության գիտական նորույթը: Աշխատանքի հիմնական գիտական արդյունքները, որոնք պայմանավորված են հետազոտության մեջ առաջարկված խնդիրների լուծմամբ, հետևյալն են.

- փոքր և միջին ձեռնարկությունների գործունեության ֆինանսավորման աղբյուրների ուսումնասիրության արդյունքում գնահատվել են դրանց օգտագործման

հնարավորությունները հանրապետությունում, հիմնավորվել է տնտեսական զարգացման ներկա փուլում բանկային վարկավորման առաջնային նշանակությունը ՓՄՁ ոլորտի ֆինանսավորման գործում,

- «վարկունակություն» հասկացության տեսամեթոդական հիմքերի համակողմանի վերլուծության հիման վրա բացահայտվել են փոքր և միջին ձեռնարկությունների վարկունակության վրա ազդող գործոնները և մշակվել են ֆինանսաբանկային ինստիտուտների հետ փոխվստահության վրա հիմնված հարաբերությունների ձևավորման ուղիները,
- հանրապետությունում փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտի վարկավորման հիմնախնդիրների վերլուծության հիման վրա բացահայտվել են դրա ռիսկայնությունը բարձրացնող գործոնները և մշակվել են տվյալ ոլորտում վարկային ռիսկերի կառավարման հիմնական մոտեցումները,
- վարկունակության գնահատման մեթոդների համակողմանի ուսումնասիրության հիման վրա հիմնավորվել է փոքր և միջին ձեռնարկությունների համար դրանց կիրառման սահմանափակ հնարավորությունն աննպատակահարմարությունը և մշակվել են առաջարկություններ համապատասխան ցուցանիշների կիրառման միջոցով ՓՄՁ սուբյեկտների վարկունակության գնահատման արդյունքների արժանահավատության և օբյեկտիվության բարձրացման նպատակով,
- մշակվել են Հայաստանի Հանրապետությունում ՓՄՁ ոլորտի վարկավորման արդյունավետության բարձրացմանն ուղղված առաջարկություններ և պետական աջակցության գործիքների արդյունավետ կիրառման միջոցով փոքր և միջին ձեռնարկությունների ֆինանսական ապահովվածությանն ու վարկունակության բարձրացմանն ուղղված մոտեցումներ:

Ատենախոսության մեջ քննարկված հիմնախնդիրներից շատերը Հայաստանի Հանրապետությունում ամբողջական ու համակարգված ուսումնասիրման չեն ենթարկվել և չեն կրկնում այլոց կողմից առանձին հարցերի շուրջ կատարված ուսումնասիրությունները,

որով էլ պայմանավորված է ստացված արդյունքների գիտական նորույթը:

Փոքր և միջին ձեռնարկությունների վարկունակության կառավարման հիմնահարցերը դիտարկվել են ընդհանուր տնտեսական քաղաքականության համալիրում, որի արդյունքում մշակված մոտեցումների գործնական կիրառումը, մեր կարծիքով, կընձեռի լայն հնարավորություն Յայաստանի Հանրապետության ՓՄՁ ոլորտի ֆինանսական ապահովվածության մակարդակի բարձրացման համար: Առաջարկված մոտեցումները հիմնված են հանրապետության տնտեսության մեջ ձևավորված իրավիճակի համակողմանի վերլուծության և ՓՄՁ ոլորտում գործող տնտեսվարող սուբյեկտների ֆինանսատնտեսական ցուցանիշների գնահատման վրա: Դրանց գործնական կիրառումը, մեր կարծիքով, թույլ կտա հանրապետությունում ձևավորել այնպիսի միջավայր, որն առավելագույնս կնպաստի փոքր և միջին ձեռնարկությունների վարկունակության կառավարման հետ կապված խնդիրների լուծմանը և նրանց ֆինանսական ապահովվածության մակարդակի բարձրացմանը:

Աշխատանքի գործնական նշանակությունը: Փոքր և միջին ձեռնարկությունների վարկունակության կառավարման վերաբերյալ առաջարկությունները կարող են օգտագործվել ՀՀ օրենսդիր և գործադիր մարմինների, ֆինանսաբանկային ինստիտուտների կողմից հանրապետությունում գործարար միջավայրի բարելավման և ՓՄՁ ոլորտի զարգացմանն ուղղված միջոցառումների մշակման և դրա հետևողական իրականացման ընթացքում: Ստացված արդյունքները կարող են օգտակար լինել նաև նշված համակարգերում աշխատողների համար:

**ԳԼՈՒԽ 1. ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿՈՒ ԹՅՈՒՆՆԵՐԻ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒ ԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՊԱՅՈՎՎԱԾՈՒ ԹՅԱՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ**

**1.1. ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿՈՒ ԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ
ՈՒՍՈՒՐՍՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ**

Շուկայական հարաբերությունների պայմաններում տնտեսության բնական կենսագործունեության ապահովման գործում առանցքային դեր և նշանակություն ունի փոքր և միջին բիզնեսը, որը տնտեսության առավել ճկուն և դինամիկ զարգացող ոլորտներից է: Վերջինս ժամանակակից շուկայական տնտեսության անբաժանելի մասն է կազմում, որն էական դերակատարում ունի երկրի քաղաքական և տնտեսական առաջընթացի ապահովման, ինչպես նաև սոցիալական բնույթի միջարքայլ հիմնախնդիրների լուծման գործում: Փոքր և միջին ձեռնարկություններն իրենց ավանդն ունեն նաև շուկայի որակյալ և մատչելի գներով ապրանքներով ապահովելու, ինչպես նաև անհրաժեշտ ծառայությունները դրանց անմիջական սպառողներին մոտեցնելու գործում: Ինչպես նշում է Վ. Գրիբովը, փոքր և միջին բիզնեսի նշանակությունն արտահայտվում է նոր աշխատատեղերի ստեղծման, ապրանքների և ծառայությունների արտադրության և խոշոր բիզնեսի կարիքների բավարարման միջոցով²: Վ. Գորֆինկելի և Վ. Շվանդարի կարծիքով, փոքր և միջին ձեռնարկությունները խոշոր ձեռնարկատիրական կառույցների, ինչպես նաև պետական սեկտորի հետմիասին կազմում են միասնական ամբողջություն³: Մ. Լապրևտան և Յու. Ստարոստինը փոքր և միջին ձեռնարկատիրությունն են համարում օրենսդրորեն

² Грибов В., Менеджмент в малом бизнесе. Финансы и статистика. М., 2002 г., стр. 5.

³ Малые предприятия: организация, экономика, учет, налоги. Под ред. В. Горфинкеля, В. Швандара. Юнити., М., 2001 г., стр. 3.

սահմանված չափանիշներին բավարարող և շուկայական տնտեսության սուբյեկտների կողմից իրականացվող տնտեսական գործունեությունը⁴:

Սոցիալ-տնտեսական զարգացման ժամանակակից փուլում փոքր և միջին ձեռնարկությունների բնականոն գործունեության ապահովման խնդիրների լուծումը ձեռք է բերում մեծ կարևորություն: Պետք է նշել, որ երկրի քաղաքական և տնտեսական կյանքում փոքր և միջին բիզնեսի ունեցած առանձնահատուկ տեղը և դերը պայմանավորված են մի շարք գործոններով: Տվյալ ոլորտի գործունեության կազմակերպումը, չափանշելով մեծ ծավալի մեկնարկային կապիտալ, ապահովում է ռեսուրսների արագ շրջանառություն և աճի բարձր դինամիկա: Բացի այդ, ՓՄՁ ոլորտը հակված է նորարարությունների կիրառմանը, նպաստում է գործազրկության կրճատմանը և սոցիալ-տնտեսական բնույթի մի շարք այլ հիմնախնդիրների լուծմանը: Այն զգալիորեն պայմանավորում է տնտեսական աճի տեմպերը և համախառն ներքին արդյունքի որակն ու կառուցվածքը: Ծուկայական հարաբերությունների պայմաններում ՓՄՁ ոլորտի դերը երկրի տնտեսական կյանքում դրսևորվում է երեք տարբեր և միաժամանակ միմյանց հետ փոխկապակցված ու կարևոր ուղղություններով: Այն հանդիսանում է սեփական արտադրական կարիքների համար զգալի գնումներ իրականացնող (սպառող), շուկայական կոնյուկտուրայի փոփոխություններին օպերատիվ կերպով արձագանքող և դրան անհրաժեշտ էլաստիկություն հաղորդող (արտադրող), լրացուցիչ աշխատատեղեր ստեղծող ու զբաղվածություն ապահովող (գործատու): ՓՄՁ սուբյեկտների հիմնական առավելություններից են շուկայի փոփոխություններին ճկուն և համարժեք ռեակցիա ցուցաբերելու ընդունակությունը, կառավարչական որոշումների արագ և օպերատիվ կայացման հնարավորությունը, տեղական շուկաների և հաճախորդների վերաբերյալ լիարժեք տեղեկացվածությունը, նեղ մասնագիտացման շնորհիվ արտադրվող ապրանքների և մատուցվող ծառայությունների հարաբերական էժանությունը և այլն:

⁴ Лапуста М., Старостин Ю., Малое предпринимательство. Учебное пособие. Инфра-М. М., 2002 г., стр. 5.

Միաժամանակ պետք է նկատի ունենալ, որ այդ սուբյեկտները հնարավորություն ունեն լուծել բարդ կապիտալ ատար խնդիրներ, քանի որ ունեն մեկնարկային փոքր կապիտալ և ռիսկայնության բարձր աստիճան: Իր ունեցած առավելություններով և թերություններով հանդերձ, ՓՄՁ ոլորտը տնտեսության շարժիչ ուժ է և երկրում միջին խավի ձևավորման հիմք՝ դառնալով պետության քաղաքական և սոցիալական կայունության ապահովման կարևոր երաշխիք: Անշուշտ, տվյալ սեկտորի ունեցած դերն ու նշանակությունը տնտեսության զարգացման գործում պահանջում է կենսագործունեության համար անհրաժեշտ նախադրյալների ստեղծում և գոյություն ունեցող հիմնախնդիրների արդյունավետ լուծման ուղիների մշակում: Դա իր հերթին ենթադրում է համապատասխան տնտեսական և իրավական միջավայրի ստեղծում, որի առանցքային ուղղություններից մեկը ՓՄՁ ոլորտի ֆինանսական ապահովվածության մակարդակի բարձրացումն է:

Անշուշտ, ՓՄՁ ոլորտի բնականոն գործունեության, ինչպես նաև այդ նպատակով աջակցության գործիքների կիրառման հասցեականության ապահովումը նախաառաջ պահանջում է տվյալ ոլորտին պատկանող սուբյեկտների որոշման հստակ չափորոշիչների սահմանում: Որպես կանոն, այդ նպատակով հիմնականում կիրառվում են ինչպես քանակական, այնպես էլ որակական չափորոշիչներ:

Աղյուսակ 1⁵

ՓՄՁ դասակարգման չափորոշիչները

	Աշխատողների թվաքանակ			Տարեկան շրջանառություն		
	Միկրո	Փոքր	Միջին	Միկրո	Փոքր	Միջին
ԵՄ	10	50	250	2 մլն եվրո	10 մլն եվրո	50 մլն եվրո
ՀՀ	10	50	250	100 մլն դրամ	500 մլն դրամ	1500 մլն դրամ

⁵ Annual report on european smes 2013/2014. Final Report. European Commission. p. 10. <<Փոքր և միջին ձեռնարկատիրոջան պետական աջակցության մասին>> ՀՀ օրենք:

Պետք է նշել, որ ՓՄՁ սուբյեկտների գործունեության ֆինանսավորումն ունի որոշակի առանձնահատկություններ՝ ի տարբերություն խոշոր ձեռնարկությունների: Անշուշտ, այդ ուղղությամբ գոյություն ունեցող հիմնախնդիրների բացահայտումը կարևոր նշանակություն ունի ՓՄՁ ոլորտում տնտեսական քաղաքականության մշակման ու իրականացման, դրա պետական աջակցության արդյունավետության բարձրացման ու միջարք այլ խնդիրների լուծման համար: Փոքր և միջին ձեռնարկությունների գործունեության կազմակերպման ու իրականացման հիմնական խոչընդոտներից մեկը ֆինանսական ապահովվածության ցածր մակարդակն է, որի բարձրացումն էական նախադրյալ է ՓՄՁ ոլորտի զարգացման համար:

Ընդհանուր առմամբ յուրաքանչյուր տնտեսավարող սուբյեկտ սեփական տնտեսական գործունեության կազմակերպման ու իրականացման համար կարիք ունի ֆինանսական ռեսուրսների, որոնք դասակարգվում են տարբեր խմբերի՝ ելնելով որոշակի չափանիշներից: Մասնավորապես պայմանավորված ծագման բնույթով՝ դրանք լինում են ներքին և արտաքին: Առաջինները ձևավորվում են կազմակերպության տնտեսական գործունեության արդյունքում գոյացող դրամական հոսքերի, մասնավորապես շահույթի, ամորտիզացիոն մասհանումների և այլ միջոցների հաշվին: Արտաքին աղբյուրներին են դասվում բյուջետային և արտաբյուջետային ֆոնդերից ստացվող ֆինանսական օժանդակությունը, ներգրավվող փոխառու միջոցները և այլն:

Փոքր և միջին ձեռնարկությունների ֆինանսական ռեսուրսների ձևավորման արտաքին աղբյուրները կարելի է դասակարգել տարբեր չափանիշներից ելնելով: Վարկատուի և վարկառուի փոխարարբերությունների բնույթով պայմանավորված՝ դրանք լինում են ֆորմալ (բանկային վարկ, լիզինգային, ֆակտորինգային և վենչուրային ընկերությունների կողմից տրամադրվող միջոցներ) և ոչ ֆորմալ (բիզնեսի սեփականատիրոջ հարազատների կամ ընկերների կողմից տրամադրվող փոխառություններ և այլն): Ֆորմալ և ոչ ֆորմալ աղբյուրների

հարաբերակցությունը կախված է ՓՄՁ սուբյեկտի գործունեության ժամկետներից և չափերից: Որպես կանոն, գերփոքր ձեռնարկությունները և սկսնակ բիզնեսը համեմատաբար քիչ են օգտվում \$նորմալ աղբյուրներից (պայմանավորված նման աղբյուրներից օգտվելու սահմանափակ հնարավորություններով)` ի տարբերություն փոքր և միջին, ինչպես նաև գործունեության որոշակի պատմություն ունեցող սուբյեկտների:

Կախված փոքր և միջին ձեռնարկությունների \$ինանսական ռեսուրսների ձևավորման պայմաններից` առանձնացվում են վարկավորումը և \$ինանսավորումը: Այլ կերպ ասած` փոքր և միջին ձեռնարկությունների արտաքին \$ինանսավորումն իրականացվում է կապիտալի բաժնեմասի փոխանցման և փոխառու միջոցների ներգրավման միջոցով: Ընդ որում ՓՄՁ սուբյեկտների կողմից դրանց կիրառման շրջանակները և հարաբերակցությունը մեծապես կախված են երկրում ձևավորված \$ինանսական համակարգից: Առաջինի դեպքում \$ինանսական ռեսուրսների դերում հանդես են գալիս փոխառությունները, իսկ հիմնական դերը պատկանում է բանկերին: Երկրորդ դեպքում, երբ երկրում գործում է զարգացած \$ինանսական համակարգ, առավել կարևոր դեր են խաղում \$ինանսավորման այլ եղանակները (օրինակ` բաժնետոմսերի թողարկումը): Ըստ երկրան, \$ինանսավորումը դրամական միջոցների տրամադրումն է` առանց վերադարձելիության, իսկ վարկավորումը` վերադարձելիության պայմանով (որոշակի ժամկետից հետո): Ընդ որում երկուսն էլ ուղղված են տնտեսվարող սուբյեկտների ընդլայնված վերարտադրության գործընթացի ապահովմանը: \$ինանսավորման դեպքում տեղի է ունենում կապիտալի որոշակի բաժնեմասի վաճառք այլ անձի: Այս եղանակի առավելությունը կայանում է նրանում, որ ստացվող դրամական միջոցները մնում են ձեռնարկության տրամադրության տակ և դրանց վերադարձման հետ կապված պարտավորություններ չեն դրվում բաժնետերերի առջև:

ՓՄՁ ոլորտի վարկավորման համակարգն իրենից ներկայացնում է այնպիսի տարրերի համախումբ, ինչպիսիք են վարկային գործընթացի սուբյեկտները, վարկային գործառնությունների

կազմակերպատնտեսական տեխնոլոգիաները, վարկատուի և վարկառուի միջև փոխհարաբերությունների գործընթացն ապահովող համակարգի ենթակառուցվածքները և այլն: Վարկային գործընթացի սուբյեկտ են հանդիսանում վարկառուն՝ ՓՄՁ սուբյեկտը, և վարկատուն՝ այդ սուբյեկտների վարկավորումն իրականացնող, հիմնական ռիսկերը կրող և համապատասխան ծառայություններ մատուցող ֆինանսական ինստիտուտները: Վարկավորման դեպքում փոխառու միջոցների ներգրավումն իրականացվում է որոշակի ժամկետում տոկոսավճարի հետ միասին վերադարձնելու պայմանով: Այս եղանակի հիմնական առավելությունը կայանում է նրանում, որ ներգրավված միջոցները վերադարձնելուց հետո սեփականատերը պահպանում է իր վերահսկողությունը ձեռնարկության նկատմամբ և որևէ պարտավորություն չի ունենում փոխառուի առաջ: Յարկ է նշել, որ փոխառու միջոցների տրամադրումը հիմնականում իրականացվում է առևտրային բանկերի, ոչ բանկային ինստիտուտների և մասնագիտացված պետական կառույցների կողմից և հանդիսանում է ՓՄՁ սուբյեկտների ֆինանսական ռեսուրսների ձևավորման կարևոր արտաքին աղբյուրներից մեկը:

Ընդհանուր առմամբ, ՓՄՁ սուբյեկտների կենսագործունեության տարբեր փուլերի համար գոյություն ունեն ֆինանսական ռեսուրսների ձևավորման առավել նպատակահարմար մեթոդներ, որոնցից հիմնականներն են՝

- ինքնաֆինանսավորումը,
- վարկային ֆինանսավորումը,
- լիզինգը,
- պետական ֆինանսավորումը,
- վենչուրային ֆինանսավորումը,
- նախագծային ֆինանսավորումը,
- խառը ֆինանսավորումը⁶:

Ինքնաֆինանսավորման դեպքում ֆինանսական միջոցների նկատմամբ պահանջարկը բավարարվում է սեփական միջոցների հաշվին: Իհարկե, այս մեթոդն ունի մի շարք առավելություններ,

⁶ Широков Б., Финансовая среда предпринимательства: Учеб.-метод. пособие. Финансы и статистика. М., 2006 г., стр. 31-32.

սակայն այն հիմնականում կիրառելի է արդյունավետ կերպով գործող և ֆինանսատնտեսական կայունությամբ ունեցող տնտեսավարող սուբյեկտների համար: Այնուհասակ է, որ ՓՄՁ սուբյեկտների գերակշիռ մասը չունի ֆինանսավորման այս մեթոդի կիրառման հնարավորությունը մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ պահանջներով:

Ֆինանսավորման հաջորդ մեթոդը վարկավորումն է, որի դեպքում տնտեսական գործունեության ֆինանսական կարիքները բավարարվում են արտաքին միջոցների ներգրավման միջոցով: Հիմնական վարկավորողներ են հանդիսանում առևտրային բանկերը, որոնք վերադարձելիության, ժամկետայնության և վճարովիության սկզբունքներով ՓՄՁ սուբյեկտներին տրամադրում են վարկեր: Այս մեթոդի հիմնական թերությունը կայանում է վարկային միջոցների ձեռքբերման համար անհրաժեշտ գրավի առարկայով ապահովվածության ցածր մակարդակի մեջ: Ընդ որում վարկային ֆինանսավորումը հատկապես որոշիչ նշանակություն կարող է ունենալ ՓՄՁ սուբյեկտների ձևավորման փուլում, սակայն վարկավորման բարձր ռիսկայնությամբ, ինչպես նաև իրացվելի ակտիվների բացակայությամբ պայմանավորված շատ դեպքերում առևտրային բանկերը հրաժարվում են սկսնակ բիզնեսի ֆինանսավորումից:

Լիզինգը, որպես արդյունավետ ներդրումային գործունեության ապահովման եղանակ, իրենից ներկայացնում է ձեռնարկատիրական գործունեության տեսակ, ուղղված ժամանակավորապես ազատ կամ ներգրաված միջոցների ֆինանսավորմանը: Այս դեպքում վարձատուսն պարտավորվում է սեփականության իրավունքով ձեռք բերել գույք և այն տրամադրել վարձակալին՝ սահմանված վճարի դիմաց ձեռնարկատիրական նպատակներով օգտագործելու համար: Ֆինանսավորման այս մեթոդի առավելություններից են անհրաժեշտ ֆինանսական ֆոնդերի ձեռքբերման, խոշոր նախագծերի իրականացման հնարավորությունները, ինչպես նաև դրանց օգտագործման երկար ժամանակահատվածը: Սակայն այս մեթոդի գործնական կիրառման տեսանկյունից գոյություն ունեն որոշակի դժվարություններ,

քանի որ վարձակալը լիակատար նյութական պատասխանատվություն է կրում լիզինգի առարկա հանդիսացող գույքի համար, իսկ օգտագործման դիմաց վճարները երբեմն բավական բարձր են: ՓՄՁ սուբյեկտների տեսանկյունից ֆինանսավորման այս մեթոդն ունի երկակի նշանակություն: Եթե միջին ձեռնարկությունների համար այն բավականաչափ գրավիչ է, ապա փոքր և գերփոքր կազմակերպությունների դեպքում այնքան էլ մատչելի չէ հատկապես այդ սուբյեկտների գործունեության ֆինանսական ցածր թափանցիկության պատճառով: Սակայն միանշանակ է, որ ֆինանսավորման այս մեթոդը վարկավորման համեմատությամբ ունի որոշակի առավելություններ, առաջին հերթին՝ պայմանավորված այն հանգամանքով, որ չի պահանջում գրավի առարկա, ինչը փոքր ձեռնարկությունների հնարավորությունների սահմաններից դուրս է: Լիզինգային ընկերությունների համար ևս ֆինանսավորման այս մեթոդը նույնպես գրավիչ է, քանի որ գործում են նվազագույն ռիսկի պայմաններում:

ՓՄՁ ոլորտի պետական ֆինանսավորումը պետական աջակցության կարևոր ուղղություններից է և իրականացվում է ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի եղանակներով: Անշուշտ, հարկային արտոնությունների, բյուջետային երաշխիքների տրամադրումը, ինչպես նաև վարկային տոկոսադրույքի սուբսիդավորումը որոշակի ազդեցություն ունեն ֓ՄՁ ոլորտի ֆինանսական կայունացման հարցում, սակայն հատկապես պետական ֆինանսական միջոցների սահմանափակ հնարավորությունների պայմաններում բավարար չեն տվալ ոլորտի ֆինանսական կայացման համար: Ըստ եության, նշված գործոնները հանդես են գալիս որպես ֆինանսավորման այս եղանակի հիմնական թերություններ: Ընդ որում փոքր և միջին բիզնեսի ֆինանսավորման ոլորտում պետական աջակցությունն իրականացվում է տարբեր ձևերով՝ ինչպես այդ սուբյեկտների վարկավորմամբ զբաղվող մասնագիտացված բանկերի, այնպես էլ տարբեր սխեմաների միջոցով, որոնք հնարավորություն են տալիս նվազեցնել առևտրային բանկերի կողմից ՓՄՁ սուբյեկտներին տրամադրվող վարկերի գծով ռիսկերը:

Վենչուրային ֆինանսավորման համակարգն իրենից ներկայացնում է շուկայական մեխանիզմ, որը արդյունավետ կերպով նպաստում է հատկապես ինովացիոն բիզնեսի զարգացմանը: Ըստ էության, այն իրենից ներկայացնում է ռիսկային բիզնեսի ֆինանսավորում՝ հիմնականում բիզնես գաղափարների ուղղությամբ: Ֆինանսավորման այս մեթոդը հատկապես լայնորեն տարածված է ՓՄՁ սուբյեկտների շրջանում՝ հաշվի առնելով ինովացիոն լուծումներին նրանց հակվածությունը և ստեղծագործական ձիրքը: Վենչուրային ֆինանսավորումը հնարավորություն է տալիս ներգրավել անհրաժեշտ դրամական միջոցներ բարձր ռիսկայնություն ունեցող հեռանկարային նախագծերի իրականացման համար: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ֆինանսավորման այս մեթոդը չի պահանջում գրավի առարկայի առկայություն, ապա այն բավականաչափ գրավիչ է դառնում հատկապես ինովացիոն ոլորտում գործունեություն իրականացնող ՓՄՁ սուբյեկտների ֆինանսավորման տեսանկյունից:

Նախագծային ֆինանսավորման դեպքում ֆինանսական միջոցների վերադարձն իրականացվում է նախագծի իրականացման արդյունքում գոյացող դրամական հոսքերի հաշվին: Անշուշտ, այս մեթոդն առավելապես հիմնված է կանխատեսումների վրա և մեծապես կախված է նախագծի իրականացման արդյունավետությունից: Ֆինանսավորման այս մեթոդը հատկապես նախընտրելի է սկսնակ բիզնեսի (start up-երի) ֆինանսավորման համար և հնարավորություն է տալիս ներգրավել զգալի դրամական միջոցներ՝ համապատասխան ռիսկերը բաշխելով նախագծի մասնակիցների և ներդրողների միջև:

ՓՄՁ ոլորտի ֆինանսավորման մեթոդներից է խառը ֆինանսավորումը, որի դեպքում կիրառվում են վերը թվարկված մեթոդների տարբեր համադրությունները:

Ինչպես նկատեցինք, փոքր և միջին ձեռնարկությունների ֆինանսավորման աղբյուրներից յուրաքանչյուրն ունի իր առավելությունները և թերությունները և, դրանով պայմանավորված, առավել նախընտրելի է կիրառել գործունեության որոշակի փուլերում:

Աղյուսակ 2.

ՓՄՁ սուբյեկտների ֆինանսավորման աղբյուրների
դասակարգումը

Ֆինանսավորման ձևը	Ֆինանսավորման տվյալ ձևն առաջելի հաճախօգտագործող ձեռնարկությանը ունենք
Օվերդրաֆտ	Միկրոձեռնարկությանը ունենքի ստեղծման սկզբնական փուլում
Սեփականատիրոջ ազգականներից և ընկերներից փոխառությանը ունենք	
Սեփականատիրոջ անձնական խնայողությանը ունենք	
Մասնավոր ներդրողին ձեռնարկության կապիտալի որոշակի մասի փոխանցում	
Սեփականատիրոջ անունով վարկային գիծ	Գործող միկրոձեռնարկությանը ունենք
Ձեռնարկության անունից վարկային քարտեր	
Ձեռնարկության սեփականատիրոջ անունից վարկային քարտեր	
Չբաշխվող շահույթ	Գործող միկրոձեռնարկությանը ունենք (շրջանառու կապիտալի ֆինանսավորման նպատակով) Փոքր և միջին ձեռնարկությանը ունենք (կապիտալ ներդրումների ֆինանսավորման համար)

Աղյուսակ 2-ի շարունակություն

Բանկային փոխառությանը ունենք	Փոքր և միջին ձեռնարկությանը ունենք
Ձեռնարկության անունից վարկային գիծ	
Առևտրային վարկ	
Ֆակտորինգ	
Լիզինգ	
Վենչուրային ֆինանսավորում	
Մասնագիտացված պետական կառույցների վարկեր	
Մասնագիտացված բորսաներում արժեթղթերի թողարկում	

Ֆինանսավորման այս կամ այն ձևի ընտրությունը ձեռնարկության կողմից պայմանավորված է դրան հատուկ առավելություններով և թերություններով: Այնպիսի աղբյուրներ, ինչպիսիք են շահույթը և անձնական խնայողությունները, հնարավորություն են տալիս սեփականատիրոջը կախվածության մեջ չհայտնվել արտաքին ֆինանսավորողներից: Մինչդեռ որոշ ձևեր, ինչպիսիք են օվերդրաֆտը, վարկային քարտերը և վարկային գիծը, բավականաչափ թանկ գործիքներ են: Բանկային փոխառությունների ներգրավման դեպքում դրանց վերադարձից հետո սեփականատերը պահպանում է վերահսկողությունը ձեռնարկության նկատմամբ, ի տարբերություն վենչուրային ֆինանսավորման կամ բաժնետոմսերի թողարկման: Բացի այդ բաժնետիրացման հնարավորությունները սահմանափակ են՝ պայմանավորված մասնագիտացված բորսաների կողմից ձեռնարկություններին ներկայացվող խիստ պահանջներով: Յետևաբար կարելի է պնդել, որ ՓՄՁ սուբյեկտների ֆինանսավորման հիմնական աղբյուր հանդիսանում է վարկավորումը:

Ընդհանրապես փոքր և միջին ձեռնարկությունների տեղը և դերը ազգային տնտեսության մեջ լիարժեք չի լինի, եթե չդիտարկենք դրանց փոխհարբերությունները խոշոր բիզնեսի հետ: Վերջիններս կարող են պայմանավորված լինել տարբեր բնույթի առևտրային հետաքրքրություններով: Եթե համագործակցության հիմքում ընկած է կողմերից յուրաքանչյուրի սեփական գործունեության արդյունավետության բարձրացման՝ մասնավորապես ծախսերի նվազեցման կամ արտադրանքի իրացման հնարավորությունների ընդլայնման ձգտումը, ապա այն հանդես է գալիս բնականոն տնտեսական գործընկերության տեսքով և կարող է ունենալ հետևյալ դրսևորումները.

- Ենթակապալի պայմանագրի հիման վրա համագործակցություն և, որի արդյունքում փոքր ձեռնարկությունն ընդգրկվում է խոշոր ընկերության տեխնոլոգիական գործընթացի որոշակի փուլի մեջ՝ իրականացնելով կոնկրետ ապրանքների արտադրություն կամ ծառայությունների մատուցում,

- աուտսորինգ, երբ խոշոր ընկերության արտադրական շղթայի առանձին օղակներ տեղաբաշխվում են փոքր ձեռնարկություններում՝ մայր ընկերությունից կախվածության տարբերաստիճանով,
- ֆրանչայզիսկզբի համակարգ, որի դեպքում փոքր ձեռնարկությունը խոշոր ընկերությունից իրավունք է ստանում իրացնել կամ արտադրել ապրանքներ կամ ծառայություններ վերջինիս ապրանքային նշանի ներքո,
- փոքր ձեռնարկություններին գործունեության մեկնարկի փուլում օգնություն ցուցաբերելու համար ինկուբատորների ստեղծում և աջակցության այլ եղանակներ (լիզինգ, վենչուրային ֆինանսավորում և այլն):

Խոշոր ձեռնարկությունները ևս կարող են ուղղակի կամ անուղղակի եղանակներով մասնակցել ՓՄՁ սուբյեկտների ֆինանսավորմանը: Անուղղակի ֆինանսավորումն իրականացվում է ծառայությունների, սարքավորումների կամ տեխնոլոգիաների անվճար մատակարարումների միջոցով: Խոշոր ընկերությունները կարող են կազմակերպել նաև կրթական ծրագրեր ՓՄՁ սուբյեկտների աշխատակիցների համար, աջակցել արտադրանքի որակի նկատմամբ վերահսկողության մեխանիզմների ներդրմանը, կառավարչական փորձի փոխանակմանը, նոր շուկաների ուսումնասիրության ուղղությամբ աջակցության ցուցաբերմանը և այլն: Անշուշտ, նշված քայլերի իրականացման համար պահանջվող ծախսերը խոշոր ձեռնարկությունների համար մեծ նշանակություն ունեն, մինչդեռ ՓՄՁ սուբյեկտների համար դրանք էական են: Ուղղակի ֆինանսավորումն իրականացվում է այն դեպքերում, երբ խոշոր ձեռնարկության մոտ առաջանում է հետաքրքրվածություն և շահագրգռվածություն ՓՄՁ սուբյեկտների զարգացման հարցում, հատկապես խոշոր ընկերությունների արտադրական կենտրոնների տեղաբաշխման վայրերում: Նման փոխհարաբերությունները շատ հաճախ ունենում են երկարաժամկետ բնույթ և որոշակիորեն նպաստում են փոքր և միջին ձեռնարկությունների ֆինանսական կարիքների բավարարմանը:

Փոքր և միջին ձեռնարկությունների գործունեության ֆինանսական ապահովվածության հետ կապված խնդիրների լուծումը նախևառաջ պայմանավորված է տվյալ ոլորտին պատկանող սուբյեկտների համար ֆինանսավորման աղբյուրների մատչելիությամբ և հասանելիությամբ: Ընդ որում պետք է նկատի ունենալ, որ ՓՄՁ ոլորտի զարգացման բարձր տեմպերը և տնտեսական աճի ապահովման գործում ունեցած մեծ դերակատարությունը մեծապես պայմանավորված են այդ ձեռնարկությունների ֆինանսական ապահովվածության բարձր մակարդակով և ֆինանսավորման արդյունավետ մեխանիզմների ու գործիքների առկայությամբ: Այս տեսանկյունից, ֆինանսական ապահովվածությունը հանդես է գալիս որպես ՓՄՁ ոլորտի բնականոն գործունեության ապահովման և զարգացման հիմնական երաշխիք:

Ընդհանուր առմամբ փոքր և միջին բիզնեսի պետական աջակցության հիմնական նպատակներից և ուղղություններից մեկը տվյալ ոլորտի սուբյեկտների ֆինանսական ապահովվածության մակարդակի բարձրացումն է: Անշուշտ, տվյալ խնդրի լուծման հիմնական ուղիներից մեկը ֆինանսական և վարկային շուկաներում այդ սուբյեկտների համար գոյություն ունեցող հիմնախնդիրների լուծումն ու արգելքների վերացումն է: Դա ենթադրում է ֆինանսավարկային հատուկ մեխանիզմների մշակում և այդ նպատակով այնպիսի խնդիրների լուծում, ինչպիսիք են վարկային երաշխիքների համակարգի զարգացումը, ֆինանսական ինստիտուտների ենթակառուցվածքների ձևավորումը, տեղեկատվական աջակցության ցուցաբերումը և այլն:

Ըստ էության, ՓՄՁ ոլորտի ֆինանսավարկային աջակցությունը պետք է իրականացվի երկու հիմնական ուղղություններով: Առաջինը կապված է ոլորտի սուբյեկտներին ուղղակի ֆինանսական աջակցության ցուցաբերման հետ՝ սուբսիդիաների, դոտացիաների, վարկերի, վարկային երաշխիքների տրամադրման, համաֆինանսավորման և այլ գործիքների կիրառման միջոցով: Երկրորդ ուղղությունն անուղղակի ֆինանսական աջակցությունն է՝ ներդրումային ակտիվության խթանման միջոցով, որը ենթադրում

Ե հարկման պարզեցված ռեժիմների կիրառում, լիզինգային մեխանիզմների խթանում, արագացված ամորտիզացիայի կիրառում և այլն:

Եթե ընդհանրացնենք փոքր և միջին բիզնեսի զարգացմանը խանգարող պատճառներն ու դրանց հետևանքները, ապա այն կարելի է խոշորացված կերպով ներկայացնել հետևյալ խմբերի տեսքով:

1. Մրցակցային միջավայրի բացակայությունը, ինչի հետևանքով փոքր և միջին բիզնեսը գործում է խոշոր բիզնեսի, ինչպես նաև ոչ արդար մրցակցություն վարող սուբյեկտների հետ փոխհարաբերությունների պայմաններում: Նման իրավիճակի փոփոխությունը նախևառաջ ենթադրում է պետական քաղաքականության առանցքային ուղղությունների՝ հատկապես ազատ և արդար մրցակցության հաստատման ուղղությամբ գործնական քայլերի իրականացում, ֆինանսավորման նոր մեխանիզմների ներդրում:

2. Փոքր և միջին բիզնեսի վրա արտաքին բացասական գործոնների ազդեցությունը, որի հետևանք է հանդիսանում վարկային ռեսուրսների մատչելիության անհավասար պայմանները և բարձր տոկոսադրույքները: Խնդրի լուծումը ենթադրում է շուկայական ենթակառուցվածքների զարգացում, դրամավարկային հիմնավորված քաղաքականության իրականացում, վարկային կազմակերպությունների գործունեության խթանում և փոքր ու միջին բիզնեսի համար վարկային տոկոսադրույքների նվազեցմանն ուղղված քայլերի իրականացում:

3. ՓՄՁ սուբյեկտների համար բանկային վարկերի սահմանափակ հասանելիությունը, երկարաժամկետ վարկային ռեսուրսների բացակայությունը և վարկավորման ռիսկայնության բարձր մակարդակը: Նշված խնդիրներն ակնհայտորեն էական ազդեցություն ունեն փոքր և միջին ձեռնարկությունների զարգացման համար անհրաժեշտ ֆինանսական բազայի ձևավորման գործում: Դրանց լուծմանը կարող է նպաստել մասնավոր և պետական երաշխիքային ֆոնդերի, համաֆինանսավորման համակարգի, ինչպես նաև տոկոսադրույքի փոխատուցում կամ պետության ու վարկային

կազմակերպությունների միջև ռիսկերը կհստղ մեխանիզմների ստեղծումը:

Այս ափսոսվ՝ ՓՄՁ ոլորտի զարգացման հիմնական խոչընդոտներ են հանդիսանում վարկային ապահովվածության բացակայությունը, երկարաժամկետ վարկային ռեսուրսների բացակայությունը, վարկային միջոցների «թանկությունը», միկրոֆինանսավորման ինստիտուտների թերզարգացվածությունը կամ դրանց բացակայությունը և այլն: Չնայած գոյություն ունեցող ռիսկերին և այլ բացասական երևույթներին՝ ՓՄՁ ոլորտն ունի զգալի ներուժ երկրի քաղաքական և տնտեսական զարգացման գործում ծանրակշիռ մասնակցություն ապահովելու հարցում: Նշված խնդրի արդյունավետ լուծման համար գոյություն ունեցող հիմնախնդիրների շարքում հատկապես առանձնանում են տվյալ ոլորտի սուբյեկտների ֆինանսական ապահովվածության և, մասնավորապես, վարկավորման հետ կապված հիմնախնդիրները, որոնց լուծմամբ է պայմանավորված ոչ միայն տվյալ ոլորտի հետագա զարգացումը, այլ նաև շուկայական բարեփոխումների արդյունավետությունն ամբողջությամբ: Այդ գործոնների բացասական ազդեցության չեզոքացումը պահանջում է երկրում փոքր և միջին ձեռնարկությունների գործունեության միջավայրի բարելավում, հարկային ճնշման թուլացում՝ հատկապես սկսնակ բիզնեսի համար, երաշխիքների արդյունավետ համակարգի ստեղծում, որը հնարավորություն կտա բանկերին ակտիվորեն ներգրավել ՓՄՁ ոլորտի վարկավորման գործընթացում, միկրովարկավորման ծավալների ավելացում, ՓՄՁ սուբյեկտների գործունեության առանձնահատկությունները հաշվի առնող վարկունակության գնահատման ժամանակակից տեխնոլոգիաների ստեղծում և վարկավորման գործընթացի օպտիմալացում, ՓՄՁ ոլորտի վարկավորման միջազգային փորձի կիրառում և այլն: Նշված ուղղությունների շարքում հատկապես ուշագրավ է վերջինը՝ հաշվի առնելով տարբեր երկրներում ՓՄՁ վարկավորման գործընթացում արձանագրված հաջողությունները և հանրապետությունում դրա տեղայնացման հնարավորություններն ու անհրաժեշտությունը: Չնայած այն հանգամանքին, որ

գոյ ու թյ ու ն ու ն են ՓՄՁ ու ռոտի ֆինանսավորման տարբեր մեթոդներ և եղանակներ՝ այդուհանդերձ, դրանցից շատերը ներկայումս հասանելի չեն Հայաստանի Հանրապետության ու ն ու մ գործող փոքր և միջին ձեռնարկություններին, ինչի հետևանքով հատկապես տնտեսական գործունեության կազմակերպման ժամանակակից փուլում ֆինանսական ռեսուրսների ձևավորման հիմնական միջոց է հանդես գալիս վարկավորումը: Այդ իսկ պատճառով մեր ու սու մ նասիրություն շրջանակներում հիմնականում կդիտարկենք ՓՄՁ սուբյեկտների բանկային վարկավորման հիմնախնդիրները, ինչին էլ նվիրված է աշխատանքի հաջորդ բաժինը:

1.2. ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԲԻԶՆԵՍԻ ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԱՌԱՆՁՆԱՅՍԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Փոքր և միջին ձեռնարկատիրություն զարգացումը, ինչպես նշեցինք աշխատանքի նախորդ բաժնում, զգալիորեն պայմանավորված է տվյալ ոլորտի սուբյեկտների ֆինանսական ապահովվածության մակարդակով, որում առանցքային դեր ու ն են վարկային միջոցները: ՓՄՁ սուբյեկտներն իրենց տնտեսական գործունեության ընթացքում պարբերաբար ու ն են ու մ են ֆինանսական փոխառությունների կարիք և առնչվում բանկերի վարկային գործունեությանը: Այս առումով առևտրային բանկերի և ՓՄՁ սուբյեկտների փոխհարաբերությունների արդյունավետ կազմակերպումը և դինամիկ զարգացումը կարևոր նշանակություն ու ն են վերջիններիս ֆինանսական ռեսուրսներով ապահովելու գործում: Միևնույն ժամանակ, գոյություն ու ն են փոքր և միջին բիզնեսի վարկավորման մի շարք խոչընդոտներ ու արգելքներ, որոնք կապված են տվյալ սուբյեկտների և առևտրային բանկերի միջև ֆինանսավարկային հարաբերությունների առանձնահատկություններով: Այս տեսանկյունից, փոքր ու միջին բիզնեսի զարգացման գործում վարկավորման դերի ու սու մ նասիրությունը չափազանց կարևոր է այդ գործընթացի արդյունավետ կազմակերպման համար:

Մասնագիտական շրջանակներում վարկի և վարկավորման տնտեսական հիմքերի բովանդակության և էության վերաբերյալ միասնական տեսակետ գոյություն չունի, ինչը, ըստ էության, բացատրվում է տվյալ երևույթի բազմաբովանդակությամբ: Յ. Ու. Սոտան⁷, Գ. Պոլյակ⁸, Ա. Նեշիտոյ⁹, Լ. Դրոբոզինան¹⁰ վարկը դիտարկում են որպես պարտքով տրամադրվող ասրանքներ կամ դրամական միջոցներ: Ըստ էության, տարբեր հեղինակների կողմից վարկին տրվող սահմանումների ընդհանրացման արդյունքում տվյալ տնտեսագիտական կատեգորիան կարելի է ներկայացնել երեք հիմնական ասպեկտներով:

1. Որպես իրավական հարաբերություններ.
 - Վարկը դիտարկվում է որպես տնտեսական գործարք, որի արդյունքում մեկ գործընկերը մյուսին ժամկետայնության, վճարովիության և վերադարձելիության սկզբունքով տրամադրում է դրամական միջոցներ կամ գույք¹¹:
 - Վարկը ներկայացվում է որպես տնտեսական գործարքի տարատեսակ, իրավաբանական կամ ֆիզիկական անձանց միջև փոխառության մասին պայմանագիր: Կողմերից մեկը (վարկատուն) որոշակի ժամկետով տրամադրում է մյուսին (վարկառուին) դրամական միջոցներ կամ գույք համապատասխան արժեքով վերադարձման պայմանով: Ժամկետայնությունը, վերադարձելիությունը և վճարովիությունը վարկի սկզբունքային հատկանիշներն են¹²:
2. Որպես տնտեսական կամ հասարակական հարաբերություններ.
 - Վարկը դիտարկվում է որպես տնտեսական հարաբերություն, որն ունի փոխառության ձև և կապված է վարկատուի և վարկառուի միջև ասրանքային կամ դրամական տեսքով արժեքի

⁷ Хесус Уэрта Де Сота, Деньги, банковский кредит и экономические циклы. Челябинск: Социум, 2008 г., стр. 265.
⁸ Поляк Г., Финансы. Денежное обращение. Кредит. Юнити-Дана. М., 2011 г., стр. 551.
⁹ Нешитой А., Инвестиции. М.: Дашков и К. 2007 г., стр. 129.
¹⁰ Дробозина Л., Финансы: учебник для вузов. ЮНИТИ. М., 2001 г., стр. 206.
¹¹ Поляк Г., Финансы. Денежное обращение. Кредит. Юнити-Дана. М., 2011 г., стр. 218.
¹² Сенчагов В., Архипов А., Финансы, денежное обращение и кредит. ИНФРА-М. М., 2007 г., стр. 289.

շարժի հետ՝ վերադարձել իր լոթյան, ժամկետային լոթյան և վճարովի լոթյան պայմաններով¹³:

- Վարկը ներկայացվում է որպես հասարակական հարաբերությունների որոշակի ձև՝ կապված դրամական տեսքով արժեքի շարժի հետ¹⁴:

Ս. Սոլոմինի կարծիքով բանկային վարկը արժեքի շարժն է բանկից վարկառուին, որը սահմանված ժամանակահատվածում ենթակա է վերադարձման որոշակի որոշակի ավելացված չափով¹⁵: Իսկ Ա. Շևչուկը բանկային վարկը մեկնաբանում է որպես ֆինանսական ինստիտուտների կողմից տնտեսվարող սուբյեկտներին դրամական տեսքով միջոցների տրամադրում¹⁶: Օ. Լավրովի կարծիքով, վարկային հարաբերությունների ձևավորման և զարգացման տնտեսական հիմքը կապիտալի շրջանառությունն ու պտույտն է, որը բնութագրվում է անընդհատությամբ և միաժամանակ տարբեր տատանումներով՝ կախված ռեսուրսների նկատմամբ պահանջարկից և դրա բավարարման աղբյուրներից¹⁷:

Հայտնի է, որ կապիտալի շրջանառությունը հավասարաչափ է՝ պայմանավորված արտադրական գործընթացի առանձնահատկություններով, տնտեսության վրասեզոնային տարբեր գործոնների ազդեցությամբ և այլն: Նման զարգացումների արդյունքում տնտեսական հարաբերությունների առանձին մասնակիցների մոտ առաջանում են ժամանակավորապես ազատ դրամական միջոցներ, մինչդեռ մյուսների մոտ նկատվում է դրանց նկատմամբ պահանջարկ: Ըստ էության, հենց այդ անհամապատասխանության վերացմանն են ուղղված վարկային հարաբերությունները: Մ. Լիշինսկին և Ի. Մասլովան վարկային հարաբերությունների տնտեսական հիմքերի բովանդակության

¹³ Романовский М., Финансы, денежное обращение и кредит. Дашков и К. М., 2006 г., стр. 481.

¹⁴ Большой экономический словарь. А. Азрилиян, Институт новой экономики. М., 2010 г., стр. 458.

¹⁵ Соломин С., Банковский кредит: проблемы теории и практики. Юстицинформ, 2009 г., стр. 29.

¹⁶ Шевчук А., Финансы и Кредит. РИОР. М., 2006 г., стр. 321.

¹⁷ Деньги, кредит, банки: учебник под ред. Лаврушина О., Финансы и статистика, М., 2007 г., стр. 162-163.

բնութագրման ժամանակ հիմնական գործոն են դիտարկում վերադարձելիությունը, որն անկախ կապիտալի շարժի փուլից հանդես է գալիս որպես վարկի համընդհանուր հատկանիշ¹⁸: Վարկային միջոցների վերադարձելիության սկզբունքով տրամադրումը հանդիսանում է վարկավորման կարևոր ասպեկտներից մեկը և բնութագրում է այդ ուղղությամբ ծագող տնտեսական հարաբերությունները: Վ. Կոլեսնիկովան բանկային վարկավորման համակարգը բնորոշում է որպես տարրերի համախումբ, որոնք պայմանավորում են որոշակի սկզբունքներին համապատասխան վարկային գործընթացի կազմակերպումը և կարգավորումը¹⁹: Նման տեսակետի կողմնակից է նաև Լ. Պոլիշուկը, ով վարկավորման համակարգը բնորոշում է որպես որոշակի սկզբունքների վրա հիմնված վարկավորման մեթոդների ու եղանակների համախումբ²⁰: Օ. Լավրուշինը գտնում է, որ վարկավորման համակարգը տարրերի համախումբ է, որոնք ապահովում են փոխառու ռեսուրսների ռացիոնալ օգտագործումը և իր մեջ ընգրկում է վարկավորման մեթոդները, օբյեկտները, սկզբունքները, փոխառությունների տրամադրման և վերադարձման մեխանիզմը, ինչպես նաև բանկային վերահսկողությունը²¹: Հատկանշական է, որ որոշ հեղինակներ բանկային վարկավորումը դիտարկում են որպես ձեռնարկատիրական գործունեության ապահովման ձևերից մեկը²²:

Ընդհանուր առմամբ վարկն ապահովում է տնտեսության բնականոն գործունեությունը, քանի որ շատ տնտեսավարող սուբյեկտների համար սեփական ռեսուրսները բավարար չեն տնտեսական գործունեության կազմակերպման ու իրականացման համար, մինչդեռ մյուսների մոտ գոյություն ունեն ազատ դրամական միջոցներ՝ ենթակա օգտագործման նպատակով տրամադրման: Վարկը, որպես տնտեսական կատեգորիա, նեղ իմաստով

¹⁸ Краткосрочное кредитование сельскохозяйственных предприятий: Учеб. пособие для студентов вузов. М. Лишанский, И. Маслова. ЮНИТИ. М., 2000 г., стр. 15.

¹⁹ Банковское дело. Учебник для студентов вузов. Под ред. В. Колесникова, Л. Кроливецкой. Финансы и статистика. М., 1998 г., стр. 221.


²⁰ Полищук Л., Деятельность банковских кредитных организаций. Финансовая академия при Правительстве РФ. М., 1998 г., стр. 216.

²¹ Банковское дело: современная система кредитования, учеб пособие. Под ред О. Лаврушина, О. Афанасьева, С. Корниенко. КНОРУС. М., 2007 г., стр. 13.

²² Лапуста М., Предпринимательство: учебник. ИНФРА-М. М., 2008 г., стр. 157.

իրենից ներկայացնում է ֆինանսական ռեսուրսներ, որոնք դրամական տեսքով և ժամկետայնությամբ, վերադարձելիության ու վճարովիության պայմաններով տրամադրվում են օգտագործման:

Ընդհանուր առմամբ, վարկի տրամադրման և վարկավորման պայմանների վերաբերյալ կառավարչական որոշումների կայացման գործընթացը սխեմատիկորեն կարելի է ներկայացնել հետևյալ տեսքով:



Գծապատկեր 1. Վարկավորման վերաբերյալ որոշումների կայացման գործընթացը

Ըստ էության, ֆինանսական միջոցների նկատմամբ պահանջարկն առավել ակնհայտ է փոքր և միջին ձեռնարկությունների դեպքում, քանի որ շատ դեպքերում վարկային միջոցներն են ապահովում այդ սուբյեկտների գործունեության արտաքին ֆինանսավորման գերակշիռ մասը²³: Վերջիններիս ֆինանսավարկային աջակցության շրջանակներում պետության և տարբեր կառույցների կողմից կիրառվում են վարկավորման տարբեր տեսակներ, որոնց շարքում բանկային վարկավորումն ունի իր ուրույն և կարևոր տեղը:

Միևնույն ժամանակ տվյալ սեկտորի վարկավորումը որոշակիորեն պրոբլեմատիկ է՝ պայմանավորված հետևյալ խումբ առանձնահատկություններով: Մասնավորապես, փոքր և միջին ձեռնարկությունների հետ աշխատանքի ընթացքում առաջացող ծախսերն ավելի մեծ են, քան խոշոր կորպորատիվ հաճախորդների դեպքում: Դրա հետ կապված որակյալ և բարձր վարձատրվող մասնագետների անհրաժեշտությունն է առաջանում համեմատաբար փոքր վարկային պորտֆելի պայմաններում: Արդյունքում փոքր և միջին ձեռնարկությունների վարկավորումը բանկի համար ավելի ծախատար է դառնում: Մյուս առանձնահատկությունն է կապված է փոխառուի ֆինանսական վիճակի վելոցություն հետ, որը հիմնվում է հաշվապահական հաշվետվությունների տվյալների վրա: Փոքր և միջին ձեռնարկությունների դեպքում դրանք հիմնականում օբյեկտիվ կերպով չեն արտացոլում ընկերության ֆինանսական վիճակը: Հատկապես հարկման արտոնյալ ռեժիմներից օգտվելու նպատակով ՓՄՁ սուբյեկտների գերակշիռ մասն արհեստականորեն նվազեցնում է շրջանառության ծավալները, ինչն էլ իր անդրադարձն է ունենում բանկի կողմից հաշվապահական տվյալների հիման վրա ընկերության ֆինանսական վիճակի գնահատականի օբյեկտիվության վրա:

Փոքր և միջին բիզնեսի վարկավորման տնտեսական հիմքերի ուսումնասիրության ժամանակ կարևոր նշանակություն ունի տվյալ ոլորտին պատկանող սուբյեկտների վարկային պահանջմունքների առանձնահատկությունների վերլուծությունը,

²³ Смирнова Н., Специфика кредитования малого бизнеса в России в начале XXI века. Научный диалог. Экономика. Право. 2014 г., № 7 (31), стр. 73–83.

քանի որ դրանք զգալիորեն պայմանավորում են նրանց վարքագիծը վարկային շուկայում: Որպես այդպիսիք կարելի է առանձնացնել հետևյալները:

1. Փոքր և միջին ձեռնարկությունները, որպես կանոն, հիմնականում չունեն սեփական հիմնական ֆոնդեր, իսկ գործողների գերակշիռ մասը ձեռք է բերված վարձակալության հիմունքներով: Այսինքն՝ նման իրավիճակում այդ սուբյեկտները զրկված են վարկավորման համար գրավի առարկա ներկայացնելու հնարավորությունից, դրանով է պայմանավորված, որ նրանց համար առավել հասանելի է դառնում կարճաժամկետ վարկավորումը:

2. ՓՄՁ սուբյեկտների գործունեության փոքր մասշտաբները, ակտիվների և կապիտալի սահմանափակ ծավալը ստեղծում են համեմատաբար ոչ մեծ գումարների չափով փոխառությունների անհրաժեշտություն:

3. Հաշվապահական հաշվառման և հաշվետվությունների պարզեցված կերպով վարման հետ կապված ոչ բավարար տեղեկատվական ապահովվածությունը հնարավորություն չի տալիս ՓՄՁ սուբյեկտներին օբյեկտիվ կերպով գնահատել սեփական ֆինանսական վիճակը և հավաստի ֆինանսական տեղեկատվություն տրամադրել վարկատու կազմակերպություններին, ինչը նվազեցնում է վարկի ստացման հավանականությունը:

4. Մեկնարկային կապիտալի և իրացվելի ակտիվների ոչ բավարար մակարդակը ՓՄՁ ոլորտը դարձնում են ֆինանսավորման տեսանկյունից բարձր ռիսկային:

5. Կանխիկ դրամով շրջանառության մեծ ծավալները, շահույթաբերության մակարդակի գնահատման բարդությունները ստիպում են բանկերին սահմանել տրամադրված վարկերի մարման խիստ գրաֆիկներ:

Հարկ է նշել, որ բանկային համակարգի համար փոքր և միջին բիզնեսի վարկավորումն այլ սուբյեկտների համեմատությամբ հանդիսանում է առավել դինամիկ և բարդ գործընթաց: Միաժամանակ, տնտեսության տվյալ հատվածի նկատմամբ առևտրային բանկերն ունեն առանձնահատուկ հետաքրքրվածություն՝ պայմանավորված հետևյալ պատճառներով:

Առաջին՝ խոշոր կորպորատիվ հաճախորդների վարկավորման շուկան, որպես կանոն, հազեցած է առաջարկով և մրցակցության մակարդակը խիստ բարձր է: Հաճախորդների համար պայքարը շատ դեպքերում հանգեցնում է նրան, որ ստացված և վճարված տոկոսների տարբերությունը (մարժան) զգալիորեն նվազում է և վարկավորման գծով բանկի շահույթաբերությունը կրճատվում է: Մինչդեռ փոքր և միջին բիզնեսի վարկավորումն ապահովում է միջոցների ներգրավման ծախսերի և վարկի տեսքով դրանց տեղաբաշխումից ստացվող եկամուտների միջև առավելագույն տարբերություն, հետևաբար բարձր շահույթաբերություն:

Երկրորդ՝ վարկային ռիսկի նվազեցման առավել պարզ եղանակներից մեկը, անշուշտ, վարկային պրոտֆեյթի դիվերսիֆիկացումն է: Վարկային փոքր միջոցներով փոխառուների մեծ քանակը բանկին հնարավորություն է տալիս կախված չլինել մի քանի խոշոր հաճախորդներից և նրանց ֆինանսական վիճակից:

Երրորդ՝ փոքր և միջին բիզնեսի համար ձեռնտու գործոն է հանդիսանում նրա զբաղեցրած դիրքը: Գտնվելով մանրածախ և կորպորատիվ սեգմենտների միջև՝ այն տալիս է մի շարք առավելություններ: Վարկավորման տեսանկյունից առաջինն ապահովում է մասսայականություն, իսկ երկրորդը՝ փոխառությունների մեծ ծավալ: Մյուս կողմից հաճախորդից եկամտաբերությունը չի սահմանափակվում միայն վարկի տոկոսային եկամուտներով: Փոքր և միջին բիզնեսը կարող է օգտվել բանկային բոլոր՝ ինչպես կորպորատիվ, այնպես էլ ֆիզիկական անձ հանդիսացող հաճախորդների համար նախատեսված ծառայություններից՝ ստեղծելով լրացուցիչ եկամուտներ բանկերի համար:

Նշված առավելություններով հանդերձ առևտրային բանկերը շահագրգռված չեն ՓՄՁ ոլորտի վարկավորման հարցում հետևյալ պատճառներով:

Առաջին՝ բանկերի համար փոքր ծավալով վարկային միջոցների ակնկալիք ունեցող ՓՄՁ սուբյեկտների հետ աշխատանքն արդյունավետ չէ: Փոքր և միջին ձեռնարկությունների վարկավորման մշակված արդյունավետ տեխնոլոգիաների

բացակայության հետևանքով բանկերի համար առավել հեշտ է ձևակերպել մեկ վարկային գործարք խոշոր գումարի չափով, քան հակառակը: Բացի այդ փոխառուների վարկունակության գնահատման մեթոդաբանությունը կիրառման տեսանկյունից զգալի բարդություններ է պարունակում ՓՄՁ սուբյեկտների հետ կապված, ինչն իր հերթին մեծացնում է տվյալ ոլորտի վարկավորման ռիսկերը:

Երկրորդ՝ չնայած ավանդաբար ՓՄՁ ոլորտի բանկային վարկավորումը համարվում է ռիսկային, սակայն ոլորտին պատկանող սուբյեկտներն ունեն որոշակի առանձնահատկություններ՝ պայմանավորելով վարկավորման տեսանկյունից ռիսկայնություն տարբեր աստիճաններ: Ըստ էության, ՓՄՁ ոլորտը պայմանականորեն կարելի է բաժանել գործող և սկսնակ բիզնեսների, որոնցից վերջինը վարկավորման տեսանկյունից բավականաչափ ռիսկային է: Ինչպես ցույց է տալիս վիճակագրությունը, կայուն կերպով գործող ՓՄՁ սուբյեկտները բավականաչափ պարտաճանաչ և կարգապահ փոխառուներ են, որոնց պարագայում վարկի հետաձգումը կամ չվճարումը կազմում է ընդամենը 1-2 տոկոս²⁴: Հետևաբար կարելի է ասել, որ հաջողությամբ գործող ՓՄՁ սուբյեկտների պարագայում ռիսկ գոյություն ունի, սակայն առավել փոքր չափերով:


Երրորդ՝ շատ դեպքերում վարկի ստացման նախապայմաններից է հեռանկարային ներդրումային նախագծի կամ բիզնես պլանի առկայությունը: Ընդ որում որոշ առևտրային բանկերում այն հանդիսանում է պարտադիր պայման վարկի տրամադրման համար: Մինչդեռ նման փաստաթղթերի մշակումը պահանջում է բարձր որակավորում ունեցող մասնագետների կամ ընկերությունների ներգրավում, ինչը ՓՄՁ սուբյեկտների հնարավորություններից դուրս է: Վերջիններս չունեն բավարար կադրային ռեսուրսներ գրագետ և հիմնավորված ծրագրեր մշակելու համար, իսկ ֆինանսական հնարավորությունները թույլ չեն տալիս դրսից համապատասխան մասնագետներ ներգրավել: Ակնհայտ է, որ դա

²⁴ Боброва Е., Каганов В., Устивицкая А., Заведеева В., Становление малого бизнеса. Национальное содружество бизнес-инкубаторов. М., 2003 г., стр. 81.

Էականորեն նվազեցնում է առևտրային բանկի կողմից ՓՄՁ սուբյեկտի վարկավորման հավանականությունը:

Չորրորդ՝ ՓՄՁ սուբյեկտների ակտիվների կառուցվածքում գրավի պոտենցիալ առարկա հանդիսացող անշարժ գույքի մասնաբաժինը չափազանց փոքր է, ինչը վարկավորումից հրաժարվելու պատճառ է բանկերի համար: Բացի այդ գրավադրված գույքի իրացումը, տարբեր օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով պայմանավորված, բավականաչափ բարդ է ու դժվար: Նման պայմաններում բանկերի համար առավել ձեռնտու է դառնում ունենալ քիչ թվով խոշոր տնտեսվարող սուբյեկտ հանդիսացող փոխառուներ, քան մեծաքանակ ՓՄՁ սուբյեկտներ:

Ընդհանուր առմամբ, փոքր և միջին ձեռնարկությունների վարկավորման ոլորտում գոյություն ունեցող հիմնախնդիրները կարելի է բաժանել երկու խմբի. առաջինը կապված է ՓՄՁ սուբյեկտներին բնորոշ ակտիվների յուրահատուկ կառուցվածքի, իսկ երկրորդը՝ բանկային համակարգի զարգացման աստիճանի հետ:



ՓՄՁ սուբյեկտների վարկավորման հիմնախնդիրները

Այսպիսով՝ չնայած փոքր և միջին ձեռնարկությունների ֆինանսավորման աղբյուրների բազմազանությունը՝ հանրապետությունում դրանցից առավելապես կիրառելի է բանկային վարկավորումը: Միաժամանակ փոքր և միջին ձեռնարկությունները բանկերի կողմից վարկավորման տեսանկյունից համարվում են ռիսկայնության բարձր մակարդակ ունեցող խումբ, ինչը զգալիորեն նվազեցնում է բանկային վարկի նկատմամբ հասանելիությունը: Դա իր հերթին հանգեցնում է կա՛մ վարկավորումից հրաժարմանը, կա՛մ դրա արժեքի բարձրացմանը: Նման իրավիճակում կարևոր նշանակություն է ստանում փոքր և միջին ձեռնարկությունների վարկավորման հետ կապված ռիսկերի

բացահայտումը և դրանց արդյունավետ կառավարումը, ինչի
նուսումնասիրությունն է նվիրված ատենախոսության հաջորդ բաժինը:

1.3. ՓՈՔԻ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿՈՒ ԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ՌԻՍԿԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

Բանկային գործունեության կարևոր ուղղություններինց մեկն
է վարկավորումը, որը տնտեսության զարգացման ժամանակակից
փուլում բանկերի համար առավել շահույթաբեր է, սակայն
միաժամանակ բավականաչափ ռիսկային գործունեությունն: Այս
առումով առևտրային բանկերի արդյունավետ գործունեության
կարևոր նախապայմաններից մեկն է վարկային ռիսկերի
կառավարումը, ինչը ենթադրում է տվյալ տնտեսագիտական
կատեգորիայի տեսական հիմքերի և սոցիալ-տնտեսական
բովանդակության համակողմանի ու ումնասիրությունն:

Մասնագիտական գրականության մեջ միասնական տեսակետ
գոյությունն չունի «ռիսկ», «բանկային ռիսկ» և «վարկային ռիսկ»
հասկացությունների վերաբերյալ: Մասնավորապես՝ Ի. Բեռնարը և Ժ.
Կոլլին ռիսկի տակ հասկանում են անորոշություն տարր, որը կարող
է անդրադառնալ տնտեսավարող սուբյեկտի գործունեության կամ
որոշակի գործառնության իրականացման վրա²⁵: Ընդհանուր առմամբ
այն կապված է ձեռնարկատիրական գործունեությունից ակնկալվող
շահույթի չափի հետ. որպես կանոն, մեծ ռիսկերը կապված են խոշոր
շահույթի ստացման հետ և հակառակը: Մասնագիտական
շրջանակներում ռիսկի տնտեսական բովանդակության
վերլուծության ժամանակ հիմնականում առանձնացվում են տվյալ
կատեգորիայի հետևյալ բնութագրիչները.

- ռիսկը հատուկ է տնտեսական գործունեության
յուրաքանչյուր տեսակի²⁶,

²⁵ Бернар И. Колли Жан-Клод, Толковый экономический и финансовый словарь. М., 1994 г., стр. 500.

²⁶ Управление деятельностью коммерческого банка. Банковский менеджмент. Под ред. Лаврушина О. М.: 2002 г., стр. 420. Клейнер Г., Тамбовцев В., Качалов Р., Предприятие в нестабильной экономической среде: риски, стратегия, безопасность. М., 1997 г., стр. 65.

- ռիսկը հանդիսանում է այս կամ այն գործունեության ելքի անորոշության հետևանք²⁷,
- շահույթը հանդիսանում է ռիսկի դիմելու համարյուրատեսակ «պարգև»²⁸,
- ռիսկը կապված է ինչպես հնարավոր կորուստների, այնպես էլ ակնկալվող արդյունքների հետ²⁹:

Ինչ վերաբերում է բանկային ռիսկին, ապագրականության մեջ այն մեկնաբանվում է որպես բանկային գործունեության ընթացքում ֆինանսական կորուստների կամ անվճարունակության հավանականություն³⁰: Սակայն պետք է նկատի ունենալ, որ ռիսկը կապված է ոչ միայն հնարավոր կորուստների, այլ նաև հաջողությունների հետ՝ այդ թվում նաև բանկային գործունեության ընթացքում: Ըստ էության, բանկային ռիսկի կարևոր տեսակներից է վարկային ռիսկը, որը մեկնաբանվում է որպես փոխառության չվերադարձման հավանականություն³¹: Այն ներկայացվում է նաև որպես վարկի մայր գումարի և տոկոսավճարների չմարման հավանականություն³²: Իսկ Գ. Պանովան վարկային ռիսկի տակ նկատի է առնում վարկառուի կողմից վարկային պայմանագրով նախատեսած պայմանների չկատարման հավանականությունը³³: Ինչպես նկատում ենք բերված սահմանումներից, դրանք ունեն որոշակի ընդհանրությունն այն առումով, որ վարկային ռիսկը դիտարկվում է որպես պարտավորությունների չկատարման հավանականություն:

Հարկ է նշել, որ ռիսկայնության տեսանկյունից բավականաչափ բարձր աստիճան և որոշակի առանձնահատկություններ ունի ՓՄՁ ոլորտի բանկային վարկավորումը: Անշուշտ, առևտրային բանկերի կողմից ՓՄՁ սուբյեկտների վարկավորման ռիսկայնությունը նախևառաջ

²⁷ Бернар И. Колли Жан-Клод, Толковый экономический и финансовый словарь. М., 1994 г., стр. 500.

²⁸ Вулфел Чарльз Дж. Энциклопедия банковского дела и финансов. 2000 г., стр. 1102.

²⁹ Альгин А., Грани экономического риска. 1991 г., стр. 7.

³⁰ Российская банковская энциклопедия. Под ред. Лаврушина О., 1995 г., стр. 360.

³¹ Синки Джозеф Ф., Управление финансами в коммерческих банках. М., 1994 г., стр. 665.

³² Российская банковская энциклопедия. Под ред. Лаврушина О., 1995 г., стр. 219.


³³ Панова Г., Кредитная политика коммерческого банка. 1997 г., стр. 286.

պայմանավորված է տրամադրված ֆինանսական միջոցների հետ չվերադարձման բարձր հավանականությամբ: Վերջինս իր հերթին կապված է այն հանգամանքի հետ, որ փոքր և միջին ձեռնարկությունները, ի տարբերություն խոշորների, խիստ զգայուն են շուկայական կոնյուկտուրայի տատանումների նկատմամբ և խոցելի են շուկայում տեղի ունեցող բացասական երևույթների հանդեպ: Բացի այդ, նշված սուբյեկտների կախվածությունը բավականաչափ մեծ է շուկայի այլ գործակալներից, ինչն իր հերթին հանդես է գալիս որպես բանկային վարկերի չվերադարձման հավանականությունը մեծացնող գործոն: Վարկային միջոցներ ձեռք բերելու փոքր և միջին ձեռնարկությունների հնարավորությունները սահմանափակվում են նաև առևտրային բանկերի կողմից բանկային երաշխիքների տրամադրման խիստ պահանջների սահմանման պատճառով: Բանկային համակարգը որոշակի իրավիճակներում առավել հակված է խոշոր բիզնեսի վարկավորման հարցում, ինչն իր հերթին ևս դժվարացնում է վարկեր ձեռք բերելու ՓՄՁ սուբյեկտների հնարավորությունները:

Ընդհանուր առմամբ վարկային ռիսկը կախված է տրամադրվող վարկի տեսակից, ծավալից, դրա ապահովվածությունից, օգտագործման ուղղվածությունից, տրամադրման եղանակներից և վարկառու սուբյեկտի չափերից³⁴: Առևտրային բանկերը, որպես կանոն, վարկավորումից ձգտում են խուսափել վարկային գործառնությունների ռիսկի բարձր աստիճանի, վարկառուի ֆինանսական վատ վիճակի, նրա անհուսալիության, վարկային միջոցների վերադարձման աղբյուրների բացակայության, հաճախորդի հետ հետագա համագործակցության հեռանկարների անորոշության և մի շարք այլ պատճառներով: Ակնյատ է, որ նշվածները հատկապես բնութագրական են ՓՄՁ ոլորտին, ինչի պատճառով էլ այն վարկավորման տեսանկյունից ներկայանում է բավականաչափ ռիսկային:

³⁴ Москвин В., Кредитование инвестиционных проектов: рекомендации для предприятий и коммерческих банков. Финансы и статистика. М., 2001 г., стр 69.

Ընդհանուր առմամբ ՓՄՁ ոլորտի վարկավորման ռիսկերը կարելի է դասակարգել հետևյալ տեսքով:



Գծապատկեր 3. ՓՄՁ ոլորտի վարկավորման ռիսկերի դասակարգումը

ՓՄՁ ոլորտի վարկավորման ռիսկերը լինում են արտաքին և ներքին³⁵: Առաջինները կապված են տնտեսության ընթացիկ վիճակի ու զարգացման հեռանկարների, իրականացվող դրամավարկային քաղաքականության և այլ գործոնների հետ: Արտաքին ռիսկերը կախված չեն տնտեսավարող սուբյեկտից, այդ իսկ պատճառով դրանք պետք է հաշվի առնել ոչ միայն կոնկրետ վարկառուի, այլ նաև համանման այլ սուբյեկտների խմբերի համար: Ներքին ռիսկերը անհատական են յուրաքանչյուր կոնկրետ փոքր և միջին ձեռնարկության համար, ինչը ենթադրում է վարկային հայտ ներկայացնող յուրաքանչյուր սուբյեկտի գծով մանրակրկիտ ու սուլմնասիրության իրականացում: Վարկառուի մրցունակության վրա ազդում են գործունեության ժամանակահատվածը, կայունությունը, թողարկվող արտադրանքի կամ մատուցվող ծառայությունների տեսակները, գինը և որակը, շուկայում

³⁵ Геронина Н., Актуальные вопросы банковского менеджмента: стратегическое управление, банковский маркетинг, финансовое планирование, управление инновациями. М., 2009 г., стр. 67.

ուևնեցած մասնաբաժինը և այլն: Կառավարման ոլորտում առկա ռիսկերը հիմնականում կապված են ղեկավարության աշխատանքային փորձառության, ռազմավարական կառավարման որակի, պլանավորման և բյուջետավորման կարողության ունեների, գործուևնեության ռազմավարության մշակման, իսկ ֆինանսական ռիսկերը՝ ֆինանսական հաշվետվության ունեների ոչ բավարար մակարդակով մշակման ու ներկայացման, տնտեսական գործուևնեության բնույթի և ուղղվածության, վարկուևնակության գնահատման հետևյալն:

ՓՄՁ ոլորտի վարկավորման հետ կապված հիմնախնդիրների լուծումը մեծապես պայմանավորված է վարկային ռիսկերի կրճատմամբ կամ դրանց արդյունավետ կառավարմամբ: Ընդհանուր առմամբ, գոյություն ունեն չորս հիմնական պատճառներ, որոնք հանգեցնում են վարկավորման ռիսկի բարձրացմանը և նվազեցնում վարկեր ստանալու փոքր և միջին ձեռնարկության ունեների հնարավորությունները: Առաջին՝ ՓՄՁ սուբյեկտների սեփական միջոցները, ինչպես արդեն նշեցինք, խիստ սահմանափակ են, ինչը, նպաստելով ձեռնարկության սեփական և փոխառու կապիտալի հարաբերակցության ցուցանիշի վատթարացմանը, բացասաբար է անդրադառնում նրանց վարկուևնակության վրա: Երկրորդ՝ ժամանակակից բիզնեսում մեծ նշանակություն ունի տեղեկատվական ապահովվածությունը, որի ոչ բավարար մակարդակը որոշակի դժվարություններ է ստեղծում վարկավորման համար: Դա հատկապես բնորոշ է փոքր և միջին ձեռնարկության ունեներին, ինչի պատճառներ են ձեռնարկատիրությանմբ զբաղվող անձանց կրթական ցածր մակարդակը, ֆինանսական տեղեկատվությանը չտիրապետելը, ֆինանսական շուկաներ մուտքի սահմանափակությունը և այլն: Նշված երևույթներն, անշուշտ, բացասաբար են անդրադառնում ձեռնարկության տնտեսական գործուևնեության և ֆինանսատնտեսական ցուցանիշերի վրա՝ հանգեցնելով վարկավորման հետ կապված որոշակի ռիսկերի առաջացմանը: Զաջորդ գործունը, որն անդրադառնում է վարկավորման գործընթացի վրա, ձեռնարկության համբավն է: Անշուշտ, դրական համբավ կարող է ձևավորվել գործուևնեության որոշակի ժամանակահատվածի ընթացքում, ինչը փոքր և միջին ձեռնարկության ունեների դեպքում հիմնականում

գոյությունն չունի: Նշված սուբյեկտները, որպես կանոն, ունեն կարճ «կենսագրություն»՝ զրկված լինելով առևտրային բանկերի հետ տևական փոխադրություններից: Վերջինիս հիմնական ցուցիչներից մեկն է վարկային պատմությունը, որը շատ ՓՄՁ սուբյեկտների պարագայում բացակայում է: Անշուշտ, պարտաճանաչ կերպով վարկային պատմությունների կատարումը որոշակի վստահություն է ստեղծում առևտրային բանկերի մոտ սեփական հաճախորդների վերաբերյալ: Այն իր արտացոլումն է ստանում վերջիններիս վարկային պատմության մեջ՝ մեծացնելով վարկ ստանալու հնարավորությունը: Սակայն դա որոշակի ժամանակահատված պահանջող գործընթաց է, ինչը փոքր և միջին ձեռնարկությունների գերակշիռ մասի (հատկապես նոր տնտեսական գործունեություն իրականացնողների) դեպքում բացակայում է: Ըստ էության, տվյալ խնդրի լուծման հնարավոր ուղիներից մեկն այդ սուբյեկտների համագործակցությունն է խոշոր բիզնեսի ներկայացուցիչների հետ, ինչի արդյունքում ձևավորվող կայուն տնտեսական հարաբերությունները առևտրային բանկերի կողմից ՓՄՁ սուբյեկտների հանդեպ որոշակի վստահություն են ստեղծում: Եվ վերջապես, չորրորդ գործոնը, որը զգալիորեն բարձրացնում է ՓՄՁ սուբյեկտների վարկավորման ռիսկը, կապված է վերջիններիս պատկանող ակտիվների յուրահատկության հետ՝ պայմանավորված երկրորդային շուկայում դրանց դժվար իրացվելիությամբ:

Այսպիսով՝ ՓՄՁ սուբյեկտների վարկավորման գործընթացի վրա ազդող գործոնները կարելի է դասակարգել երեք հիմնական խմբի՝ ընդհանուր տնտեսական, ֆինանսական և ոչ ֆինանսական:

Ընդհանուր տնտեսական գործոնների շարքին կարելի է դասել հետևյալները.

1. Վճարունակ պահանջարկի անկումը և ներքին շուկայի փոքրացումը: Չարգացած երկրներում միջին խավի տնտեսակարար կշիռը մեծ է, ինչը նպաստում է վճարունակ պահանջարկի աճին և խթան հանդիսանում ՓՄՁ ոլորտի զարգացման և գործունեության շրջանակների ընդլայնման համար:
2. Հարկման ոչ արդյունավետ համակարգի առկայությունը, ինչը հնարավորություն է չի տալիս ՓՄՁ սուբյեկտներին գործել

օրինական դաշտում և ապահովել շրջանառության ծավալների դինամիկ աճ: Բացի այդ մրցակցային ոչ բարենպաստ իրավիճակը, ապրանքային տարբեր շուկաներում գերիշխող դիրք զբաղեցնող սուբյեկտների առկայությունը զրկում են ՓՄՁ սուբյեկտներին արդար մրցակցության պայմաններում շուկայում սեփական տեղը և դիրքն ապահովելու հնարավորությունից:

3. ՓՄՁ ոլորտի հանդեպ պետական հովանավորչական քաղաքականության և աջակցության ոչ արդյունավետ համակարգը, ինչը չի նպաստում գործունեությունն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների շրջանառության ծավալների ընդլայնմանը:

4. Իրացման տեղական շուկային կողմնորոշվածությունը և արտահանման առումով զգալի դժվարությունների և խոչընդոտների առկայությունը:

Ֆինանսական գործունեության շարքին են պատկանում.

1. Գրավի առարկայով ապահովվածության ցածր մակարդակը: ՓՄՁ սուբյեկտները, որպես կանոն, տիրապետում են փոքր կապիտալի, իսկ արտադրական ֆոնդերը հիմնականում ձեռք են բերվում վարձակալության հիմունքներով:

2. Վարկային կարճ պատմությունը կամ դրա բացակայությունը: Գործունեության կարճ ժամանակաշրջան ունեցող ՓՄՁ սուբյեկտների վարկ ստանալու հնարավորություններն ավելի քիչ են: Բանկերն առավել շահագրգռված են վարկավորել առավել երկար գործունեությունն իրականացնող սուբյեկտներին՝ վերջիններիս համարելով ֆինանսապես կայուն:

3. Վարկային տոկոսադրույքների տարբերությունը խոշոր սուբյեկտների կողմից ձեռք բերվող վարկերի տոկոսադրույքների համեմատությամբ:

4. Վարկի ժամկետայնությունը, այսինքն ձեռնարկատերերի զգալի մասը գերադասում է երկարաժամկետ վարկեր, իսկ բանկերը հիմնականում տրամադրում են կարճաժամկետ վարկեր: Արդյունքում ՓՄՁ շատ սուբյեկտներ կանգնում են վերավարկավորման խնդրի առաջ:

5. Շրջանառության ծավալների և բիզնեսի մասշտաբների արհեստական նվազեցումը, ինչը հանգեցնում է բանկի կողմից վարկավորման գործընթացի բարդացմանը:

6. ՓՄՁ սուբյեկտների մեծ մասը, որպես կանոն, փորձում է վարկ ստանալ ֆինանսական ոչ լավ իրավիճակի դեպքում, այլ ոչ թե բնականոն գործունեության փուլում: Դավկայում է ֆինանսական կանխատեսումների ցածր մակարդակի մասին և խոչընդոտ հանդիսանում բանկերի կողմից վարկավորման համար:

7. Բանկերի կողմից գործառնական մեծ ծախսերը խոչոր բիզնեսի վարկավորման համեմատությամբ:

Ոչ ֆինանսական գործոնների շարքին են պատկանում:

1. Չարգացած ապրանքային շուկաների բացակայությունը, որոնցում գերակայող կհանդիսանան ազատ մրցակցությունը և մյուս շուկայական գործոնները:
2. Տնտեսության ստվերային հատվածի զգալի մասշտաբները, որում իրենց գերակշիռ դերն ունեն ՓՄՁ սուբյեկտները:
3. ՓՄՁ ոլորտի կադրային ապահովվածության ցածր մակարդակը, հատկապես բարձր որակավորում և ֆինանսապես գրագետ մասնագետների բացակայությունը շատ դեպքերում այդ սուբյեկտների սնանկացման պատճառ են հանդիսանում:

Նման իրավիճակում, անշուտ, տրամաբանական են ՓՄՁ սուբյեկտների վարկային հայտերի մերժման հաճախակի դեպքերը, որոնց հիմնական պատճառներ են գործունեության ցածր արդյունքները (կապված ֆինանսատնտեսական բացասական ցուցանիշների հետ), ինչպես նաև տրամադրված տեղեկատվության ոչ բավարար մակարդակը: Վերջինս առավել հաճախ տեղի է ունենում գործունեության կարճ պատմություն ունեցող սուբյեկտների դեպքում: Հատկանշական է այն հանգամանքը, որ առաջին պատճառով վարկային հայտերի մերժումն առավել բնորոշ է գերփոքր և փոքր ձեռնարկություններին, իսկ երկրորդը՝ միջին ձեռնարկություններին: Վարկային հայտի մերժման պատճառներ են հանդիսանում նաև մեկ անձից կամ անձանց ոչ մեծ խմբից ձեռնարկության բարձր կախվածության հետ կապված ռիսկը, ոչ կանխատեսելի ռիսկային գործոնները (ընտանեկան կոնֆլիկտներ և

այլն), ակտիվների նկատմամբ մասնավոր անձի և ձեռնարկության սեփականության իրավունքի տարանջատման անհնարինությունը, սեփականատիրոջ կողմից վարկային փորձագետներին բիզնեսի նպատակների և խնդիրների վերաբերյալ հստակ և պարզ բացատրելու անկարողությունը, բանկի կողմից խոշոր բիզնեսի վարկավորման հանդեպ հակվածությունը, վարկատուի կողմից անձնական երաշխիքների նկատմամբ վստահության ցածր աստիճանը և այլն:

Փոքր և միջին ձեռնարկությունների գործունեության առանձնահատկությունները, ֆինանսատնտեսական ոչ կայուն դրությունը, ինչպես նաև մի շարք այլ գործոններ ստիպում են առևտրային բանկերին այդ սուբյեկտների վարկավորման ժամանակ կիրառել մի շարք կանխարգելիչ միջոցներ՝ առկա ռիսկերի հնարավորինս նվազեցման նպատակով: Դրանց շարքին կարելի է դասել հետևյալները.

- տրամադրվող փոխառության առավելագույն չափի սահմանում,
- վարկավորման ժամկետի սահմանափակում (որպես կանոն, հիմնականում կարճաժամկետ՝ մինչև երկու տարի ժամկետով),
- վարկի մայր գումարի մարման ոչ արտոնյալ գրաֆիկի սահմանում. որպես կանոն, նախատեսվում են ամսական կտրվածքով մարումներ, մայր գումարի մարման արտոնյալ ժամանակահատվածը բացակայում է, հիմնականում հաշվի չեն առնվում սեզոնային գործունեության առանձնահատկությունները,
- դրամական հոսքերի չափի վերաբերյալ պահանջի սահմանում և այլն:

Վարկային ռիսկի նվազեցման համար կարևոր նշանակություն ունեն ձեռնարկության բազմաարոֆիլությունը, ձեռնարկատիրական ընդհանուր միջավայրից ՓՄՁ սուբյեկտի մեկուսացվածությունը, բիզնեսի ոչ թափանցիկությունը, սեփական կապիտալի անբավարար մակարդակը և այլն³⁶:

³⁶ Майдан Н., Повышение эффективности венчурного финансирования. Проблемы современной экономики. 2013 г., № 4, стр. 192-195.

Այս ափսոսվ՝ մեկնարկային կապիտալի և իրացվելի միջոցների բացակայությունը, ինչպես նաև մի շարք այլ գործոններ փոքր և միջին բիզնեսը դարձնում են վարկավորման տեսանկյունից խիստ ռիսկային: Նման պայմաններում առևտրային բանկերը հակվածություն չեն ցուցաբերում տվյալ ոլորտի վարկավորման նկատմամբ՝ հատկացված միջոցների հետվերադարձման երաշխիքների բացակայության պատճառով: Այս տեսանկյունից կարևոր նշանակություն ունի վարկունակության գնահատումը, որը կարող է եսկան չափորոշիչ հանդիսանալ բանկերի համար վարկավորման վերաբերյալ որոշումների կայացման ժամանակ: Միաժամանակ վարկունակության ապահովումը հնարավորություն կտա ՓՄՁ սուբյեկտներին որոշակիորեն լուծել սեփական \$ինանսական ապահովվածության խնդիրը՝ արդյունավետ նախադրյալներ ստեղծելով տնտեսական գործունեության իրականացման համար:

ԳԼՈՒԽ 2. ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ՎԱՐԿՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

2.1. ՎԱՐԿՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Վարկային միջոցների ներգրավումն ու օգտագործումը շուկայական հարաբերությունների հիմնական բնութագրիչներից է և ուղղված է տնտեսավարող սուբյեկտների \$ինանսական կարիքների բավարարմանը: Վարկավորման գործընթացի կարևոր բաղադրիչներից և պայմաններից մեկն է վարկառուի և վարկատուի միջև փոխվստահությունը, որի ապահովմանն է ուղղված հաճախորդի վարկունակության վերլուծությունը: Յուրաքանչյուր բանկ սեփական հայեցողությամբ է որոշում այդ նպատակով տվյալների բազայի ձևավորման և օգտագործման առանձնահատկությունը, ինչպես նաև ընտրում վարկունակության գնահատման համապատասխան մեթոդը: Վերջինիս նպատակների և խնդիրների

ընկալման համար կարևոր է «վարկունակություն» հասկացության հստակեցումն ու պարզաբանումը:

«Վարկունակություն» հասկացությունն ունի բավականին հին պատմություն և սկսել է օգտագործվել դեռևս 18-19-րդ դարերից Ա. Սմիթի և Ջ. Քեյնսի կողմից: Իր զարգացման ընթացքում այն ունեցել է տարբեր սահմանումներ և դրանցից բխող մեկնաբանություններ: Մասնավորապես 20-րդ դարի 20-ական թվականներին վարկունակության տակ հասկացվում էր վարկային գործարք իրականացնելու փոխառուի ընդունակությունը, այսինքն՝ փոխառու միջոցի վերադարձման հնարավորությունը: Բանկի տեսանկյունից վարկունակությունը դիտարկվում էր որպես վարկային միջոցի թույլատրելի չափի ճիշտ որոշումը և դրա ապահովվածությունը: Տվյալ ժամանակահատվածում տնտեսագետների զգալի մասը վարկային միջոցի տրամադրման հիմնական պայման էին համարում փոխառուի եկամուտստանալու հնարավորությունը³⁷:

1930-1940-ական թվականներին գերակայող էր այն տեսակետը, որ փոխառությունն ստանալու իրավունք ունեն ինքնուրույն հաշվեկշիռ և սեփական շրջանառու միջոցներ ունեցող կազմակերպությունները: Վարկավորման ժամանակ կիրառվում էին այնպիսի հասկացություններ, ինչպիսիք էին «հաշվեկշռի ոչ իրացվելիությունը» և «փոխառուի անվարկունակությունը»³⁸: 1950-1980-ական թվականներին վարկունակությունը մեկնաբանվում էր որպես վարկ ստանալու նախադրյալների առկայություն և այն վերադարձնելու ընդունակություն: Փոխառուի վարկունակությունը որոշվում էր համապատասխան ցուցանիշների միջոցով, որոնք բնութագրում էին նրա կարգապահությունը նախկինում ստացված վարկերի մարման ժամանակ, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում տարբեր աղբյուրներից դրամական միջոցներ կենտրոնացնելու նրա ընդունակությունը³⁹:

³⁷ Просалова В., Проблемы оценки кредитоспособности клиентов коммерческих банков: монография. Владивосток: ВГУЭС, 2008 г., стр. 19.

³⁸ Просалова В., Проблемы оценки кредитоспособности клиентов коммерческих банков: монография. Владивосток: ВГУЭС, 2008 г., стр. 19.

³⁹ Просалова В., Проблемы оценки кредитоспособности клиентов коммерческих банков: монография. Владивосток: ВГУЭС, 2008 г., стр. 19.

Ընդհանուր առմամբ վարկուհակության տակ հասկացվում է փոխառուի ընդունակությունն ամբողջությամբ և սահմանված ժամկետներում կատարելու սեփական պարտքային պարտավորությունները⁴⁰: Պետք է նշել, որ մասնագիտական գրականության մեջ ներկայումս տվյալ հասկացության համընդհանուր սահմանում գոյություն չունի: Մասնավորապես Պ. Ս. Ռոուզը փոխառուի վարկունակությունը ներկայացնում է որպես հաճախորդի կողմից վարկի սպասարկման կարողություն⁴¹: Անշուշտ, նման մեկնաբանությունը չի արտացոլում տվյալ երևույթն ամբողջությամբ, քանի որ հաշվի չի առնվում ապագայում վարկի սպասարկման ունակության հնարավոր փոփոխությունները: Մի շարք հեղինակներ վարկունակությունը սահմանում են որպես ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշներով ներկայացված իրավական և ֆինանսական բնութագրիչ, որը հնարավորություն է տալիս գնահատել փոխառուի հնարավորություններն ապագայում ամբողջությամբ և վարկային պայմանագրով նախատեսված ժամկետներում վարկատուի առաջ կատարելու սեփական պարտքային պարտավորությունները, ինչպես նաև որոշել կոնկրետ փոխառուի վարկավորման ժամանակ ռիսկերի աստիճանը⁴²: Մ. Բուկիրը վարկունակությունը սահմանում է որպես վարկ ստանալու և ժամանակին ու ամբողջությամբ վերադարձնելու փոխառուի նյութական և ֆինանսական հնարավորությունների համախումբ⁴³: Իհարկե, վարկունակության սահմանումը որպես վարկ ստանալու հնարավորություն հիմնավորված չէ, քանի որ դրա գնահատման նպատակը հենց սուբյեկտի կողմից վարկ ստանալու հնարավորությունների որոշումն է: Ն. Սելեզնևան և Ա. Իոնովը վարկունակությունը մեկնաբանում են որպես տնտեսավարող սուբյեկտի մոտ վարկ ստանալու և այն ժամանակին վերադարձնելու նախադրյալների առկայություն⁴⁴: Ն. Լյուբուշինի կարծիքով

⁴⁰ Банковское дело: Под ред. О. Лаврушина, М., 2005 г., стр. 222.

⁴¹ Роуз П., Банковский менеджмент. Дело Лтд. М., 1995 г., стр. 63.

⁴² Ендовицкий Д., Бахтин К., Ковтун Д., Анализ кредитоспособности организации и группы компаний. КНОРУС. М., 2016 г., стр. 21.

⁴³ Букирь М., Кредитная работа в банке: методология и учет. КНОРУС. М., 2012 г., стр. 32.

⁴⁴ Селезнева Н., Ионова А., Финансовый анализ. Управление финансами. Юнити, М., 2006 г., стр. 354.

վարկուհակույթուհը կազմակերպության տրամադրության տակ գտնվող ակտիվների հաշվին սեփական պարտավորությունները կատարելու հնարավորությունն է⁴⁵: Յամաձայն Ա. Չեռնենկոյի տեսակետի՝ վարկուհակույթուհը կազմակերպության պոտենցիալ հնարավորությունն է չկորցնել իր ընթացիկ վճարուհակույթուհը վարկը ստանալուց հետո և ներգրավված միջոցների նպատակային օգտագործումից առաջ⁴⁶: Գ. Բելոգլազովան վարկուհակույթան տակ հասկանում է պոտենցիալ փոխառուի ընդուհակույթուհն ու պատրաստակամությունը սահմանված ժամկետում և ամբողջ ծավալով վերադարձնելու վարկային պարտքը⁴⁷: Վերջինս վերադարձնելու ընդուհակույթուհը որոշվում է փոխառուի հաշվեկշռային ցուցանիշների, հաշվետվությունների, ինչպես նաև նրա բիզնեսի հեռանկարայնության գնահատման հիման վրա: Ընդ որում պարտքը վերադարձնելու պատրաստակամությունն էականորեն պայմանավորում է նրա իմիջը և բարի համբավը: Ե. Ժարկովսկայան վարկուհակույթուհը սահմանում է որպես փոխառուի նյութական և ֆինանսական հնարավորությունների համախումբ, որոնք պայմանավորում են փոխառությունը սահմանված ժամկետներում և ծավալով վերադարձնելու նրա ընդուհակույթուհը⁴⁸: Օ. Լավրոշինը վարկուհակույթուհը մեկնաբանում է որպես փոխառուի պատրաստակամությունն ամբողջությամբ և սահմանված ժամկետում կատարելու սեփական պարտքային պարտավորությունները⁴⁹: Նա վարկուհակույթուհը ներկայացնում է որպես վերադարձելիության, ժամկետայնության և վճարովիության պայմանով վարկային գործարք իրականացնելու ընդուհակույթուհ⁵⁰: Մ. Վլասովան վարկուհակույթուհը բնութագրում է որպես վարկը մարելու փոխառուի ֆինանսական հնարավորություն և ընդուհակույթուհն, ինչը որոշվում է նրա

⁴⁵ Любушин Н., Экономический анализ. Юнити. М., 2010 г., стр. 467.

⁴⁶ Черненко А., Ильшева Н., Башарина А., Финансовое положение и эффективность использования ресурсов предприятия. Юнити. М., 2009 г., стр. 69.

⁴⁷ Банковское дело. Под ред. Г. Белоглазовой, Л. Кроливецкой., 5-е изд., перераб. и доп. Финансы и статистика. М., 2003 г., стр. 256.

⁴⁸ Банковское дело. Под ред. Жарковской Е., ОМЕГА-Л. 4-е изд. М., 2006 г., стр. 124.

⁴⁹ Банковские операции. Под ред. О. Лаврушина и др. КНОРУС. М., 2007 г., стр. 139.

⁵⁰ Банковские операции. Под ред. О. Лаврушина и др. КНОРУС. М., 2007 г., стр. 140.

եկամուտների և ծախսերի մանրակրկիտ վերլուծության և հեռանկարում դրանց փոփոխության գնահատման միջոցով⁵¹: Առավել ընդգրկուն է Դ. Ենդովիցկու տեսակետը վարկունակության վերաբերյալ, որի տակ նկատի է առնում արտադրության նորմալ ընթացքի ապահովման պայմաններում սեփական միջոցների հաշվին բոլոր ժամկետային վճարումները կատարելու ընդունակություն⁵²: Գրեթե նույն տեսակետն ունի Վ. Սևրուկը, համաձայն որի, վարկունակությունը ձեռնարկության ֆինանսական այնպիսի վիճակն է, որն արտահայտվում է վարկունակությամբ և վճարունակությամբ, այսինքն կնքված պայմանագրերի վճարային պահանջները ժամանակին բավարարելու, վարկերը վերադարձնելու, աշխատակիցների աշխատավարձը վճարելու, բյուջեի հանդեպ բոլոր պարտավորությունները կատարելու ընդունակությամբ⁵³:

Ներկայացված սահմանումներում շատ հաճախ նույնականացվում են վճարունակություն և վարկունակություն և հասկացություններն այն դեպքում, երբ դրանց միջև գոյություն ունեն որոշակի տարբերություններ: Առաջինը ենթադրում է բոլոր, իսկ երկորդը՝ միայն վարկային պարտավորությունների կատարման կազմակերպության ընդունակություն և հնարավորություն: Այլ կերպ ասած՝ վարկունակությունը վճարունակության բաղադրիչներից մեկն է: Վարկունակությունը ցույց է տալիս առաջիկա ժամանակահատվածում (վարկային պայմանագրով նախատեսված ժամկետում) վարկային պարտավորությունների կատարման հաճախորդի ընդունակությունը: Այն իրենից ներկայացնում է սուբյեկտի պատրաստակամությունն ու հնարավորությունը ժամանակին և ամբողջական ծավալով կատարելու սեփական ֆինանսական պարտավորությունները: Այսպիսով՝ վճարունակությունն ավելի լայն է, քան վարկունակությունը, քանի որ վերջինը վերաբերում է բացառապես վարկային պարտավորությունների կատարմանը: Միաժամանակ, դրանք

⁵¹ Власова М., Анализ кредитоспособности клиента коммерческого банка. Банковское дело. 2006 г., №5, стр.15-18.

⁵² Ендовицкий Д., Анализ и оценка кредитоспособности заемщика: учебно-практическое пособие. КНОРУС. М., 2005 г., стр. 32.

⁵³ Севрук В., Банковские риски. Дело-ЛТД. М., 1995 г., стр. 23.

սերտորեն կապված են միմյանց հետ և հաճախորդի վարկունակության գնահատման ժամանակ վճարունակությունը կամ անվճարունակությունը հանդես են գալիս որպես որոշիչ գործոն:

Ինչպես նկատում ենք բերված սահմանումներից, վարկունակությունը հիմնականում դիտարկվում է որպես տնտեսավարող սուբյեկտների և ֆիզիկական անձանց կողմից սեփական վարկային պարտավորությունները ժամանակին և ամբողջական ծավալով կատարելու հնարավորություն: Վերը բերված սահմանումների ընդհանրացման արդյունքում վարկունակությունը կարող ենք ներկայացնել որպես.

- վարկի ստացման անհրաժեշտ նախադրյալ կամ պայման,
- պարտքը վերադարձնելու պատրաստակամություն և ընդունակություն,
- վարկը ճիշտ օգտագործելու և պարտքը ժամանակին մարելու հնարավորություն⁵⁴:

Սեր կարծիքով վարկունակությունը կարելի է սահմանել որպես վարկային միջոց ստանալու իրավասություն, այն արդյունավետ օգտագործելու հնարավորություն, ինչպես նաև ապագայում նախապես սահմանված ձևով, ժամկետներում և ծավալով վարկատուին փոխառու միջոցները վերադարձնելու պատրաստակամություն և ընդունակություն: Այսինքն՝ վարկունակությունը դիտարկելիս պետք է հաշվի առնել ոչ միայն փոխառու միջոցների վերադարձման վարկառուի ցանկությունը, այլ նաև դրանց արդյունավետ օգտագործման հնարավորությունը: Չետևաբար կարող ենք պնդել, որ վարկունակության վերլուծության նպատակը փոխառուի վարկավորման նպատակահարմարության որոշումն է: Այս առումով վարկունակության վերլուծության հիմնական խնդիրներն են.

- վարկի օպտիմալ չափի, ժամկետայնության և վճարման ձևի որոշումը,
- կազմակերպության ընթացիկ ֆինանսական վիճակի և գործունեության արդյունքների գնահատումը,

⁵⁴ Луценко А., Лебедев. Е., Определение кредитоспособности физических лиц и риска их кредитования. М., Финансы и кредит, №32 (236), 2006 г. , стр.75-83.

- վարկի մարման ժամանակահատվածում կազմակերպության ֆինանսական ցուցանիշների կանխատեսումը,
- կազմակերպության ֆինանսական կայունության վրա ազդեցության տեսանկյունից վարկավորման նպատակահարմարության վերլուծությանը,
- վարկի վերադարձման հարցում կազմակերպության ղեկավարության պատրաստակամության գնահատումը,
- գրավային ապահովվածության, դրա իրացվելիության և բավարարության գնահատումը:

Գոյություն ունեն վարկունակության գնահատման տարբեր մեթոդներ, որոնցից յուրաքանչյուրն ունի իր առանձնահատկությունները, առավելությունները և թերությունները: Անդրադառնանք դրանցից հիմնականներին:

Վարկունակության գնահատման գործակցային մեթոդը ենթադրում է փոխառուի գործունեության վերաբերյալ որոշակի ցուցանիշների վերլուծության, որոնցից հիմնականներն են իրացվելիության, շրջանառվելիության, շահույթաբերության, ֆինանսական կայունության, պարտքի սպասարկման և միջառքայլ գործակիցները: Վերջիններիս մեծ քանակությունը հնարավորություն է տալիս գնահատել փոխառուի գործունեության ընթացիկ վիճակը՝ նորմատիվային ցուցանիշների հետ համեմատության հիման վրա: Փոխառուները դասակարգվում են մի քանի խմբերի և քանկի կողմից վարկավորվում են՝ հաշվի առնելով տվյալ խմբի և ճյուղի առանձնահատկությունները: Որոշակի ժամանակահատվածի կտրվածքով նման գործակիցների հաշվարկը հնարավորություն է տալիս համալիր կերպով գնահատել փոխառուի ընթացիկ վիճակը: Սակայն քանի որ վարկունակության գնահատումը ենթադրում է նաև ապագայի կանխատեսում, ապա անհրաժեշտություն է առաջանում իրականացված հաշվարկները լրացնել մասնագետների կանխատեսումային գնահատականներով, քանի որ այս մեթոդը հնարավորություն է տալիս առավել ապես գնահատել փոխառուի ընթացիկ գործունեության ֆինանսական արդյունքները: Վարկունակության գնահատման գործակցային մեթոդի հիմնական առավելությունը կայանում է ոչ մեծ քանակի ցուցանիշների

կիրառման միջոցով փոխառուի վարկուհական վերաբերյալ եզրակացությունների օպերատիվ և արագ ստացման մեջ: Որպես թերություն կարելի է նշել այն, որ այս մեթոդի կիրառման դեպքում տնտեսական գործունեության տեսակը, գործունեության պայմանների և իրավիճակի հնարավոր փոփոխությունները հաշվի չի առնվում:

Վիճակագրական մեթոդի էությունը կայանում է փոխառուի ֆինանսատնտեսական վիճակը բնութագրող քանակական ցուցանիշների հիման վրա ապագա հաճախորդների հուսալիության գնահատման մեջ: Այն կիրառվում է նաև կազմակերպության անվճարուհական հավանականության գնահատման նպատակով: Այս մեթոդը ենթադրում է համապատասխան ցուցանիշների վիճակագրական վերլուծության հիման վրա վարկային վարկանիշի տրամադրում: Վերջինիս վրա ազդող ֆինանսական ցուցանիշների ընտրություննից հետո նախորդ ժամանակաշրջանի վիճակագրական տվյալների հիման վրա որոշվում է դրանցից յուրաքանչյուրի ազդեցությունը վարկուհական վրա, ինչն իր արտացոլումն է ստանում համապատասխան գործակիցների կշռի և դրանց համապատասխան տրվող բալերի մեջ: Այս մեթոդի առավելությունը կայանում է բավականաչափ քիչ թվով ցուցանիշների օգտագործման մեջ, որոնց համար բավարար են հաշվապահական հաշվետվությունների տվյալները: Միաժամանակ վարկուհական գնահատականի ստացման օպերատիվությունը բավականաչափ բարձր է: Որպես այս մեթոդի թերություն կարելի է դիտարկել նրա սահմանափակ կիրառման աստիճանը, քանի որ այն ենթադրում է տնտեսական գործունեության տեսակը և մասշտաբները հաշվի առնող որակյալ վիճակագրական մոդելների առկայություն:

Վարկուհական գնահատման համալիր վերլուծական մեթոդի դեպքում տեղեկատվության հիմնական աղբյուր է հանդիսանում հաշվապահական հաշվետվությունը: Բացի այդ վարկային մասնագետները կարող են լրացուցիչ տեղեկություններ պահանջել առաջիկա մեկ և ավելի տարիների կտրվածքով կանխատեսվող եկամուտների և ծախսերի, ինչպես նաև դեբիտորական և կրեդիտորական պարտավորությունների վերաբերյալ: Գնահատվում

են նաև շահութաբերությունը, շահույթի և վնասի չափը, ֆինանսական կայունությունը և մի շարք այլ ցուցանիշներ: Փաստորեն այս մեթոդի դեպքում իրականացվում է փոխառուի տնտեսական գործունեությունն ուղղակիորեն և անուղղակիորեն բնութագրող մի շարք ցուցանիշների համալիր վերլուծություն: Այն ենթադրում է փոխառուի գործունեությունը համակողմանիորեն բնութագրող ցուցանիշների գնահատում և հիմնվում է արտաքին և ներքին միջավայրի տարբեր գործոնների վերլուծության վրա: Արդյունքում տրվում է փոխառուի գործունեության վերաբերյալ համալիր գնահատական՝ հաշվի առնելով դրա վրա անմիջականորեն և միջնորդավորված կերպով ազդող բոլոր գործոնները: Այս մեթոդը հնարավորություն է տալիս առավել արժանահավատ տեղեկատվություն ստանալ փոխառուի ֆինանսական վիճակի վերաբերյալ, սակայն կիրառման տեսանկյունից բավականաչափ աշխատատար է և բարդ է հատկապես փոքր և միջին բիզնեսի սուբյեկտների կտրվածքով:

Դրամական հոսքերի վերլուծության հիման վրա վարկունակության գնահատման ժամանակ որոշվում են գործունեության վերաբերյալ համապատասխան գործակիցները՝ ելնելով իրացվելի միջոցների շրջանառության, պահուստների և կարճաժամկետ պարտքային պարտավորությունների վերաբերյալ տվյալներից՝ դրամական հոսքերի սալդոյի հիման վրա: Այս մեթոդը կիրառվում է հաճախորդի դրամական հոսքերի՝ մասնավորապես որոշակի ժամանակաշրջանի կտրվածքով մուտքերի և ելքերի սալդոյի որոշման միջոցով: Դրամական հոսքերը պայմանավորում են ծախսերը ծածկելու և սեփական ռեսուրսների հաշվին ստանձնած ֆինանսական պարտավորությունները մարելու փոխառուի հնարավորությունը: Սովորաբար այս դեպքում դիտարկվում են առնվազն վերջին երեք տարիների ցուցանիշները: Դրական սալդոն վկայում է փոխառուի ֆինանսատնտեսական կայունության մասին, ինչն ինքնին վարկունակության համար կարևոր պայման է: Միաժամանակ դրամական հոսքերի վերլուծությունը հնարավորություն է տալիս եզրահանգումներ կատարել կազմակերպության ֆինանսական կառավարման որակի վերաբերյալ:

Այս մեթոդի հիմնական առավելությունը կայանում է վարկունակության վերլուծության արժանահավատության բարձր մակարդակի մեջ, քանի որ դրամական հոսքերը պայմանավորում են սեփական դրամական միջոցների հաշվին ծախսերը ծածկելու և պարտքային պարտավորությունները մարելու տնտեսավարող սուբյեկտի հնարավորությունները: Սակայն այս մեթոդը ևս բավականաչափ աշխատատար է, իսկ փոքր և միջին բիզնեսի սուբյեկտների պարագայում նրանց դրամական հոսքերի վերաբերյալ լիարժեք և արժանահավատ տեղեկատվություն ստանալը խիստ դժվար է:

Գործարար ռիսկի վերլուծության հիման վրա վարկունակության գնահատման ժամանակ հատկապես առաջնային նշանակություն է ձեռք բերում տնտեսական գործունեության մբ պայմանավորված ռիսկերի գնահատումը: Գործարար ռիսկի գործունեությունը կապված են մատակարարների հուսալիության, նրանց դիվերսիֆիկացման, մատակարարումների սեզոնայնության, արտադրական հնարավորությունների և տնտեսական գործունեության կազմակերպման հետ առնչվող այլ միջոցների հետ: Այն կապված է նաև վարկավորման գործընթացները կանոնակարգող օրենսդրական դաշտի անկատարությունների և գործունեության տվյալ ճյուղի առանձնահատկությունների հետ: Այս մեթոդն, ըստ էության, հնարավորություն է տալ իսկանխատեսել փոխառության մարման համար անհրաժեշտ աղբյուրների բավարարության մակարդակը՝ ելնելով կազմակերպության գործունեության ընթացքում առաջացող ռիսկերի արդյունավետ կառավարման հնարավորությունից: Միաժամանակ, այն կապված է կազմակերպության ներքին տեղեկատվության ձեռքբերման հետ, ինչը բավականաչափ դժվար է:

Վարկունակության կանխատեսումային գնահատման ժամանակ բանկերը ձգտում են գնահատել կազմակերպության ոչ միայն ընթացիկ, այլ նաև ապագա վճարունակությունը: Այդ նպատակով հաշվարկվում է վարկունակության ինդեքսը, կիրառվում է ֆորմալ և ոչ ֆորմալ չափանիշների համակարգը, կանխատեսվում են վճարունակության ցուցանիշները: Այս մեթոդը ենթադրում է ոչ

միայն հաշվապահական հաշվառման տվյալների, այլ նաև լրացուցիչ տեղեկատվության (օրինակ՝ իրացվելիության ցածր գործակիցներ, բանկային ոլորտի կազմակերպությունների հետ փոխհարաբերությունների վատթարացում, գործունեության ոչ բավարար դիվերսիֆիկացում և այլն) օգտագործում: Կարելի է ասել, որ այս մեթոդը վարկունակության գնահատման առումով ավելի լիարժեք է, քանի որ դիտարկում է փոխառուի ոչ միայն ընթացիկ գործունեության արդյունքները, այլ նաև առաջիկայում հնարավոր փոփոխությունները: Բնականաբար, դա ենթադրում է կանխատեսումների արժանահավատության և իրատեսականության բարձր մակարդակ, ինչը կարող է ապահովվել միայն բազմակողմանի և բազմաբնույթ գործունեության դիտարկման արդյունքում: Որպես թերություն նպետք է համարել այն, որ ցանկացած կանխատեսումային որոշում չի կարող ունենալ բացարձակ արժանահավատության, իսկ հաշվարկված ցուցանիշներն ավելի շուտ ունեն տեղեկատվական նշանակություն:

Գործնականում, վարկունակության գնահատման միասնական ստանդարտացված համակարգ գոյություն չունի և բանկերը փոխառուի վարկունակության վերլուծության նպատակով կիրառում են տարբեր մեթոդներ: Նման իրավիճակի հիմնական պատճառներն են հանդիսանում.

- վարկունակության վրա ազդող գործոնների գնահատման որակական և քանակական մոտեցումների նկատմամբ վստահության տարբեր աստիճանը,
- վարկունակության գնահատման պատմականորեն ձևավորված պրակտիկայի և վարկային մշակույթի առանձնահատկությունները,
- վարկային ռիսկերի կրճատման ուղղությամբ կիրառվող գործիքների տարածվածության տարբերությունները,
- վարկունակության մակարդակի վրա ազդող գործոնների բազմազանությունը, ինչի հետևանքով վարկային վարկանիշի կազմման ժամանակ բանկերը տարբեր վերաբերմունք են ցուցաբերում դրանց նկատմամբ,

- վարկուհու նախնական գնահատման միասնական արդյունքի բացակայությունը. որոշ բանկեր բավարարվում են ֆինանսական գործակիցների հաշվարկամբ, իսկ մյուսները կազմում են վարկային վարկանիշներ և հաշվարկում են վարկային ռիսկի մակարդակը:

Պետք է նշել, որ փոխառուի վարկուհու նախնական գնահատումը և վարկանիշային տարբեր դիրքերին նրանց դասակարգումը վարկային ռիսկի նվազեցման կարևոր միջոցներից մեկն է:

Ընդհանրապես փոխառուի վարկուհու նախնական վրա ազդում են հետևյալ գործոնները:

Աղյուսակ 3.

Վարկուհու նախնական վրա ազդող գործոնները

Գործոն	Բովանդակությունը
Վարկի ստացման պահին փոխառուի ֆինանսական վիճակը	Իրացվելիությունը և վճարունակությունը որոշող ֆինանսական գործակիցների հաշվարկ
Վարկի մարման տնտեսական հնարավորությունները	Իրացվելի ակտիվների առկայություն, լրացուցիչ միջոցների (այլ բանկերից վարկեր, փոխառություններ) ներգրավման և բաժնետոմսերի թողարկման հնարավորություն
Վարկի վերադարձման փոխառուի ձգտում	Գործարար համբավ, պարտաճանաչություն, վարկային պատմություն
Վարկի ապահովվածություն	Գրավ, երաշխիքներ, ապահովագրություն
Անվճարունակության հավանականություն	Սնանկացման կանխատեսման մոդելների կիրառում
Մրցունակ դիրք	Գործունեության ժամկետներ, շուկայում մասնաբաժին, կայուն արտադրություն
Ղեկավարություն	Ռազմավարություն, փորձ,

	ալ անավորում և վերահսկողություն, հուսալիություն
Միջավայր	Տնտեսական, քաղաքական, տեխնիկական և արտաքին միջավայր
Ճյուղի վերլուծություն	Շուկամուտքի արգելքներ, գնորդների և մատակարարների հնարավորություններ
Ռազմավարություն	Ապրանքային, մարկետինգային, արտադրական, ֆինանսական, գիտական հետազոտություններ

Աղյուսակ 3-ի շարունակություն

Գործունեության իրատեսականության գնահատում	Սեփական կամ վարձակալված հիմնական միջոցների բացակայություն, կազմակերպության կողմից բանկային հաշիվներից պարբերաբար խոշոր գումարների դուրս հանում, տնտեսապես չհիմնավորված գործառնությունների և գործարքների, ինչպես նաև կասկածելի և չարդարացված քայլերի իրականացում
---	---

Պետք է նշել, որ շուկայական հարաբերությունների պայմաններում վարկունակության ապահովման տեսանկյունից հատկապես կարևոր նշանակություն է ձեռք բերում փոխառուի ակտիվների իրացվելիության աստիճանը: Այդ իսկ պատճառով, «վարկունակություն» հասկացությունը ևս ժամանակի ընթացքում մեկնաբանությունների տեսանկյունից ենթարկվել է որոշակի փոփոխությունների՝ հիմնականում պայմանավորված վարկատուի և վարկառուի գործունեության տնտեսական միջավայրի փոփոխություններով:

Վարկուհիները իր մեջ ընդգրկում է վարկային հարաբերությունների բոլոր փուլերը և ենթադրում է տնտեսավարող սուբյեկտի գործունեությանն արտացոլող քանակական և որակական ցուցանիշների մանրակրկիտ ուսումնասիրություն՝ վարկուհիներին, վարկի ապահովվածության, վարկային ռիսկի աստիճանի և վարկավորման օպտիմալ սխեմայի ընտրության վրա դրանց ազդեցության տեսանկյունից:

Հարկ է նաև նշել, որ փոխառուի վարկուհիներին և վարկավորման ռիսկերի միջև գոյություն ունի հակադարձ կապ: Ինչքան բարձր է վարկուհիները, այնքան ցածր է բանկի ռիսկը կորցնելու սեփական դրամական միջոցները: Հետևաբար բանկի վարկային փորձագետի համար կարևոր նշանակություն ունի նաև վարկուհիների վերլուծության նպատակների և խնդիրների որոշումը: Համաձայն Դ. Ենդովիցկու տեսակետի՝ վարկուհիների գնահատման ժամանակ բանկի վարկային մասնագետների նպատակը կայանում է նրանում, որ յուրաքանչյուր կոնկրետ դեպքի համար թվերի տեսքով արտահայտեն վարկուհիների գնահատման չափանիշները⁵⁵: Դա հատկապես կարևոր նշանակություն կարող է ունենալ փոխառուին վարկի տրամադրման նպատակահարմարության, վարկավորման պայմանների վերաբերյալ որոշումների կայացման համար:

Վարկառուի վարկուհիների վերլուծության նպատակը նրա գործունեության համալիր ուսումնասիրությունն է՝ տրամադրվող ռեսուրսների վերադարձման հնարավորությունները գնահատելու համար և ենթադրում է հետևյալ խնդիրների լուծում.


- վարկառուի կողմից տրամադրվող ֆինանսական ռեսուրսների օպտիմալ մեծության և դրանց մարման եղանակների հիմնավորում,
- վարկառուի կողմից վարկային ռեսուրսների օգտագործման արդյունավետության որոշում,

⁵⁵ Ендовицкий Д., Анализ и оценка кредитоспособности заемщика: учебно-практическое пособие. КНОРУС. М., 2005 г., стр. 34.

- վարկառուի ընթացիկ ֆինանսական վիճակի գնահատում և վարկի տրամադրումից հետո դրա հնարավոր փոփոխությունների կանխատեսում,
- վարկատուի կողմից վարկառուի նկատմամբ մոնիտորինգի իրականացում՝ վերջինիս ֆինանսական վիճակը բնութագրող ցուցանիշների վերաբերյալ պահանջների պահպանման կտրվածքով,
- վարկառուի վարկունակության բավարար մակարդակի ապահովման ուղղությամբ կազմակերպությունում կայացվող որոշումների արդյունավետության և նպատակահարմարության վերլուծություն,
- վարկային ռիսկերի բացահայտում և վարկավորման վերաբերյալ որոշման կայացման վրա դրանց ազդեցության գնահատում,
- ֆինանսական տեղեկատվության բավարարության և դրա արժանահավատության վերլուծություն:

Վարկունակության վերլուծության ժամանակ օգտագործվող կարևոր սկզբունքներից մեկը համալիրությունն ու համակարգայնությունն է⁵⁶: Դա նշանակում է, որ վարկունակության վերլուծությունն իրենից պետք է ներկայացնի մի համակարգ, որն իր մեջ է ներառում միմյանց հետ փոխկապակցված և այլ ենթահամակարգերի հետ փոխգործակցության մեջ գտնվող տարրեր (տես գծապատկեր 4): Համակարգի յուրաքանչյուր տարր իր մեջ պարունակում է վերլուծական ցուցանիշներ, որոնք միմյանց հետ փոխկապակցված են:

⁵⁶ Банковское дело. Под ред. Жарковской Е., ОМЕГА-Л. М., 4-е изд, 2006 г., стр. 400.



Գծապատկեր 4. Կարկունակության համալիր վերլուծության համակարգը

Կարկունակության վերլուծության կարևոր տարրերից մեկը տեղեկատվական բազան է, առանց որի անհնար է համարժեք և արդյունավետ կերպով գնահատել այս կամ այն տնտեսավարող սուբյեկտի գործունեության մեջ ապագայում ներդրվելիք ֆինանսական միջոցների ռիսկի աստիճանը: Այդ նպատակով օգտագործվող տեղեկատվության աղբյուրներ են հանդիսանում հիմնադիր փաստաթղթերը, պարտքի տեղեկատվությունը, տեխնիկական փաստաթղթերը, աուդիտորական եզրակացությունը, մարկետինգային տեղեկատվությունը, ֆինանսական հաշվետվությունները և հաշվապահական հաշվառման տվյալները, կանխատեսումային տեղեկատվության տվյալները (բիզնես պլան, բյուջե, տեխնիկատնտեսական հիմնավորում): Որպես գնահատման ցուցանիշներ են հանդես գալիս իրացվելիությունը, կապիտալի շրջանառելիությունը, ներգրավված միջոցների ծավալը և շահույթաբերությունը: Կարկի մարման պոտենցիալ աղբյուրների վերլուծության ժամանակ իրականացվում է վարկի

ապահովվածության, կազմակերպության շահույթի և իրացման ենթակաակտիվների վերլուծության:

Վարկատուի համար վարկունակության վերաբերյալ տեղեկատվությունը նշանակում է ռիսկերի նվազեցում՝ հատկապես \$ինանսական դժվարությունների առաջացման հավանականության կրճատման տեսանկյունից: Վարկառուի համար դա սեփական վճարունակությունը և \$ինանսական կայունությունը հավաստող միջոց է, որը հնարավորություն է տալիս կայացնել ռազմավարական և մարտավարական որոշումներ սեփական տնտեսական գործունեության զարգացման նպատակով \$ինանսական ռեսուրսներ ներգրավելու ուղղությամբ: Ընդ որում տեղեկատվության վերլուծության ժամանակ չպետք է սահմանափակվել միայն հաշվապահական հաշվեկշռի և հաշվետվությունների տվյալներով, այլ նաև պետք է վերլուծության ենթարկվեն այնպիսի ցուցանիշներ, որոնք բնութագրում են.

- տնտեսական գործունեության իրականացման նպատակով օգտագործվող ռեսուրսների շուկաների վիճակը,
- ճյուղի ինչպես նաև դրանում գործունեություն և իրականացնող տնտեսավարող սուբյեկտի մրցակցային դիրքերի և հեռանկարների բնութագիրը,
- տվյալ տարածաշրջանի տնտեսական իրավիճակը և զարգացման միտումները:

Աղյուսակ 4-ում ներկայացված է վարկունակության վերլուծության համար անհրաժեշտ տեղեկատվության պահանջվածության աստիճանը:

Աղյուսակ 4.

Վարկու նակոթյան վերլուծության համար անհրաժեշտ տեղեկատվության դասակարգումը

Վարկու նակոթյան վերլուծության հիմնական փուլերը			
Հաշվապահական հաշվետվություններ, այդ թվում	Տեղեկատվության աղբյուր		
	Նախնական	Օպերատիվ	Ռետրոսպեկտիվ
Հաշվապահական հաշվեկշիռ	Բ	Բ	Բ
Ծահույթի և վնասի վերաբերյալ հաշվետվություն	Բ	Բ	Բ
Կապիտալի փոփոխության վերաբերյալ հաշվետվություն	Բ	Ց	Մ
Դրամական միջոցների շարժի վերաբերյալ հաշվետվություն	Բ	Բ	Բ
Հաշվապահական հաշվեկշռի հավելված	Բ	Բ	Բ
Վիճակագրական մարմինների տեղեկատվություն	Բ	Ց	Մ
Հիմնադիր փաստաթղթեր	Բ	Ց	Ց
Մարկետինգային տեղեկատվություն	Բ	Բ	Մ
Առևդիտորական տեղեկատվություն	Բ	Ց	Մ
Հիմնական ֆոնդերի վերաբերյալ տեխնիկական փաստաթղթեր	Բ	Բ	Ց
Վարկի ապահովվածության վերաբերյալ ստուգումների հաշվետվություններ	Բ	Բ	Բ

Որտեղ՝ Բ- պահանջվածության բարձր աստիճան, Մ-միջին, Ց- ցածր :

Ինչպես երևում է աղյուսակ 4-ից, վարկի ապահովվածության վերաբերյալ տեղեկատվությունը կարևոր դեր ունի վերլուծության բոլոր փուլերում, քանի որ հնարավորություն է տալիս գնահատել վարկառուի կողմից սեփական պարտավորությունների չկատարման դեպքում հնարավոր կորուստները :

Նախնական վերլուծության փուլում կարևոր նշանակություն ունենում է վիճակագրական մարմինների, առևդիտորական և մարկետինգային տվյալները, ինչպես նաև հիմնադիր փաստաթղթերը, որոնք անհրաժեշտ են վարկային մասնագետներին վարկավորման նպատակահարմարության քննարկման վերաբերյալ որոշումներ

կայացնելու համար: Օպերատիվ վերլուծության փուլում առաջնահերթ նշանակություն ունեն հաշվեկշռի իրացվելիությունը, կենտրոնացվող դրամական միջոցների բավարարության աստիճանը՝ վարկային պարտավորությունների իրականացման համար: Ռետրոսպեկտիվ վերլուծության փուլում գնահատվում են այն գործոնները, որոնք ստացվում են վիճակագրական տվյալների, մարքեթինգային հետազոտությունների հիման վրա: Առևտրական եզրակացության վերլուծությունը հնարավորություն է տալիս բացահայտել վարկային պարտավորությունների կատարման փուլում դժվարությունների առաջացման պոտենցիալ հնարավորությունները:

Լրացուցիչ տեղեկատվության ստացման համար այլ փաստաթղթեր են հանդիսանում բիզնես պլանը, որն իր մեջ պարունակում է ապրանքների և ծառայությունների նկարագրությունը, ճյուղային և շուկայական կանխատեսումը, ինչպես նաև մարքեթինգային, ֆինանսական և մենեջմենթի պլանները, որոնք ցույց են տալիս արտադրական, դրամական և այլ ռեսուրսները կենտրոնացնելու և կառավարելու վարկառուի ընդունակությունը: Այսպիսով՝ բիզնես պլանը հնարավորություն է տալիս բացահայտել, թե ինչ պայմաններում են տրամադրվելու վարկային ռեսուրսները և արտացոլում է նախագծի իրականացման ռիսկի աստիճանը: Հարկային հայտարարագիրը բնութագրում է վարկառուի կարգապահությունը հարկերի վճարման հետ կապված, ինչը բանկին հնարավորություն է տալիս կողմնորոշվելու վարկային պարտավորությունների ճիշտ և ժամանակին կատարելու վարկառուի ընդունակության մեջ: Ներքին ֆինանսական հաշվետվությունների տվյալները հնարավորություն են տալիս դատել տարվա ընթացքում ֆինանսական վիճակի փոփոխությունների մասին:

Պետք է նշել նաև, որ տեղեկատվության վերլուծության ձևավորված համակարգը և դրա հավաքագրման աշխատատարությունը շատ դեպքերում հնարավորություն են տալիս լիարժեք կերպով բավարարել վարկատուների պահանջները վարկունակության վերլուծության ժամանակ, ինչի արդյունքում նվազում է դրա

գնահատման նպատակով կիրառվող մեթոդների արդյունավետությունը: Նշված խնդիրն հատկապես վառ կերպով է դրսևորվում փոքր և միջին ձեռնարկությունների դեպքում, որոնց վարկունակության վերլուծությունն ու գնահատումն ունի որոշակի առանձնահատկություններ: Նշված հարցերի ուսումնասիրությանն է նվիրված ատենախոսության հաջորդ բաժինը:

2.2. ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՂՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐԿՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՅՍԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Փոքր և միջին ձեռնարկությունների ֆինանսավորման աղբյուրների շարքում զգալի տեսակարար կշիռ են կազմում վարկային միջոցները, որոնք ձեռք բերման հարցում այդ սուբյեկտներն ունեն գաղափարավորություններ՝ հիմնականում պայմանավորված վճարունակության և վարկունակության ապահովման հետ: Վերջինիս գնահատման առումով գոյություն ունեն մի շարք բարդություններ, քանի որ փոքր և միջին ձեռնարկությունների ֆինանսական վիճակի վերլուծության համար տեղեկատվության աղբյուր են հիմնականում հաշվապահական (\$ֆինանսական) հաշվետվությունները, որոնք բավարար չեն նման վերլուծության իրականացման համար: Միաժամանակ փոքր և միջին բիզնեսի վարկավորման ծավալների ավելացումը բանկերի համար շահավետ է, ինչը պահանջում է սվյալ ոլորտի ձեռնարկությունների վարկունակության վերլուծություն և օբյեկտիվ կարծիքի ձևավորում:

Փոքր և միջին բիզնեսի սուբյեկտների վարկունակության տակ պետք է հասկանալ հաշվեկշռված ցուցանիշների համակարգի միջոցով նրանց գործունեության համալիր ֆինանսա-իրավական գնահատումը, որը հնարավորություն է տալիս որոշել բանկի վարկային ռիսկը, ՓՄՁ սուբյեկտի վարկային պարտավորությունների չափը և սահմանել վարկային ռիսկի մեծության կախվածությունը տնտեսավարող սուբյեկտի

վարկուհակույթուհից: ՓՄՁ սուբյեկտների վարկուհակույթուհը ձևավորվում է նրանց տնտեսական գործունեության արդյունքում և ցույց է տալիս, թե ինչքանով է մենեջմենթը արդյունավետ կերպով կառավարում \$ինանսական ռեսուրսները, ռացիոնալ օգտագործում սեփական կապիտալը և փոխառու միջոցները, ինչպիսին են տնտեսական գործունեության արդյունքները, գործընկերների հետ հարաբերությունները և այլն: Վերջնական արդյունքում, վարկուհակույթուհը մեծապես պայմանավորում է տվյալ տնտեսավարող սուբյեկտի մրցունակույթուհը և նրա տնտեսական ներուժը:

Առևտրային բանկերի համար վարկուհակույթան գնահատումն ունի չափազանց կարևոր նշանակույթուն վարկավորման վերաբերյալ ռացիոնալ որոշումների կայացման գործում: Միաժամանակ, պայմանավորված փոքր և միջին բիզնեսի սուբյեկտների առանձնահատկույթուններով, վերջիններիս վարկուհակույթան գնահատման համար պետք է կիրառել հատուկ մոտեցումներ, քանի որ ավանդական մեթոդները հնարավորություն չեն տալիս վարկուհակույթան վերաբերյալ ստանալ օբյեկտիվ գնահատական: Հարկ է նշել, որ վարկուհակույթան գնահատման գոյություն ունեցող մեթոդները հիմնականում կենտրոնանում են որակական և քանակական ցուցանիշների վրա և այդ առումով չկա համալիր մոտեցում: Բավարար չափով ուշադրություն չի դարձվում բիզնեսի սեփականատիրոջ գնահատմանը, ինչը խոչորդեռնարկույթունների դեպքում ավելի փոքր նշանակույթուն ունի: Այս տեսանկյունից, փոքր և միջին բիզնեսի վարկուհակույթան գնահատումն ունի առանձնահատուկ մոտեցումների ցուցաբերման կարիք: Մասնավորապես վարկավորման նպատակահարմարության, ինչպես նաև տրամադրված վարկի էֆեկտի գնահատումը գոյություն ունեցող մեթոդներում գրեթե հաշվի չի առնվում: Մինչդեռ նշված գործունը խիստ կարևոր է վարկառուի վարկուհակույթան գնահատման համար, քանի որ եթե վարկի տրամադրումը հանգեցնում է կազմակերպության գործունեության \$ինանսատնտեսական ցուցանիշների և \$ինանսական վիճակի վատթարացմանը, ապա բանկը կարող է բախվել դժվարությունների վարկի վերադարձման

հարցում: Շատ դեպքերում հաշվի չեն առնվում նաև այնպիսի գործոններ, ինչպիսիք են բիզնեսի դիվերսիֆիկացման աստիճանը և ճյուղային առանձնահատկությունները: Բավարար ուշադրություն չի հատկացվում նաև ձեռնարկության սեփականատերերի և ղեկավարության կառավարչական փորձին և հմտություններին: Ընդ որում վարկունակության գնահատման գոյություն ունեցող մեթոդներից ոչ մեկը հաշվի չի առնում փոքր և միջին բիզնեսի յուրահատուկ բնույթը: Այս առումով տվյալ ոլորտի սուբյեկտների վարկունակության գնահատման ժամանակ պետք է հաշվի առնել այնպիսի առանձնահատկություններ, ինչպիսիք են.

- տեղեկատվական հաշվետվողականության բացակայությունը, ինչի հետևանքով բանկերը վարկունակության վելոցություն ժամանակ հնարավորություն չեն ունենում անհրաժեշտ տեղեկատվություն ստանալ փոքր և միջին ձեռնարկությունների գործունեության բոլոր ասպեկտների վերաբերյալ,
- հարկային պարտավորությունների հնարավորինս նվազեցման նպատակով ոչ լիարժեք հաշվապահական հաշվառման իրականացումը, ինչի հետևանքով փոքր և միջին բիզնեսի սուբյեկտների պաշտոնական հաշվետվությունների վերլուծությունը դառնում է ոչ կոռեկտ: Բանկը պետք է նաև հաշվի առնի հարկային մարմինների կողմից հարկային հանցագործությունների հայտնաբերման հավանականությունը և դրա հետևանքները փոքր և միջին բիզնեսի համար, ինչն անխուսափելիորեն կանդրադառնա տվյալ սուբյեկտի կողմից սեփական վարկային պարտավորությունների կատարման վրա,
- վարկառուների ֆինանսական ցածր գրագիտությունը, հաշվետվությունների վարման վատ որակը, օրենքների չիմացությունն իրենց մեջ պարունակում են մեծ ռիսկեր բիզնեսի համար: Այս առումով բանկերի կողմից վարկի ստացման հայտերի քննարկման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ կարևոր գործոնը, այն է՝ արդյո՞ք ի վիճակի է

փոխառուներ գրագետ կերպով վարվել դրամական միջոցների հետ վարկի տրամադրման դեպքում,

- պրտենցիալ վարկառուի կողմից տնտեսական գործունեության իրականացման կարճ ժամկետները: Խոշոր հաճախորդների վերլուծության ժամանակ բանկերը սովորաբար դիտարկում են վերջին 3-5 տարվա կտրվածքով հաշվետվությանները՝ տվյալ սուբյեկտի ֆինանսական վիճակի դինամիկայի և ֆինանսական կայունության գնահատման համար: Փոքր և միջին բիզնեսի սուբյեկտներն ունեն կյանքի ավելի կարճ տևողություն և ավելի շատ ռեսուրսներ են պահանջում գործունեության իրականացման սկզբնական փուլում: Բանկերի համար նման իրավիճակը բավականաչափ ռիսկային է և շատ դեպքերում հանգեցնում է նոր գործունեություն սկսող փոքր և միջին բիզնեսի սուբյեկտների վարկավորումից հրաժարվելուն,
- փոքր և միջին բիզնեսի կենսունակության հարցում էական դեր ունեն հիմնադիրները և սեփականատերերը, որոնք շատ դեպքերում հանդես են գալիս որպես որոշում կայացնողներ: Նրանք են իրականացնում ձեռնարկության ղեկավարումն ու գործունեության պլանավորումը, բանակցություններ վարում գործընկերների և ֆինանսական հաստատությանների հետ: Բիզնեսի վարման նման մոտեցման դրական կողմը կայանում է որոշումների կայացման օպերատիվության և ճկունության մեջ, իսկ բացասական կողմն է սեփականատիրոջ հետաքրքրությունների գերակայությունը բիզնեսի շահերի հանդեպ, ինչպես նաև ազգակցական կապերի ազդեցությունը ֆինանսատնտեսական գործունեության վրա:
- ռեսուրսների նկատմամբ փոքր և միջին բիզնեսի սահմանափակ պահանջարկը, ինչի հետևանքով վարկի միջին չափը մոտ 5 մլն դրամ փոքր է, քան միջին բիզնեսում և տասնյակ մլն դրամ, քան խոշոր բիզնեսում⁵⁷:

Առևտրային բանկերը հանդես են գալիս որպես հիմնական շահագրգիռ կողմ փոխառության տրված վարկային միջոցների

⁵⁷ Нестеренко Ю., Малый бизнес: тенденции и ориентиры развития в современной России. РГГУ. М., 2007 г., стр. 89.

Ժամանակին և ամբողջ ծավալով վերադարձման հարցում: Յենց դրանով է պայմանավորված նրանց կողմից հաճախորդների վարկունակության համակողմանի վերլուծության անհրաժեշտությունը: Յարկ է նշել, որ հաճախորդների վարկունակության գնահատման հարցում բանկերի պարտավորությունը ՅՅ օրենսդրորեն կարգավորված է: Մինչդեռ որոշ զարգացած երկրներում վարկառուի վարկունակության ստուգումը բանկի համար օրենսդրորեն ամրագրված պարտավորություն է: Վարկունակության գնահատման ժամանակ բանկը պարտավոր է դիտարկել մի շարք ցուցանիշներ, որոնք հնարավորություն են տալիս առավել մեծ ճշգրտությամբ որոշել վարկառուի ֆինանսատնտեսական վիճակը և, դրանով պայմանավորված, նվազեցնել տրամադրված վարկային միջոցների հնարավոր չվերադարձման հետկապված ռիսկերը:

Մասնագիտական գրականության մեջ վարկունակության գնահատման չափորոշիչների շարքին են դասվում հաճախորդի ընդհանուր բնութագիրը, դրամական միջոցներ փոխառելու ընդունակությունը, ֆինանսական հնարավորությունները, վարկի ապահովվածությունը, գործարքի իրականացման պայմանները և վերահսկողությունը: Տեսականորեն նշված չափորոշիչները բնութագրական են բոլոր ձեռնարկությունների համար՝ թե՛ փոքր և միջին, թե՛ խոշոր: Սակայն գործնականում բանկերը փոքր և միջին ձեռնարկությունների հետ վարկային հարաբերություններում ունենում են որոշակի խնդիրներ: Դա, որպես կանոն, հիմնականում պայմանավորված է լինում բանկերի կողմից նշված ձեռնարկությունների գործունեության վերաբերյալ ցուցանիշների և հաշվետվությունների ուսումնասիրության բարդություններով: Մյուս խնդիրն այն, որ փոքր և միջին ձեռնարկությունների կողմից ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների արժանահավատության աստիճանը զգալիորեն ցածր է: Անշուշտ, նման իրավիճակը բանկերին հնարավորություն է տալիս վարկավորման վերաբերյալ կայացնել օբյեկտիվ որոշումներ:

Ընդհանրապես հաճախորդների վարկուճակության գնահատման համար բանկերի կողմից իրականացվում է ֆինանսական գործակիցների, դրամական հոսքերի և գործարար ռիսկի վերլուծություն: Ըստ եռլայն, բանկերը բոլոր ձեռնարկությունների (անկախ չափերից) վարկուճակության գնահատման ժամանակ կարող են դրանք իրականացնել: Սակայն գործնականում փոքր և միջին ձեռնարկությունների վարկուճակության գնահատման ժամանակ դրանցից ոչ բոլորն են կիրառվում անհրաժեշտ տեղեկատվության բացակայության պատճառով: Մասնավորապես հաշվետվությունների ժամանակին չներկայացնելու, ինչպես նաև դրանցում ներառված ցուցանիշների անբավարար արժանահավատության պատճառով ֆինանսական գործակիցների և դրամական հոսքերի լիարժեք վերլուծության իրականացումը դառնում է անհնար: Նման պայմաններում ձեռնարկությունում տիրող իրական վիճակի և վերջինիս վարկուճակության գնահատման վերաբերյալ օբյեկտիվ արդյունքների ստացումը, ըստ եռլայն, բացառվում է: Այսպիսով՝ չնայած վարկուճակության գնահատման համար գոյություն ունեցող մեթոդները համընդհանուր են բոլոր ձեռնարկությունների համար, սակայն փոքր և միջին բիզնեսի դեպքում անհրաժեշտ տեղեկատվության բացակայության պատճառով դրանց կիրառումը նպատակահարմար չէ: Պայմանավորված նշված հանգամանքներով՝ փոքր և միջին ձեռնարկությունների վարկուճակության գնահատման ժամանակ բանկի համար ծագում են որոշ խնդիրներ՝ ստեղծելով կորստի վտանգ ինչպես արտենցիալ հաճախորդների, այնպես էլ ֆինանսական միջոցների: Այս առումով անհրաժեշտ է դիտարկել այն խնդիրները, որոնք գոյություն ունեն կապված փոքր և միջին ձեռնարկությունների գործունեության հետ և որոնք զգալիորեն անդրադառնում են բանկի կողմից նման սուբյեկտների վարկուճակության գնահատման գործընթացի վրա: Մասնավորապես.

- փոքր և միջին ձեռնարկությունների գերակշիռ մասում բացակայում են գրավի առարկա հանդիսացող միջոցները, որոնք

հանդիսանում են վարկի վերադարձել ի ու թյ ու ն ն ապահովող երաշխքներ,

- փոքր և միջին ձեռնարկությունների գործունեության ցածր թափանցիկությունը, ինչի հետևանքով վարկունակության գնահատման առավել օբյեկտիվ մեթոդ է դառնում անձնական ֆինանսական պլանը, որը կազմվում է անհատական դիտարկումների հիման վրա,

- հարկման հատուկ ռեժիմները, որոնք ենթադրում են առանձին հարկերի գծով հարկային հայտարարագրերի պարզեցված ձևերի ներկայացում և ստեղծում են լուրջ խնդիրներ ֆինանսական գործակիցների գնահատման համար,

- արհեստավարժ հաշվապահության բացակայությունը մեծացնում է պաշտոնական հաշվետվություններում սխալների հավանականությունը, ինչը խանգարում է վարկունակության գնահատմանը, իսկ դրանցում որոշակի ժամանակաշրջանի համար պարունակվող տեղեկատվությունը չի կարող լիարժեք արտացոլել ՓՄՁ սուբյեկտի զարգացման միտումները,

- ֆինանսական տեղեկատվությունը պահանջում է դրա արժանահավատության մանրակրկիտ ստուգում, քանի որ ձեռնարկատերերի ցածր որակավորման պատճառով հնարավոր է մշակել որակյալ բիզնես պլան և տեխնիկատնտեսական հիմնավորումներ, ինչը անհրաժեշտ է վարկային ռեսուրսների ստացման համար,

- վարկերի փոքր ծավալը շատ հաճախ համադրելի է վարկառուի վարկունակության որոշման և մոնիթորինգի համար կատարվող ծախսերի հետ,

- փոքր և միջին ձեռնարկությունները, որպես կանոն, սեփական գործունեությունը չեն պլանավորում երկարաժամկետ հեռանկարի համար, ինչի պատճառով որոշները լքում են շուկան՝ չկարողանալով հարմարվել շուկայական կոնյուկտուրայի պահանջներին:

Անշուշտ, ինչպես պետությունը, այնպես էլ բանկային համակարգը պետք է շահագրգռված լինեն վերը նշված հիմնախնդիրների լուծման գործում, քանի որ փոքր և միջին բիզնեսի զարգացումը կենսական նշանակություն ունի

յուրաքանչյուր երկրի համար, ինչպես քաղաքական, այնպես էլ տնտեսական և սոցիալական բնույթի տարբեր հիմնախնդիրների լուծման տեսանկյունից: Միաժամանակ բանկային համակարգը ևս իր շահագրգռվածությամբ ունի տվյալ հարցում, քանի որ ոլորտի սուբյեկտները հանդես են գալիս վարկային ռեսուրսների նկատմամբ պահանջարկ ձևավորողներ և արդյունավետ կերպով գործելու պարագայում կարող են վարկային ռեսուրսների ձեռք բերման ճանապարհով զգալիորեն նպաստել բանկային համակարգի գործունեության ֆինանսատնտեսական ցուցանիշների բարելավմանը:

Շատ հաճախ բանկերը կազմակերպության վարկունակությունը գնահատում են ֆինանսական գործակիցների վերլուծության հիման վրա, որոնք բնութագրում են վարկառուի ֆինանսական վիճակը: Ընդ որում երբեմն այդ ցուցանիշները հաշվի չեն առնում ճյուղային առանձնահատկությունները, ինչն իր հերթին ստեղծում է լրացուցիչ դժվարություններ օբյեկտիվ գնահատականների ստացման համար: Այդ իսկ պատճառով անհրաժեշտություն է առաջանում ստեղծել ճյուղային միջինացված ցուցանիշների վիճակագրական տվյալների բազա, որը կբնութագրի ՓՄՁ սուբյեկտների ֆինանսատնտեսական գործունեությունն ամբողջությամբ և կնպաստի վարկունակության գնահատման ժամանակ օբյեկտիվ գնահատականների ստացմանը:

ՓՄՁ սուբյեկտների վարկունակության գնահատումը հիմնականում իրականացվում է այնպես, ինչպես մնացած կազմակերպությունների դեպքում, և բանկի կողմից գնահատման համակարգը կազմված է չորս փուլից.

1. ՓՄՁ սուբյեկտի գործունեության դիտարկում,
2. սեփականատիրոջ հետվարկային մասնագետի հարցազրույց,
3. սեփականատիրոջ անձնական ֆինանսական վիճակի գնահատում,
4. ՓՄՁ սուբյեկտի ֆինանսական վիճակի վերլուծությունն սկզբնական փաստաթղթերի հիման վրա:

Ըստ Ս. Լավրուշինի՝ վարկունակության գնահատման ավանդական մեթոդները կիրառելի չեն փոքր և միջին բիզնեսի համար՝ պայմանավորված ֆինանսական հաշվետվություններում

տեղ գտած սխալների զգալի քանակով⁵⁸: Այս առումով վարկուհակույթյան գնահատման ժամանակ քանակական ցուցանիշներին զուգահեռ կարևոր նշանակություն կարող են ունենալ որակական ցուցանիշների, ինչպես նաև բիզնեսի վրա ազդող արտաքին և ներքին գործոնների վերլուծությունը: Իհարկե, դա բավականաչափ բարդ է՝ պայմանավորված ինչպես տնտեսության առանձին ճյուղերի կտրվածքով ընդհանուր տեղեկատվական բազայի, այնպես էլ միասնական դասակարգիչների բացակայությամբ, որոնք հնարավորություն կտան վարկառուի վերաբերյալ այս կամ այն տեղեկատվությունը դասելու վարկուհակույթյան համապատասխան դասին:

Վարկային գործունեության արդյունավետության բարձրացման համար բանկերին անհրաժեշտ է որոշակի հարաբերակցություն ապահովել ռիսկի թույլատրելի աստիճանի և վարկային գործառնությունների շահույթաբերության միջև, ինչը ենթադրում է վարկուհակույթյան վրա ազդող արտաքին և ներքին գործոնների վերլուծություն և գնահատում՝ վարկային հայտերի գնահատման համակարգի կիրառման միջոցով: Սովորաբար նման համակարգերը հիմնվում են վերլուծության քանակական և որակական մեթոդների վրա: Որակական մեթոդները ենթադրում են այնպիսի չափորոշիչների գնահատում, ինչպիսիք են վարկառուի համբավը, շուկայում զբաղեցրած դիրքը, վարկային պատմությունը և այլն: Վերլուծության քանակական մեթոդները ենթադրում են ձեռնարկության ֆինանսական վիճակի համալիր վերլուծության իրականացում: Այս տեսանկյունից վարկուհակույթյան գնահատման նպատակով կիրառվող մեթոդների տարբերությունը հիմնականում կայանում է առանձին բանկերի կողմից ընտրվող այն գործոնների գնահատման մեջ, որոնք ազդում են վարկուհակույթյան վրա և հնարավորություն են տալիս առավել լիարժեք կերպով գնահատել փոխառուի ֆինանսական վիճակը: Բանկային գործունեության մեջ գոյություն ունեն նաև վարկուհակույթյան որոշման վարկանիշային և ոչ վարկանիշային մեթոդները:

⁵⁸ Банковские операции. Под ред. О. Лаврушина и др. КНОРУС. М., 2007 г. , стр. 163.

Այս ափսոսով՝ հարկավոր է նշել, որ շուկայական հարաբերությունների պայմաններում փոքր և միջին ձեռնարկությունները, պայմանավորված մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով, ունենում են Լուրջ դժվարություններ սեփական տնտեսական գործունեության կազմակերպման և իրականացման հարցում: Ըստ էության, հենց այդ հանգամանքով էլ պայմանավորված է տվյալ ոլորտի պետական աջակցության անհրաժեշտությունը: Այն հայտ է, որ փոքր և միջին ձեռնարկությունների արդյունավետ գործունեության իրականացման հարցում կարևոր նշանակություն ունի ֆինանսական ապահովվածությունը: Վերջինիս մակարդակի բարձրացման էականորեն կարող են նպաստել վարկային ռեսուրսները, ինչն իր հերթին ենթադրում է այդ սուբյեկտների վարկունակության ապահովում: Մյուս կողմից բանկային ոլորտը, ելնելով իր սեփական տնտեսական հետաքրքրություններից և շահերից, ձգտում է վարկային ռիսկերի հնարավորինս նվազեցմանը, որին որոշակիորեն կարող է նպաստել փոխառուների վարկունակության օբյեկտիվ գնահատումը: Այս տեսանկյունից, փոքր և միջին ձեռնարկությունների վարկունակության գնահատման համար անհրաժեշտ է մշակել այնպիսի մոտեցումներ, որոնք թույլ կտան առավելագույնս հաշվի առնել տվյալ սեկտորի առանձնահատկությունները: Այս առումով, բավականաչափ ուշագրավ է տվյալ ոլորտում կուտակված միջազգային փորձը, որի ուսումնասիրությունը կարող է որոշակիորեն նպաստել հանրապետությունում ՓՄՁ ոլորտի վարկունակության գնահատման մոտեցումների մշակմանը: Վերջինիս ուսումնասիրությանն է նվիրված աշխատանքի հաջորդ բաժինը:

**2.3. ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԶԵՆՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐԿՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ
ԳՆԱՐԱՏՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԻ ՎԵՐԼՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ**

Փոքր և միջին բիզնեսի զարգացման միջազգային փորձի վերլուծությունը վկայում է այն մասին, որ տնտեսության այդ սեկտորի մասնակցությունը երկրի տնտեսական զարգացման գործում շարունակաբար աճում է: Ընդ որում դա առաջին հերթին տեղի է ունենում ֆինանսավարկային աջակցության արդյունավետ համակարգի շնորհիվ, որն իրականացվում է փոքր և միջին ձեռնարկությունների ներդրումային ծրագրերի արտոնյալ վարկավորման միջոցով: Այս առումով բանկային վարկավորումը կարևոր նշանակություն ունի զարգացած և զարգացող երկրների փոքր և միջին բիզնեսի ֆինանսական ապահովվածության մակարդակի բարձրացման գործում, ինչի մասին են վկայում նաև աղյուսակ 5-ի տվյալները:

Աղյուսակ 5⁵⁹

ՓՄՁ վարկերի ծավալը ընդհանուր բիզնեսին տրամադրված վարկերի
մեջ

(տոկոսային արտահայտությամբ)


	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015
Սլովակիա	65.70	77.12	79.39	79.39	65.77	71.11	71.08	80.22	82.00
Պորտուգալիա	82.17	81.57	80.96	81.45	81.13	80.75	80.13	82.19	81.82
Շվեյցարիա	80.44	80.86	79.33	79.26	78.52	78.60	78.81	76.41	76.89
Կորեա	86.83	82.64	83.51	81.51	77.67	74.67	74.70	74.00	74.20
Չեխիա	63.86	65.24	67.28	70.20	70.73	70.15	70.08	69.82	69.77
Հունգարիա	62.40	60.60	60.00	54.50	54.40	63.50	66.20	62.24	67.19
Ճապոնիա	69.64	67.31	66.72	67.82	66.94	65.76	66.87	65.00	65.38
Իռլանդիա				63.89	67.82	67.51	66.89	67.32	64.78
Բելգիա	61.72	59.62	62.73	62.35	65.07	65.43	67.60	66.39	63.31
Իսպանիա								53.74	54.78
Հունաստան				38.50	36.84	38.82	49.75	50.57	52.65
Իսրայել	40.90	37.14	35.74	39.60	38.75	41.52	41.89	47.31	50.93

⁵⁹ Financing SMEs and entrepreneurs 2017 an OECD scoreboard. http://www.keepeek.com/Digital-Asset-Management/oecd/industry-and-services/financing-smes-and-entrepreneurs-2017_fin_sme_ent-2017-en#.Wc3sIY-CzGg#page28

Աղյուսակ 5-ի շարունակություն

Մալազիա	44.03	42.30	41.28	37.61	39.17	40.34	43.64	45.32	45.94
Վրաստան				36.43	34.39	34.84	36.22	36.07	42.94
Սլովենիա	43.45	40.71	39.59	46.43	48.75	51.14	40.29	38.47	41.01
Նոր Չեխիա			42.13	44.02	42.97	43.67	40.35	40.76	40.78
Միջին	40.24	34.55	35.74	38.45	37.80	38.82	38.70	38.47	40.78
Բրազիլիա		52.86	49.84	50.49	51.03	49.74	47.83	44.26	39.59
Նորվեգիա	42.88	43.65	40.40	41.03	40.35	40.04	36.23	36.84	37.96
Թուրքիա	40.24	33.92	31.82	35.68	35.70	38.20	38.54	38.22	35.89
Ավստրալիա	26.62	26.48	28.30	31.77	32.87	32.38	32.25	31.88	31.17
Կոլումբիա	32.67	30.18	27.70	25.58	29.66	30.61	30.11	28.01	25.71
Սերբիա	21.02	20.97	20.58	21.25	21.57	19.00	18.93	22.27	25.15
Էստոնիա	35.83	34.55	31.01	29.37	28.28	26.24	26.45	26.40	24.56
Մեքսիկա	13.05	12.34	19.99	20.54	20.52	22.61	23.96	24.81	23.80
Բեժ Բրիտանիա	19.76	18.10	20.02	21.36	21.13	21.51	22.13	22.52	22.51
ԱՄՆ	34.26	31.33	30.84	31.22	28.81	26.08	24.80	23.32	22.13
Ֆրանսիա	20.79	20.41	20.21	20.51	20.78	21.21	21.12	21.18	20.81
Իտալիա	18.77	17.93	18.32	18.97	18.34	18.37	18.67	18.92	18.69
Չիլի	16.65	15.19	17.50	18.23	17.48	17.74	16.88	17.99	18.56
Ռուսաստան		19.41	21.33	23.74	22.53	22.95	23.20	18.42	16.35
Կանադա	17.39	15.61	17.92	17.50	17.71	15.90	15.38	14.62	13.43
Չինաստան			54.60	56.58	60.45	64.55	64.94	63.84	
Շվեդիա						34.66	35.39	35.67	
Թայլանդ	28.10	26.60	26.90	38.40	36.80	37.60	38.70		

Ինչպես նկատում ենք աղյուսակ 5-ի տվյալներից, ընդհանուր վարկային պորտֆելի մեջ ՓՄՁ ոլորտի վարկերի տեսակարար կշռի միջին ցուցանիշը 2007-2015 թվականներին կազմել է մոտ 38 տոկոս: Նշված ժամանակահատվածում միջին ցուցանիշն ունեցել է հետևյալ դինամիկան:



Գծապատկեր 5. ՓՄՁ վարկերի միջին ծավալը ընդհանուր բիզնեսին տրամադրված վարկերի մեջ 2007-2015 թվականներին (տոկոսային արտահայտույթ)⁶⁰:

Ինչպես նկատում ենք, ՓՄՁ ոլորտին հատկացված վարկերի միջին ծավալը 2007-2008 թվականներին ունեցել է անկում, իսկ հետագայում գրանցել է տատանողական աճ:

Պետք է նշել, որ ՓՄՁ ոլորտին տրամադրված վարկերի կառուցվածքում կարճաժամկետ վարկերը (որոնք հիմնականում տրամադրվում են գերփոքր և փոքր ձեռնարկույթույններին) 2007-2015 թվականներին միջին հաշվով կազմել են 34 տոկոս: Փաստորեն կարելի է ասել, որ գերփոքր և փոքր ձեռնարկույթույնները հանդիսանում են հիմնական վարկառու (տես՝ աղյուսակ 6):

Աղյուսակ 6⁶¹

⁶⁰ Financing SMEs and entrepreneurs 2017 an OECD scoreboard. http://www.keepeek.com/Digital-Asset-Management/oecd/industry-and-services/financing-smes-and-entrepreneurs-2017_fin_sme_ent-2017-en#.Wc3sIY-CzGg#page28

Կարճ աժամկետ վարկերի տեսակարար կշիռը ՓՄՁ ընդհանուր վարկերի մեջ (տոկոսային արտահայտությամբ)

Երկիր	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015
Ավստրիա	59.82	54.59	52.17	52.43	51.06	48.76	41.21
Բելգիա	38.52	37.91	32.08	31.45	31.5	29.48	28.74	28.02	26.68
Բրազիլիա	..	36.95	31.85	28.55	28.38	26.25	24.19	22.87	22.13
Կանադա	41.62	..	43.4	36.3	35.13	39	46	55.6	47.2
Չիլի	60.2	63.27	60.28	47.76	41.94	36.87
Չինաստան	56.1	49.24	47.56
Կոլումբիա	19.44	26.3	23.11	22.02	25.02	24.69	23.96	23.4	23.73
Դանիա	64.7	74.57	78.79	64.73	70.53	51.49	38.95	11.98	..
Էստոնիա	19.73	19.09	17.74	16.76	19.39	18.74	19.2	19.62	18
Ֆինլանդիա	20.2	20.44	20.82	17.9	18.29	19.6
Ֆրանսիա	27.2	25.69	22.7	22.08	22.04	21.9	22.64	22.54	22.32
Հունաստան	51.66	51.23	47.84	38.26	37.25	40.13	36.92	37.57	37.58
Հունգարիա	64.2	67.7	77.4	78.6	77.1	78.8	56.9	59.7	66.1
Իռլանդիա	89.07	88.62	89.09	86.69	86.9	85.08	83.34	75.46	62.04
Իտալիա	33.94	31.87	29.25	26.83	26.35	26.6	25.64	25.14	23.62
Կորեա	75.01	73.42	70.28	68.72	66.32	63.9	61.89	59.35	56.35
Մալազիա	3.34	3.03	2.64
Նիդեռլանդներ	..	54.6	57.1	47.9	52.6	49.2	49.8	44.89	46.1
Նորվեգիա	19.26	18.6	16.79	16.85	16.72	18.87	18.73	19.05	20.41
Պորտուգալիա	32	31	32.94	31.09	29.77	23.91	22.94	19.41	17.84
Սերբիա	34.98	31.67	34.2	34.17	30.28	27.21	33.33	29.56	24.55
Սլովակիա	50.45	39.67	41.4	41.4	39.51	40.6	42.22	45.24	35.79
Սլովենիա	28.62	31.19	27.33	28.54	31.55	33.47	30.51	18.22	14.7
Իսպանիա	96.19	96.92	93.54	93.33	95.4	95.21	93.33	92.47	92.77
Եվեդիա	15.12	14.68	13.62	14.39	14.67	22.71	22.5	24.83	..
Միջին	36.75	36.95	34.2	34.17	31.55	33.47	33.33	28.02	26.68

Միջազգային արակտիկայում ձևավորված են վարկավորման երեք հիմնական մոդելներ՝ ամերիկյան, գերմանական և ֆրանսիական, որոնցից յուրաքանչյուրն ունի իր առանձնահատկությունները: Ամերիկյան մոդելը ենթադրում է փոքր և միջին բիզնեսի

⁶¹ Financing SMEs and entrepreneurs 2017 an OECD scoreboard. http://www.keepeek.com/Digital-Asset-Management/oced/industry-and-services/financing-smes-and-entrepreneurs-2017_fin_sme_ent-2017-en#.Wc3sIY-CzGg#page28

աջակցության պետական ենթակառուցվածքների և առևտրային վարկային կազմակերպությունների գույքահեռ գոյություն, որոնցից յուրաքանչյուրն իրականացնում է վարկավորում իր անունից և իր միջոցների հաշվին: Գերմանական մոդելը ենթադրում է պետության միջնորդավորված մասնակցություն և դրա էությունը կայանում է ՓՄՁ պետական վարկավորման ժամանակ առևտրային վարկային կազմակերպություններին որպես միջնորդներ օգտագործելու մեջ: Ինչ վերաբերում է ֆրանսիական մոդելին, ապա դրա հիմնական բնութագրիչ կողմը փոխադարձ երաշխիքների վրա հիմնված գործունեությունն է: Ընդ որում գոյություն ունեցող բոլոր մոդելների համար ընդհանուր է պետության մասնակցությունը տարբեր ձևաչափով, ինչպես վարկային գործարքի մասնակիցների գործունեության իրավական երաշխիքների ապահովման, այնպես էլ կոնկրետ ֆինանսական օգնության տրամադրման հարցում:

ԱՄՆ-ում ՓՄՁ ոլորտի վարկավորման համար ստեղծված է Փոքր բիզնեսի ադմինիստրացիան, որի մասնաճյուղերը գործում են երկրի ամբողջ տարածքում և ֆինանսավորվում են դաշնային կառավարության կողմից⁶²: Հատկանշական է այն հանգամանքը, որ ադմինիստրացիայի կողմից տարեկան կտրվածքով տրամադրվում են մոտ 60 հազար վարկային երաշխիքներ 10 մլրդ ԱՄՆ դոլար արժողությամբ, իսկ ցուցաբերվող ֆինանսական օգնության մոտ 90 տոկոսը տրամադրվում է երաշխիքների տեսքով: Որպես երաշխիքների տրամադրման վճար ադմինիստրացիան գանձում է փոխառության 1 տոկոսը (բանկից կամ վարկառուից), ինչը բավականաչափ շահեկան է ՓՄՁ սուբյեկտի համար⁶³: Գործունեության մեխանիզմն ունի քայլերի հետևյալ հերթականությունը. 1. ՓՄՁ սուբյեկտը առևտրային բանկին ներկայացնում է համապատասխան փաստաթղթեր վարկ ստանալու համար, 2. առևտրային բանկը հայտը ներկայացնում է ադմինիստրացիայի քննարկմանը, 3. եթե ստացվում է վարկավորման վերաբերյալ համաձայնություն, ապա ադմինիստրացիան հանդես է

⁶² Association of Small Business Development Centers, <http://www.asbdc-us.org/>
⁶³ Association of Small Business Development Centers, <http://www.asbdc-us.org/>

գալ իս որպես վարկի երաշխավոր և միաժամանակ ապահովագրում է բանկի վարկային ռիսկը, 4. առևտրային բանկը ՓՄՁ սուբյեկտին է տրամադրում վարկային միջոցները:

Գերմանական մոդելը ենթադրում է ՓՄՁ ոլորտի վարկավորում իրականացնող մասնավոր ֆինանսական ինստիտուտների պետական ֆինանսավորում: Ցուցաբերվող աջակցության արդյունավետության բարձրացման նպատակով համապատասխան գործառույթները տրված են հանրային իրավունքի տարբեր ինստիտուտներին և, մասնավորապես, մասնագիտացված բանկերին (որպես այդպիսին հանդես է գալիս KfW բանկը) և առևտրաարդյունաբերական պալատներին: Վերջիններիս գործունեության հիմնական ուղղությունը առևտրային բանկերի միջոցով ՓՄՁ սուբյեկտների վարկավորումն է: Այսինքն, մասնագիտացված բանկը վերահսկում է վարկային հայտերը, դրանք փոխանցում է վերը նշված բանկերին և տրամադրում է ՓՄՁ սուբյեկտներին հայցվող գումարները⁶⁴: Նման սխեման KfW բանկին հնարավորություն է տալիս արտոնյալ ֆինանսավորումն իրականացնել ճկուն և շուկայական կոնյուկտուրային համապատասխան՝ միաժամանակ պահպանելով չեզոք դիրք միմյանց հետ մրցակցող բանկերի միջև: Առևտրային բանկերն իրենց վրա վերցնում են ռիսկերի առնվազն 50 տոկոսը, կապված վարկի չվերադարձման հետ: Ռիսկերի մնացած մասն իր վրա է վերցնում KfW բանկը: Ընդ որում ինչքան մեծ ռիսկ է իր վրավերցնում առևտրային բանկը, այնքան մեծ մարժա է ստանում որպես KfW բանկի միջնորդ: Վարկավորման գործընթացն ըստ քայլերի հաջորդականության կարելի է ներկայացնել հետևյալ կերպ: 1. ՓՄՁ սուբյեկտը առևտրային բանկին է ներկայացնում վարկային հայտ, 2. առևտրային բանկը վերլուծում է հայտը և այն փոխանցում է KfW բանկին ռիսկի բաժնի հաշվարկով, որը բանկը պատրաստ է վերցնել իր վրա, 3. KfW բանկը քննարկում է փոխառուի փաստաթղթերը՝ համաձայնելով ապահովագրել ռիսկի մնացած մասը և արտոնյալ վարկ է տրամադրում առևտրային բանկին, 4. վերջինս, ստանալով արտոնյալ վարկ KfW բանկից, միջոցները փոխանցում է ՓՄՁ սուբյեկտին նախապես

⁶⁴ Брюмер С., Система поддержки малого предпринимательства в Германии. Деньги и кредит, 2001 г., №7, стр. 13-20.

համաձայնեցված տոկոսադրույքով: Պետք է նշել, որ արտոնյալ վարկավորումը Գերմանիայում ֆինանսական աջակցության առավել տարածված եղանակներից մեկն է: Բացի այդ սկսնակ բիզնեսը նույնպես օգտվում է ֆինանսական աջակցության այդպիսի եղանակներից: Մասնավորապես նոր ստեղծվող բիզնեսի ներդրումային ծրագրի մինչև 40 տոկոսը կարող է համաֆինանսավորվել առանց երաշխիքների տրամադրման, հատուկ արտոնյալ վարկի միջոցով: Որպես կանոն, նման վարկերը առաջին երկու տարիների համար անտոկոս են, կամ էլ 10 տարվա կտրվածքով արտոնյալ են և ենթակա չեն վերադարձման և կազմում են մինչև 1 մլն եվրո⁶⁵: Ըստ էության, դրանք փոխարինում են նորաբաց ձեռնարկության սեփական կապիտալին, քանի որ պետությունն ամբողջությամբ իր վրա է վերցնում դրանց չվերադարձման ռիսկը: Չատկանշական է, որ առևտրային բանկերը պայմանագիր են կնքում պետական կառույցի հետ վարկի վերաֆինանսավորման վերաբերյալ, իսկ պետական ծրագրերի շրջանակներում վարկերի տրամադրումն իրականացվում է միայն վարկուհու ձեռնարկության ներքին համար:

Ֆրանսիական մոդելի ուշագրավ կողմերից մեկն այն է, որ երկրում գործում է փոխադարձ երաշխիքների միություն, որի հիմնադիր և անդամ են հանդիսանում փոքր և միջին ձեռնարկությունները: Առևտրային բանկերի կողմից ՓՄՁ սուբյեկտների վարկավորումն իրականացվում է միայն հիշյալ կազմակերպության հետ փոխգործակցության արդյունքում: Վերջինս ՓՄՁ սուբյեկտի վերաբերյալ ամբողջ տեղեկատվությունը փոխանցում է բանկին, որոշում է վարկի տրամադրման նպատակահարմարության հարցը: Կազմակերպության անդամակցող ընկերությունների կողմից վճարվող վճարների հաշվին ձևավորվում է երաշխիքային ֆոնդ, որն օգտագործվում է անդամների վնասների, ինչպես նաև վարկային ռիսկերի փոխհատուցման համար: Ըստ էության, այդ կազմակերպությունն է հանդես գալիս անդամակցող ընկերությունների վարկուհու ձեռնարկության գնահատողի և վարկի տրամադրման

⁶⁵ Брюмер С., Система поддержки малого предпринимательства в Германии. Деньги и кредит, 2001 г., №7, стр. 13-20.

վերաբերյալ որոշում կայացնողի դերում: Երկրում գործում է նաև փոքր և միջին ձեռնարկությունների վարկային ռիսկերի ապահովագրության պետական բաժնետիրական ընկերությունը⁶⁶: Պետությունն, իր միջոցներով մասնակցելով վարկային ռիսկերի ապահովագրությանը, չի միջամտում ոչ բանկի, ոչ էլ պետական բաժնետիրական ընկերության գործունեությանը: Այս դեպքում ուղիղ կապը գործում է նշված ընկերության և բանկերի, այլ ոչ թե ՓՄՁ սուբյեկտների միջև: Վարկավորման քայլերի հերթականությունը հետևյալն է. 1. ՓՄՁ սուբյեկտը բանկին ներկայացնում է համապատասխան փաստաթղթեր վարկ ստանալու համար, 2. առևտրային բանկն այդ փաստաթղթերը փոխանցում է փոխադարձ երաշխիքների միություն, 3. միությունը, ստուգելով փաստաթղթերը, տալիս է համաձայնություն վարկային գործարքի իրականացման համար և դառնում է ՓՄՁ սուբյեկտի երաշխավոր, 4. առևտրային բանկը փաստաթղթերն ուղարկում է փոքր և միջին ձեռնարկությունների վարկային ռիսկերի ապահովագրության պետական բաժնետիրական ընկերություն, 5. վերջինիս համաձայնության դեպքում նա ապահովագրում է բանկի վարկային ռիսկը⁶⁷:

ՓՄՁ ոլորտի վարկավորման միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ սեփական բիզնեսի ֆինանսավորման համար կարող են օգտագործվել ներդրողների կամ վարկատուների միջոցները: Սակայն վերջին դեպքում պահանջվում են որոշակի երաշխիքներ ստացված միջոցների և համապատասխան տոկոսավճարների հետ վերադարձման համար: Ըստ էության, բանկերը նախընտրում են արագ շրջանառությունն ապահովող միջոցները, այսինքն՝ մեկ տարով կարճաժամկետ վարկերի տրամադրումը, սակայն ձեռնարկատիրոջ տեսանկյունից դրանք ընդամենը ժամանակավոր պահանջմունքների բավարարում են ապահովում: Կարճաժամկետ վարկերի պարագայում միշտ է, որ պահանջվում է գրավի առարկա և շատ հաճախ բանկերը հիմնվում են փոխառուի

⁶⁶ Зубченко Л., Тенденции во взаимоотношениях французских банков с малыми и средними предприятиями. Экономика. 2005 г., №4, стр. 85-90.

⁶⁷ Бухвальд Е., Виленский А., Гарантии по европейским кредитам - реальная помощь малому бизнесу. Финансовый бизнес, 2000 г., №6, стр. 29-33.

վարկուհիները անվանվում են: Այլ է պատկերը երկարաժամկետ վարկերի պարագայում, որոնք ձեռնարկատիրոջը հնարավորություն են տալիս իրականացնել առավել խոշոր ծրագրեր՝ հիմնական \$ոնդերի, սարքավորումների, տեխնիկայի ձեռքբերման, սակայն դրանց տրամադրումը պահանջում է իրացվելի ակտիվներով ապահովվածություն:

Չարգացած երկրներում ներկայումս կիրառվում են փոխառուի վարկուհիները գնահատման բազմաթիվ մեթոդներ, որոնք պայմանականորեն կարելի է դասակարգել երկու հիմնական խմբի:

Առաջին խումբն իր մեջ ընդգրկում է որակավորման մեթոդները, որոնք իրենց մեջ ներառում են.

1. գնահատման վարկանիշային համակարգի կիրառմամբ մեթոդները,
2. կանխատեսումային մեթոդները:

Երկրորդ խումբն իր մեջ ընդգրկում է վարկառուի գործունեության համալիր վերլուծության հիման վրա մշակված մեթոդները:

1. 6C-ի մեթոդը (SixSigma – Character (համբավ), Capacity (\$ի նախնական հնարավորություններ), Capital (սեփական կապիտալ, գույք), Collateral (ապահովվածություն), Conditions (ընդհանուր տնտեսական պայմաններ), Control (վերահսկողություն):
2. CAMPARI մեթոդ, որը ենթադրում է որակական և քանակական ցուցանիշների կիրառում: C (Character)-համբավ, հաճախորդի բնութագիր (անձնական որակներ), A (Ability)-վարկի վերադարձման ընդունակություն (փոխառուի բիզնեսի գնահատում), M (Margin)-մարժա, եկամտաբերություն, P (Purpose)-վարկի նպատակ, A (Amount)-վարկի չափ, R (Repayment)-վարկի մարման պայմաններ, I (Insurance)-ապահովվածություն, վարկի չմարման ռիսկի ապահովագրություն:
3. PARTS մեթոդ, որը ենթադրում է վարկառուի այնպիսի բնութագրիչների վերլուծություն, ինչպիսիք են P (Purpose)-վարկի ստացման նպատակը, A (Amount)-վարկի չափը, R (Repayment)-վերադարձը և վճարումը, T (Term)-վարկի տրամադրման ժամկետը, S (Security)-վարկի մարման ապահովվածությունը:

Տարբեր երկրներում ընկերությունների վարկունակության և ֆինանսական վիճակի գնահատումն իրականացվում է հետևյալ մեթոդների և ցուցանիշների միջոցով:

Աղյուսակ 7⁶⁸.

Վարկունակության գնահատման մեթոդները զարացած երկրներում

Մոտեցում	Երկիր	Կիրառվող գործակիցները	Վերլուծության ժամանակահատվածը	Առավելությունները	Թերությունները
6C-1 կանոն	ԱՄՆ	Փոխառուի կողմից գործունեության ամբողջ ընթացքում ձեռնարկատիրական գործունեությունից ստացված դրամական հոսքերի ծավալ, կապիտալի կառուցվածք	Նախորդ հաշվետու ժամանակաշրջան	Քանակական և որակական ցուցանիշների վերլուծություն, արտաքին գործոնների գնահատում	Սուբյեկտիվ-վիզմ, մաթեմատիկական մեթոդների ոչ բավարարման վածունություն
CAMPARI	ԱՄՆ, Եվրոպական երկրներ	Ընկերության իրացվելիության ցուցանիշներ, կապիտալի շրջանառելիության ցուցանիշներ, միջոցների ներգրավման ցուցանիշներ, շահույթաբերության ցուցանիշներ	Նախորդ հաշվետու ժամանակաշրջան	Հաճախորդի համալիր վերլուծություն՝ հաշվի առնելով վարկավորման նպատակը և ռիսկի ապահովագրությունը	Սուբյեկտիվ-վիզմ, մաթեմատիկական մեթոդների ոչ բավարարման վածունություն

⁶⁸ Ендовицкий Д., Любушин Н., Бабичева Н., Ресурсоориентированный экономический анализ: теория, методология и практика. Экономический анализ: теория и практика, 2013 г., № 38, стр. 2-8.

PARTS	Անգլիա	Դրամական միջոցների ներհոսքը և արտահոսքը, հաշվեկշռի վերլուծությունը. Երկարաժամկետ պարտավորությունների և սեփական միջոցների հարաբերակցությունը, կայուն սեփական ռեսուրսների և ակտիվների հարաբերակցությունը, ծախերի և կորուստների դինամիկան արտադրության աճի տեմպերի համեմատությունը		Քանակական ցուցանիշների, դրամական միջոցների շարժի վերլուծությունը	
-------	--------	--	--	---	--

Ինչպես նկատում ենք, տարբեր երկրներում վարկուսակության գնահատման հիմնական խնդիրներից մեկը վարկային ռիսկերի նվազեցումն է: Այս առումով բանկերի համար բազային ստանդարտ է հանդիսանում բանկային վերահսկողության վերաբերյալ Բազելյան կոմիտեի փաստաթղթերում ամրագրված ռիսկերի գնահատման սկզբունքները, համաձայն որոնց վարկուսակության գնահատումը պետք է պարունակի կազմակերպության գործունեության վերաբերյալ ամբողջ կարևոր տեղեկատվությունը՝ հաշվի առնելով ճյուղի առանձնահատկությունները, որոնցում գործում է պոտենցիալ փոխառուն⁶⁹: Ընդ որում հիշյալ փաստաթղթերով պահանջվում է, որ \$ինանսավարկային կազմակերպությունը պետք է տիրապետի յուրաքանչյուր վարկի շարժի վերաբերյալ տեղեկատվության երկարատև ժամանակահատվածի կտրվածքով, որպեսզի հնարավորություն ունենա գնահատել վարկառուի սնանկացման հավանականությունը և դրա հետ կապված կորուստները:

Բազել 2-ը սահմանում է բանկերի կապիտալի բավարարության նկատմամբ պահանջները, ինչպես նաև որոշում է հիմնական ռիսկերի

⁶⁹ Международная конвергенция измерения капитала и стандартов капитала: новые подходы. <http://www.cbr.ru/today/ms/bn/basel.htm>

գնահատան մոտեցումները⁷⁰: Այն կազմված է երեք մասից. կապիտալի նվազագույն պահանջներ (minimum capital requirements), վերահսկողության գործընթաց (supervisory review process), շուկայական դիսցիպլինա (market discipline): Ընդ որում առաջարկվում է վարկային ռիսկը գնահատել երկու հիմնական մոտեցումով՝ ստանդարտացված մոտեցում (standardised approach), ներքին վարկանիշների համակարգի հիման վրա մոտեցում (internal ratings-based approach): Առաջինի դեպքում բանկը փոխառուի վարկային ռիսկը գնահատելիս օգտագործում է արտաքին վարկանիշային գործակալության ներքին տվյալները:

Այսպիսով՝ զարգացած երկրներում փոքր և միջին ձեռնարկությունների վարկունակության գնահատման առանձնահատուկ մեթոդներ գոյություն ունեն, սակայն պետությունն իր անմիջական կամ ուղղորդված մասնակցությամբ ձևավորում է որոշակի մեխանիզմներ, որոնք ստեղծում են համապատասխան նախադրյալներ առևտրային բանկերի կողմից նշված սուբյեկտների վարկավորման համար: Գոյություն ունի ևս մեկ կարևոր հանգամանք, այն է՝ զարգացած երկրներում ՓՄՁ ոլորտի գործունեության ընդհանուր տնտեսական միջավայրը բարենպաստ է և առկա են անհրաժեշտ պայմաններ տվյալ ոլորտի արդյունավետ զարգացման համար, ինչը նվազեցնում է ՓՄՁ ոլորտի վարկավորման ռիսկայնության մակարդակը: Տնտեսական զարգացումների անկանխատեսելիության պայմաններում փոքր և միջին ձեռնարկությունների վարկունակության ապահովման հիմնական երաշխավորի դերը կարող է ստանձնել միայն պետությունը, համապատասխան մեխանիզմների ներդրմամբ: Նշված հարցերին է նվիրված աշխատանքի հաջորդ բաժինը:

⁷⁰ Качаева М. Оценка кредитного риска в коммерческом банке. Банковское кредитование. 2009г. № 1. www.garant.ru.

**ԳԼՈՒԽ 3. ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿՈՒ ԹՅՈՒՆՆԵՐԻ
ՎԱՐԿՈՒՆԱԿՈՒ ԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ
ԿԱՏԱՐԵԼ ԱԳՈՐԾՄԱՆ ՈՒ ՂՂՈՒ ԹՅՈՒՆՆԵՐԸ**

**3.1. ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿՈՒ ԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ
ՅԻՄՆԱՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԴԻԱՆՑ ԼՈՒՃՄԱՆ ՈՒ ԴԻՆԵՐԸ ՅՅ-ՈՒ Մ**

Ընդհանուր առմամբ, ցանկացած երկրի տնտեսության զարգացում ենթադրում է փոքր, միջին և խոշոր ձեռնարկությունների միջև օպտիմալ հարաբերակցության ձևավորում: Հանդիսանալով շուկայական մեխանիզմի առանցքային տարրերից՝ փոքր և միջին ձեռնարկատիրությունը կարևոր դեր է խաղում երկրի տնտեսության կայուն զարգացման գործում: Չարգացած երկրներում տվյալ ոլորտը իրականացնում է մի շարք կարևոր սոցիալ-տնտեսական գործառույթներ, ինչպիսիք են՝ զբաղվածության ապահովումը, մրցակցային միջավայրի ձևավորումը, սոցիալական կայունության ապահովումը և այլն:

Փոքր և միջին ձեռնարկությունների տնտեսական ներուժի իրացման հիմնական գործոններից մեկը ընթացիկ գործունեության և ներդրումային ծրագրերի իրականացման համար ֆինանսական ռեզուրսների ստացման հնարավորությունն է: Այս տեսանկյունից, հանրապետությունում տվյալ ոլորտի սուբյեկտների վարկային

շուկան գտնվում է ձևավորման փուլում և բավականաչափ խնդիրներ կան դրա կայացման և արդյունավետ գործունեության ուղղությամբ: Իհարկե, պետք է նկատի ունենալ, որ ՓՄՁ սուբյեկտները, որպես կանոն, չեն պահանջում մեծածավալ ներդրումներ, սակայն գործունեության որոշակի փուլերում դրանք չեն կարող գործել առանց փոխառումի ջանքերի:

Հանրապետությունում ՓՄՁ ոլորտի վարկավորման պայմանները դեռևս չի կարելի համարել բարենպաստ հատկապես վարկային բարձր տոկոսադրույքների, գրավի առարկայի բացակայության և միջարքայլ գործունեության պատճառով: Միաժամանակ վարկային ռիսկերի բարձր մակարդակը փոքր և միջին ձեռնարկությունների վարկավորումը առևտրային բանկերի համար դարձնում է բարդ խնդիր: Հետևաբար դրա լուծմանն ուղղված մոտեցումների մշակումը պետք է դիտարկել երկու տեսանկյունից՝ վարկառուների (ՓՄՁ սուբյեկտների) և վարկատուների (\$ինանսական ինստիտուտների): Գրավի առարկայի բացակայությունը հնարավոր է լուծել ոչ գրավային վարկային ծառայությունների մատուցման, ինչպես նաև պետական և համայնքային սեփականություն հանդիսացող չօգտագործվող գույքային \$ոնդերի ստեղծման միջոցով, որոնք կարող են օգտագործվել որպես գրավի առարկա: Իսկ վարկային բարձր տոկոսադրույքների որոշակի մասը կարելի է սուբսիդավորել պետական բյուջեի միջոցների հաշվին:

Բացի այդ, կարևոր նշանակություն ունի նաև ՓՄՁ սուբյեկտների սեփականատերերի իրավական և տնտեսական գրագիտության բարձրացումը: Ակնհայտ է, որ սեփական գործունեության վերլուծության, սեփական և փոխառումի ջանքերի արդյունավետ կառավարման համար նրանք պետք է տիրապետեն որոշակի տեղեկատվության և գիտելիքների: Նշված խնդրի լուծումը պետք է հանդիսանա ոլորտի պետական աջակցության կարևոր ուղղություններից՝ ենթադրելով նաև այդ գործընթացում համապատասխան շահագրգիռ կառույցների ներգրավում: Առևտրային բանկերը ևս պետք է ձեռնարկեն ՓՄՁ ոլորտի վարկավորման ուղղությամբ որոշակի քայլեր՝ մասնավորապես ուղղված հատուկ այդ սուբյեկտների համար նախատեսված վարկային

ծառայությունների մշակմանը, որոնք հաշվի կառնեն ՓՄՁ սուբյեկտների բոլոր առանձնահատկությունները: ՓՄՁ ոլորտի վարկավորման արդյունավետության բարձրացման նպատակով անհրաժեշտ է կիրառել տվյալ բիզնեսի գնահատման հատուկ տեխնոլոգիաներ, որոնք հիմնված կլինեն ինչպես ֆինանսատնտեսական, այնպես էլ կառավարչական գործունեությունը բնութագրող ցուցանիշների վրա: Ընդհանուր առմամբ ոլորտի պետական ֆինանսավորումը պետք է կրի համալիր և համակարգված բնույթ՝ կիրառելով ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի ներգործության մեխանիզմներ: Առաջինները պետք է անմիջականորեն ուղղված լինեն ՓՄՁ սուբյեկտներին, իսկ երկրորդները՝ դրանց զարգացման համար անհրաժեշտ արտաքին բարենպաստ պայմանների ստեղծմանը:

Ակնհայտ է, որ տնտեսական զարգացման գործում ՓՄՁ ոլորտն ունի անփոխարինելի դեր, և տրամաբանորեն այն պետք է հանդիսանա պետական քաղաքականության հիմնական գերակայություններից: Սակայն առանց տվյալ ոլորտի ֆինանսավորման զարգացած համակարգի հնարավոր չէ ակնկալել այդ ուղղությամբ ցանկալի արդյունքներ:

ՓՄՁ վարկավորումը ֆինանսական ինստիտուտների և ոլորտին պատկանող սուբյեկտների միջև փոխհարաբերությունների բարդ մեխանիզմ է և պահանջում է համալիր և համակարգված մոտեցման ցուցաբերում: Ընդ որում խնդրի լուծման գործում իրենց համապատասխան մասնակցությունը պետք է ունենան ՓՄՁ սուբյեկտները (սեփական գործունեության թափանցիկության և ֆինանսական հաշվետվությունների արժանահավատության մակարդակի բարձրացման ուղղությամբ), պետությունը (բանկային երաշխիքների տրամադրման ուղղությամբ) և առևտրային բանկերը (ՓՄՁ ոլորտի առանձնահատկություններից բխող վարկային ծառայությունների մատուցման ուղղությամբ): Այս առումով, ՓՄՁ ոլորտի բանկային վարկավորման կատարելագործման նպատակով անհրաժեշտ է հետևյալ միջոցառումների իրականացումը. ՓՄՁ աջակցության գործուն, հասցեական ու նպատակային մեխանիզմների օրենսդրորեն ամրագրում, ՓՄՁ վարկավորման ստանդարտների

համակարգի կատարելագործում, վարկավորման պայմանների աստիճանական բարելավում, start-up նախագծերի զարգացում, վարկային բյուրոների գործունեության ակտիվացում:

ՓՄՁ սուբյեկտների վարկավորման գործընթացին պետական աջակցության ֆինանսական համակարգի զարգացման համար անհրաժեշտ է.

- փոքր և միջին ձեռնարկությունների գործունեության համար բարենպաստ իրավական, տնտեսական և վարչական պայմանների ստեղծում,
- պետական ներդրումային միջոցների նպատակաուղղում տնտեսության այն ոլորտներ և ճյուղեր, որոնց գործունեությունն ուղղակիորեն առնչվում է փոքր և միջին բիզնեսի հետ,
- պետության կողմից վարկային ռիսկերի որոշակի մասի ստանձնում:

Վարկավորման ոլորտում ցանկալի արդյունքների ստացման համար անհրաժեշտ է առևտրային բանկերի ու ՓՄՁ սուբյեկտների միջև գործընկերային հարաբերությունների ձևավորում, տվյալ ոլորտի համար նախատեսված և վերջինիս առանձնահատկությունները հաշվի առնող բանկային հատուկ ծառայությունների մատուցում, վարկային ռիսկերի նվազեցմանն ուղղված քայլերի իրականացում, լիզինգային հարաբերություններում ՓՄՁ ոլորտի մասնակցության ապահովում: Պետք է նկատի ունենալ նաև մի հանգամանք, որ ներկայումս ՓՄՁ ոլորտին տարբեր կառույցների կողմից տրամադրվող վարկերը հիմնականում ունեն կարճաժամկետ բնույթ, ինչը գործնականում հնարավորություն չի տալիս իրականացնել երկարաժամկետ նախագծեր: Յետևաբար կարևոր խնդիր է հանդիսանում ներդրումային ֆինանսավորման հարցը, որի լուծմանը կարող է որոշակիորեն նպաստել լիզինգը:

Հայաստանի Հանրապետությունում փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտում գոյություն ունեն մի շարք հիմնախնդիրներ, որոնք ուղղակիորեն և անուղղակիորեն

անդրադառնում են այդ ոլորտի վարկավորման գործընթացի վրա: Անդրադառնանք դրանցից հիմնականներին:

Փոքր և միջին ձեռնարկատիրության գործունեության ոչ բավարար թախանցիկությունը: Եթե խոշոր ձեռնարկությունները ներդրում են կորպորատիվ կառավարման արևմտյան սկզբունքները, ներգրավում են առաջատար վարկանիշային և աուդիտորական ընկերություններին սեփական ֆինանսական վիճակի գնահատման և վարկային գնահատական ստանալու համար, ապա ՓՄՁ սուբյեկտների համար դասեփական հնարավորությունների սահմաններից դուրս է: Նման իրավիճակում ՓՄՁ սուբյեկտների վարկունակության գնահատումն իրականացվում է ներբանկային մեթոդներով: Ֆինանսական հաշվետվություններում ներառվող տեղեկատվությունը բավարար չէ ընկերության վճարունակությունը գնահատելու համար, իսկ այդ նպատակով կիրառվող մեթոդները օբյեկտիվ գնահատական ապահովել չեն կարող: ՓՄՁ սուբյեկտների կողմից ներկայացվող վարկային հայտերի քննարկման պարզեցված կարգի բացակայությունն իր հերթին վարկավորման հետկապված լրացուցիչ դժվարություններ է ստեղծում: Պետք է նշել նաև, որ շատ հաճախ բանկերում բավարար չեն բարձր որակավորում ունեցող մասնագետները, որոնք կկարողանան որակյալ մոտեցումներ ցուցաբերել ՓՄՁ սուբյեկտների վարկունակության գնահատման հարցում:

Սկսնակ, կամ այսպես կոչված, Start-up բիզնեսի վարկավորման արդյունավետ մեխանիզմների բացակայությունը: Անշուշտ, փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտների վարկունակության հետ կապված խնդիրներն առավել ցայտուն կերպով են դրսևորվում սկսնակ բիզնեսի պարագայում: Գործնականում, կարելի է ասել, այն լիովին զրկված է ավանդական եղանակներով վարկավորման հնարավորությունից: Ինչ խոսք, սկսնակ բիզնեսի վարկավորման ռիսկայնության մակարդակը համեմատաբար բարձր է ՓՄՁ մյուս սուբյեկտների համեմատությամբ, ինչը ենթադրում է տվյալ սեգմենտի վարկավորման ուղղությամբ նոր մոտեցումների կիրառում:

ՓՄՁ ոլորտի պետական աջակցության արդյունավետ համակարգի բացակայությանը: Չնայած հանրապետության նույնպես արդեն տարիներ շարունակ գործում է «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքը, որով հռչակվում են այդ ուղղությամբ պետական քաղաքականության հիմնական ուղղության ներքին, այդուհանդերձ, տվյալ հարաբերության ներքին կարգավորող օրենսդրական դաշտը և պետական ծրագրերը հիմնականում կրում են հռչակագրային բնույթ: Ընդ որում «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքով պետական աջակցության հիմնական ուղղության ներքին մեկն է հռչակվում նաև «Ֆինանսական և ներդրումային աջակցությունը, երաշխիքների տրամադրումը»⁷¹: Չնայած սահմանված բարձր նպատակներին՝ դրանց ձեռքբերմանն ուղղված գործունե և արդյունավետ միջոցներն ու մեխանիզմները բացակայում են:

Հայաստանի Հանրապետության նույնպես գոյություն ունեցող քաղաքական և տնտեսական գործոնների համախումբը անխուսափելիորեն իրենց ազդեցությունն են թողնում ՓՄՁ ոլորտի բանկային վարկավորման վրա: Անկայուն տնտեսական իրավիճակում բանկային համակարգն առավել հակվածություն է ցուցաբերում բիզնեսի կարճաժամկետ կարիքների ֆինանսավորման հարցում՝ վարկավորման խիստ պայմանների կիրառմամբ՝ դրանով իսկ փորձելով նվազեցնել գոյություն ունեցող ռիսկերը:

Հանրապետության ՓՄՁ վարկավորման ոլորտում գոյություն ունեցող հիմնախնդիրները կարելի է բաժանել մի քանի խմբի:

Առաջին խումբը կապված է քաղաքական և տնտեսական գործոնների հետ, երկրորդ խմբում ընդգրկված հիմնախնդիրները գտնվում են բանկերի, իսկ երրորդը՝ վարկառուների մակարդակում: Պետք է նշել, որ երկրորդ և երրորդ խմբերում ընդգրկված վարկավորման հիմնախնդիրները առավել ասես առաջին խմբի հիմնախնդիրների հետևանք են: Անդրադառնանք դրանցից յուրաքանչյուրին:

⁷¹ «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենք:

1. Քաղաքական և տնտեսական գործունեների հետ կապված հիմնախնդիրների շարքում հատկապես առանձնանում են ոչ կայուն տնտեսական իրավիճակը, ձեռնարկատիրական գործունեության բարձր ռիսկերը, գնաճի մակարդակը և վերաֆինանսավորման տոկոսադրույքի չափը, որոնք էականորեն անդրադառնում են վարկավորման գործընթացի վրա: Նման հիմնախնդիրների պայմաններում միայն փոքր և միջին ձեռնարկատիրական պետական աջակցության գործուն համակարգի պայմաններում է հնարավոր լուծել այդ սուբյեկտների ֆինանսական ապահովվածության և, մասնավորապես, վարկային ռեսուրսների հասանելիության բարձրացման խնդիրը: Որպես հիմնական ուղիներ կարող են դիտարկվել ՓՄՁ ոլորտին պետության կողմից տրամադրվող ֆինանսական աջակցության ծավալների ավելացումը, ոչ բանկային վարկային կազմակերպությունների զարգացումը, արտոնյալ վարկավորման ծրագրերի իրականացումը և այլն:

2. Բանկային մակարդակում գտնվող հիմնախնդիրներ: Այս շարքում հիմնականը, թերևս, տոկոսադրույքն է: Բանկերը ՓՄՁ սուբյեկտներին վարկավորում են բավականաչափ բարձր տոկոսադրույքով, որն իր հերթին կախված է մի քանի գործոններից, դրանք են՝ փոխառուի ֆինանսական վիճակը, վարկային պայմանագրի ժամկետը և վարկի ապահովվածության ձևը: Փոխառուի գործունեության տեսակը և վարկի նպատակային օգտագործումը ներկայումս վարկային տոկոսադրույքի հիմնական ուղղորդիչներն են: 2008-2016 թվականներին հանրապետությունում առևտրային բանկերի կողմից տրամադրված վարկերի տոկոսադրույքներն ունեցել են հետևյալ դինամիկան:

Աղյուսակ 8⁷²

⁷² Աղյուսակը կազմվել է ՀՀ կենտրոնական բանկի պաշտոնական կայքում տեղադրված տվյալների հիման վրա (www.cba.am):

Առևտրային բանկերի կողմից տրամադրված վարկերի
տոկոսդրույքները ՀՀ-ում 2008-2016 թվականներին (դեկտեմբեր
ամսվա դրությամբ)

	Վարկերի միջին տոկոսադրույք (մինչև 1 տարի ժամկետով՝ բացառությամբ ցածրանշանի)		1 տարուց ավելի	
	ՀՀ դրամով	ԱՄՆ դոլարով	ՀՀ դրամով	ԱՄՆ դոլարով
2008	16.50	13.83	16.36	16.96
2009	18.79	13.19	16.88	15.25
2010	18.90	12.28	17.07	13.24
2011	17.69	12.21	17.92	12.50
2012	15.99	10.91	17.55	12.19
2013	15.04	10.47	18.29	11.85
2014	16.21	9.79	17.08	12.33
2015	15.96	10.51	16.62	11.13
2016	15.47	8.10	16.01	9.79

Փաստորեն նշված ժամանակահատվածում վարկի միջին տոկոսադրույքը մինչև 1 տարի ժամկետով տրամադրված վարկերի համար կազմել է 16.72 (ՀՀ դրամով տրամադրված վարկերի համար) և 11.25 տոկոս (ԱՄՆ դոլարով տրամադրված վարկերի համար): Համեմատության համար ներկայացնենք տարբեր երկրներում միայն ՓՄՁ ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքները:

Աղյուսակ 9.⁷³

ՓՄՁ ոլորտին հատկացվող վարկերի տոկոսադրույքը
(տոկոսային արտահայտությամբ)

Երկիր	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015
Ավստրալիա	8.56	7.99	7.56	8.29	7.94	7.07	6.44	6.18	5.58
Ավստրիա	5.11	5.47	2.89	2.43	2.92	2.46	2.28	2.27	2.02

⁷³ Financing SMEs and entrepreneurs 2017 an OECD scoreboard. http://www.keepeek.com/Digital-Asset-Management/oecd/industry-and-services/financing-smes-and-entrepreneurs-2017_fin_sme_ent-2017-en#.Wc3sIY-CzGg#page28

Բել գիա	5.45	5.7	3.01	2.51	2.88	2.32	2.06	2.09	1.83
Բրազիլիա	20.28	21.63	25.18	30.6
Կանադա	7.5	..	6.2	5.8	5.3	5.4	5.6	5.1	5.1
Չիլի	9.22	11.3 2	12.55	11.8	10.33	9.29
Չինաստան	8.39	7.51	5.23
Կոլոմբիա	20.09	23.13	20.43	18.66	14.3 4	14.68	13.24	13.54	14.69
Չեխիա	5.03	5.57	4.64	4.01	3.73	3.48	3.13	3.76	2.7
Դանիա	6.08	6.37	5.13	4.31	4.31	3.59	3.53	3.54	3.05
Էստոնիա	6.09	6.69	5.32	5.05	4.89	4	3.4	3.28	3.04
Ֆինլանդիա	5.39	5.58	3.02	2.66	3.23	2.86	2.81	2.94	2.96
Ֆրանսիա	5.1	5.42	2.87	2.48	3.11	2.43	2.16	2.08	1.78
Վրաստան	16.51	15.5	14.52	11.58	10.73	12.7
Հունաստան	6.57	6.82	4.62	5.53	6.77	6.87	6.51	5.8	5.38
Հունգարիա	10.19	11.25	12.31	8.99	9.38	9.7	7.4	5.1	4.7
Իռլանդիա	6.23	6.67	3.98	3.88	4.68	4.34	4.3	4.78	4.77
Իսրայել	5	5.6	5.52	4.89	4.22	3.9
Իտալիա	6.3	6.3	3.6	3.7	5	5.6	5.4	4.4	3.84
Կորեա	6.95	7.49	6.09	6.33	6.25	5.83	5.06	4.65	3.91
Լյուքսեմբուրգ	5.51	5.72	2.81	2.71	2.68	2.22	2.05	2.08	1.89
Մալազիա	..	6.39	5.5	5.69	5.74	5.72	5.8	7.16	7.35
Մեքսիկա	11.88	11.7	11.2 6	11.04	9.8	9.14	9.08
Նիդեռլանդներ	..	5.7	4.5	6	6.4	5.1	4.3	4.1	4.4
Նոր Զելանդիա	12.15	11.19	9.82	10.12	10.0 2	9.55	9.53	10.26	9.41
Պորտուգալիա	7.05	7.64	5.71	6.16	7.41	7.59	6.82	5.97	4.6
Ռուսաստան	13.1	16.09	16.44

Աղյուսակ 9-ի շարունակություն

Սերբիա	10.69	10.9	10.57	10.06	9.72	8.56	8.5	7.99	6.58
Սլովակիա	5.5	4.6	3	3.2	3.2	3.8	3.6	3.8	3.4
Սլովենիա	6.03	6.78	6.29	6.12	6.38	6.25	6.19	5.89	4.53
Իսպանիա	5.96	5.51	3.63	3.78	4.95	4.91	4.79	3.86	3.01
Ճվեդիա	4.86	5.66	2.43	2.59	4.17	4.07	3.29	2.71	1.75
Ճվեյցարիա	2.21	2.11	2.08	2.01	1.99	2.05	2.07
Թայլանդ	5.94	6.34	6.6	7.14	8.1	7	6.4
Մեծ Բրիտանիա	..	4.54	3.47	3.49	3.52	3.71	3.6	3.43	3.33
ԱՄՆ	7.96	5.1	3.71	4.02	3.9	3.73	3.53	3.38	3.32

ՄԻՋԻՆ	6.16	6.34	4.5	5.05	5.3	5.52	4.98	4.4	3.91
--------------	-------------	-------------	------------	-------------	------------	-------------	-------------	------------	-------------

Ինչպես նկատում ենք, հանրապետությանում առևտրային բանկերի կողմից տրամադրված վարկերի տոկոսադրույքների չափն էականորեն գերազանցում է շատ զարգացած և զարգացող երկրներում ՓՄՁ ոլորտին հատկացվող վարկերի տոկոսադրույքի միջին ցուցանիշը: Անշուշտ, դա ՓՄՁ ոլորտի ֆինանսական ապահովվածության մակարդակը նվազեցնող և զարգացումը խոչընդոտող գործոններից մեկն է: Կարծում ենք՝ հանրապետությանում ՓՄՁ ոլորտին տրամադրվող վարկային տոկոսադրույքը պետք է տարբերակվի՝ ելնելով փոխառուի գործունեության տեսակից: Հաջորդ կարևոր հիմնախնդիրը գրավի առարկայով ապահովվածությունն է, որը շատ հաճախ հանրապետությանում գործող առևտրային բանկերի համար վարկի տրամադրման պարտադիր պայման է: Միևնույն ժամանակ պետք է նշել, որ 2008-2016 թվականներին հանրապետությանում բանկային համակարգի վարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը ունեցել է աճման միտումներ՝ 2008 թվականի 17.8 տոկոսից 2016 թվականին հասնելով 45.8 տոկոսի (տես՝ աղյուսակ 10):

Աղյուսակ 10⁷⁴

ՀՀ բանկային համակարգի ակտիվների և վարկերի հարաբերակցությունը ՀՆԱ-ին 2006-2016 թվականներին

%	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016
Բանկային համակարգի ակտիվներ / ՀՆԱ	28.7	42.2	45.1	54.7	61.8	69.0	70.3	68.5	78.7
Բանկային համակարգի վարկեր / ՀՆԱ	17.8	23.4	27.4	33.6	40.2	42.1	42.7	39.8	45.8

⁷⁴ www.cba.am

Այս ափսոսով՝ վարկավորման առումով հանրապետության ունում հիմնական դերը պատկանում է առևտրային բանկերին, ինչով պայմանավորված կարևորվում է տվյալ գործընթացում գոյություն ունեցող հիմնախնդիրների, մասնավորապես փոքր և միջին ձեռնարկությունների վարկունակության գնահատման հետ կապված խնդիրների լուծման նոր մոտեցումների մշակումը:

3. ՓՄՁ մակարդակում գտնվող հիմնախնդիրներ: Թերևս հիմնական խնդիրը սկսնակ բիզնեսի ֆինանսավորման դժվարություններն են: Կարծում ենք, այս դեպքում հիմնական դերակատարումը պետք է պատկանի պետությանը, որը կամ ուղղակի ֆինանսավորման, կամ երաշխիքների տրամադրման միջոցով կապահովի այդ խնդրի լուծումը: Հատկապես պետական երաշխիքը համարվում է ապահովվածության բավականաչափ իրացվելի տեսակ և վարկային ռիսկերի հեջավորման արդյունավետ եղանակ:

Ինչպես նկատում ենք, ՓՄՁ ոլորտի բանկային վարկավորումն ունի իր յուրահատուկ դժվարություններն ու առանձնահատկությունները, որոնք անխուսափելիորեն անդրադառնում են վարկավորման մեխանիզմի և կիրառվող բանկային տեխնոլոգիաների, ռիսկերի կառավարման եղանակների և վարկատուի ու վարկառուի փոխհարաբերությունների վրա: Մեր կարծիքով, հանրապետության ՓՄՁ վարկավորման ոլորտում գոյություն ունեն միմյանց հետ փոխկապակցված հիմնախնդիրների երեք խումբ, որոնք անհրաժեշտ է լուծել համալիր կերպով, և որը կարող է տեղի ունենալ միայն պետական մակարդակով:

Մակրոմիջավայրի վրա ազդող հիմնական գործոններ են հանդիսանում.

1. Երկրի տնտեսության զարգացման մակարդակը, որն էականորեն անդրադառնում է բանկերի վարկային գործունեության վրա: Կայուն զարգացող տնտեսությունն, ակնհայտորեն, նպաստում է ՓՄՁ ոլորտի վարկային ռիսկերի կրճատմանը, երկարաժամկետ վարկային միջոցների առաջարկի ավելացմանը և վարկավորման ուղղությունների ընդլայնմանը: Նման իրավիճակում բանկերը հնարավորություն ունեն վարկային բիզնեսը զարգացնել

բնակչությանը ներգրավված միջոցներով կորպորատիվ սեկտորի վարկավորման ավելացման հաշվին: Որպես կանոն, տնտեսական ստացնացիայի պայմաններում փոքր և միջին բիզնեսի վարկավորման ուղղությամբ առևտրային բանկերի քաղաքականությանը կրում է ընտրովի և խիստ զգուշավոր բնույթ՝ հատկապես պայմանավորված գործունեության ոլորտներով, դրանց սեզոնայնությամբ և եկամուտների տատանողական բնույթով, ինչից ելնելով բանկերը կիրառում են որոշակի սահմանափակումներ: Դրան զուգահեռ վարկային կազմակերպությանները սեփական վարկային պորտֆելը ձևավորում են՝ ելնելով ժամկետայնությանը և կողմնորոշվելով դեպի արագ, կարճաժամկետ և երաշխավորված եկամտի ստացմանը, հրաժարվելով բարձր ռիսկայնության ունեցող, այդ թվում նաև ներդրումային ծրագրերի վարկավորումից: Ավելին, որոշ դեպքերում հենց ՓՄՁ սուբյեկտներն են խուսափում երկարաժամկետ միջոցների ներգրավումից՝ պայմանավորված տնտեսական իրավիճակի անկանխատեսելիությամբ և սեփական բիզնեսի հեռանկարների անորոշությամբ: Անշուշտ, բնակչության (որը ՓՄՁ սուբյեկտների կողմից թողարկվող ապրանքների և մատուցվող ծառայությանների հիմնական սպառողներից է) վճարունակ պահանջարկի անկումը ևս իր բացասական անդրադարձն է ունենում տվյալ ոլորտի գործունեության վրա՝ մեծացնելով վարկավորման ռիսկերը:

2. Պետության հարկային և բյուջետային քաղաքականության առաջնահերթությունները: Յուրանքանչյուր երկրի պետական ֆինանսական քաղաքականությանն ունի որոշափ առաջնահերթություններ, որոնցից է նաև ՓՄՁ ոլորտի զարգացումը: Ընդ որում դա ենթադրում է ոչ միայն ուղղակի ֆինանսավորում, այլ նաև տվյալ ոլորտին հատկացվող վարկային միջոցների սուբսիդավորում: Բնականաբար պետության կողմից ցուցաբերվող նման ուղարկության զուտ փաստը տնտեսության մյուս գործակալների, այդ թվում նաև բանկերի մոտ ստեղծում է որոշակի հետաքրքրություն: Միաժամանակ պետք է նկատի ունենալ, որ կարևոր է պետության ոչ միայն զուտ ներկայությունը, այլ նաև դրա մասշտաբները, պետական ռեսուրսների օգտագործման

արդյունավետությունը և հիմնավորվածությունը կոնկրետ ուղղություններով: Սակայն ներկայումս հանրապետությունում այդ առումով գոյություն ունի որոշակիորեն պարադոքսալ իրավիճակ: Չնայած փոքր և միջին բիզնեսը պետության կողմից հռչակված է որպես գերակա ոլորտ, այդուհանդերձ բանկային համակարգն առանձնապես շահագրգռվածությունն չի ցուցաբերում նրավարկավորման համար: Դավկայում է ոլորտի հանդեպ վարվող պետական քաղաքականության թերացումների մասին, որի վկայություններինց մեկը կարելի է համարել իրականացվող հարկային քաղաքականությունը: Չնայած պետական մակարդակով կարևորվում է ՓՄՁ ոլորտի զարգացումը և այդ նպատակով \$ինանսական ռեսուրսների մատչելիության բարձրացումը, մյուս կողմից փորձ է արվում ոլորտի հաշվին ապահովել լրացուցիչ հարկային եկամուտներ՝ ավելացնելով վերջիններիս հարկային բեռը: Մինչդեռ բարձր հարկերը նվազեցնում են փոխառուի վարկունակությունը և նրանց վարկավորման նկատմամբ բանկերի հետաքրքրվածությունը: Արդյունքում բանկերը կորցնում են արտենցիալ հաճախորդներին, իսկ ՓՄՁ ոլորտի մասշտաբները և գործունեությունն իրականացնող սուբյեկտների թիվը գնալով նվազում է:

3. Դրամավարկային քաղաքականությունը և Կենտրոնական բանկի կողմից կիրառվող կարգավորման գործիքները: Փողի շրջանառության արագությունը, տնտեսության մոնետիզացիայի մակարդակը, դրամական զանգվածի ծավալն իրենցից ներկայացնում են որոշակի գործոններ, որոնք պայմանավորում են տնտեսության և ազգային արժույթի հանդեպ տնտեսավարող սուբյեկտների ու բնակչության վստահությունը և մեծապես կախված են իրականացվող դրամավարկային քաղաքականությունից: Միաժամանակ առևտրային բանկերի վարկային ակտիվության վրա անդրադարձնում են ԿԲ կողմից սահմանվող պարտադիր նորմերը, դրանց քանակը, սահմանված ցուցանիշները և այլն:

4. \$ինանսական շուկայի վիճակը, որն առևտրային բանկերի վարկային ռեսուրսների հիմնական աղբյուրներից է: Դրա հիմնական սեգմենտների ենթակառուցվածքային ապահովվածության

բարձրացումը, դրանց միջոցով ներգրավվող ռեսուրսների արժեքը, ֆինանսական շուկայի թափանցիկությունը անմիջական ազդեցություն ունեն բանկերի վարկային քաղաքականության և ռազմավարության վրա, այդ թվում նաև ՓՄՁ ոլորտի վարկավորման ուղղությամբ:

Անշուշտ, վերը նշված հիմնախնդիրների լուծումը հանրապետությունում ՓՄՁ ոլորտի զարգացման, այդ թվում նաև վերջինիս ֆինանսական ապահովվածության մակարդակի բարձրացման հիմնական նախադրյալներից է: Բնականաբար հանրապետության բանկային համակարգում ևս գոյություն ունեն որոշակի ներքին գործոններ, որոնք անդրադառնում են ՓՄՁ ոլորտի նկատմամբ իրականացվող վարկային քաղաքականության վրա: Դրանցից են.

1. մասնագետների որակավորումը, ինչպես նաև ՓՄՁ վարկավորման գործընթացն սպասարկող աշխատակիցների մոտիվացման համակարգը: Խնդիրն այն է, որ տվյալ ոլորտի վարկավորումը պահանջում է որոշակի տեխնոլոգիաների կիրառում, ցանցային զարգացած համակարգ, ՓՄՁ սուբյեկտների գործունեության ոլորտների վերաբերյալ մանրակրկիտ տեղեկացվածություն, ռիսկերի գնահատման արդյունավետ մոնիտորինգի համակարգ:
2. Առևտրային բանկերի ռեսուրսները և դրանց կառավարման ռազմավարությունը: Ռեսուրսների կառուցվածքը, դրանց կայունությունը, երկարաժամկետությունը, արժեքը պայմանավորում են բանկի հնարավորությունները ներգործելու ակտիվների կառուցվածքի վրա, որոնց մի մասն էլ հենց ՓՄՁ վարկային արտֆելն է:
3. Ռիսկի նկատմամբ հակվածությունը և դրա կառավարման հնարավորությունները: Այս գործոնը պայմանավորում է բանկի վարկային քաղաքականության տիպը՝ պահպանողական, չափավոր, ագրեսիվ, որոնք գործնականում դրսևորվում են ռիսկի տարբեր աստիճան ունեցող վարկային ծառայությունների մատուցման, վարկունակության գնահատման տարբեր մեթոդների, վարկավորման վերաբերյալ որոշումների կայացման մեխանիզմների կիրառման միջոցով: Ռիսկերի կառավարման բանկի ներքին հնարավորությունները

կախված են սեփական կապիտալի մեծություներից և առկա ռեզերվների ծավալից:

Այսպիսով՝ վերը նշված արտաքին և ներքին գործոնների խմբերը կարող են ինչպես խթանել, այնպես էլ զսպել առևտրային բանկերի ՓՄՁ վարկային արտֆելի վրա ազդող ուժերի գործողությունը: Յետևաբար այդ ուղղությամբ հիմնավորված քաղաքականությունը կարող է նպաստել Յայաստանի Յանրապետությունում ՓՄՁ ոլորտի վարկավորման հետ կապված խնդիրների մասնակի կամ ամբողջական լուծմանը:

Շուկայական տնտեսության պայմաններում մեծանում է առավել մատչելի վարկային ռեսուրսների ձեռքբերման անհրաժեշտությունը, որոնք կապիտալի վերարտադրության հիմնական կատալիզատորն են: Տնտեսական գործունեության արդիականացումն առաջին հերթին կապված է տեխնոլոգիական թարմացման հետ, ինչը պահանջում է ֆինանսական ներդրումներ: Վերջիններիս դերում հիմնականում հանդես են գալիս վարկային միջոցները, որոնց ձեռքբերման ուղղությամբ գործունեությունը տնտեսավարող սուբյեկտների հիմնական խնդիրներից է: Այս համատեքստում իր կարևոր նշանակությամբ հատկապես առանձնանում է միկրովարկավորումը, որը նպաստում է հատկապես ՓՄՁ սուբյեկտների ֆինանսական հնարավորությունների ընդլայնմանը և հնարավորություն է տալիս փոխառում միջոցները կենտրոնացնել առավել ցանկալի ուղղություններով: Ընդհանուր առմամբ միկրովարկը պետք է դիտարել հետևյալ ասպեկտներով: Առաջին՝ որպես վերադարձելիության, ժամկետայնության և վճարովիության սկզբունքներով մեկ անձից մյուսին փոխառում միջոցների տրամադրման առիթով ծագող տնտեսական հարաբերությունների համակարգ: Երկրորդ՝ որպես ձեռնարկատիրական գործունեության ռեսուրսային ապահովվածությանն ուղղված պետության աջակցության համակարգի օղակ: Երրորդ՝ որպես որոշակի դրամական միջոց, այսինքն գրավային ապահովվածությունն չպահանջող կարճաժամկետ վարկ: Միկրոֆինանսավորման ծրագրերի հիմնական առավելություններից մեկն այն է, որ ֆինանսական միջոցների տրամադրման համար

հիմնականում գրավի առարկա չի պահանջվում, դրանց վերադարձելիության ապահովման նպատակով կիրառվում են ոչ ավանդական եղանակներ ու ձևեր, ինչպիսին է խմբակային վարկավորումը: Սակայն այս դեպքում յուրաքանչյուր վարկառուի համար կիրառվում է անհատական գնահատում, ինչը թանկացնում է ամբողջ գործընթացը և հիմնականում դրանով է պայմանավորված այն հանգամանքը, որ միկրովարկերի տոկոսադրույքներն ավելի բարձր են: Սակայն շնորհիվ պարզության, ինչպես նաև պայմանավորված գրավային ապահովվածության պարտադիր չլինելով, այն բավականաչափ հեռանկարային է ՓՄՁ ոլորտի ֆինանսավորման համար: Այդ հանգամանքով պայմանավորված՝ միկրֆինանսավորումը իրականացնող կազմակերպությունների ստեղծման և գործունեության խթանումը պետք է դառնա պետական աջակցության կարևոր ուղղություններից: Վարկին բնորոշ հատկանիշներից բացի միկրովարկն ունի նաև առանձնահատուկ գծեր, օրինակ՝ կողմնորոշում հաճախորդների նպատակային (հիմնականում նույնական հատկանիշներով օժտված) խմբերին:

ՓՄՁ վարկավորման զարգացման նպատակով առաջարկվում է կիրառել ծրագրանպատակային մեթոդներ, որոնք կապահովեն որոշակի փոխկապակցվածություն Ժամկետների, ռեսուրսների և գործող սուբյեկտների կտրվածքով: Այդ ուղղությամբ պետական միջոցառումների մասով անհրաժեշտ է.

- բիզնեսի վարման պայմանների թափանցիկության բարձրացում, տնտեսության զարգացման կանխատեսելիության ապահովում, որը ՓՄՁ զարգացման նախապայման է և վարկավորման խթանման անուղղակի պայման,
- պետական մակարդակով ՓՄՁ սուբյեկտներին երաշխիքներ տրամադրող կառույցի ստեղծում,
- պետություն-մասնավոր հատված գործընկերության մեխանիզմի զարգացում՝ խոշոր ենթակառուցվածքային նախագծերում խոշոր ընկերությունների հետ միասին ՓՄՁ սուբյեկտների ներգրավման միջոցով,
- առևտրային բանկերի հարկման նկատմամբ հատուկ մոտեցումների կիրառում՝ մասնավորապես ՓՄՁ

վարկավորումից ստացվող եկամուտների մասով՝ միաժամանակ տարբերակված մոտեցումներ ցուցաբերելով և ներդրումային ու երկարաժամկետ վարկերի մասով կիրառելով ցածր դրույքաչափեր:

Պետք է նշել, որ ՓՄՁ սուբյեկտների գործունեության, ինչպես նաև նրանց վարկունակության գնահատման հետկապված գոյություն ունի ևս մեկ կարևոր առանձնահատկություն՝ պայմանավորված սովերային շրջանառությամբ: Հիմնականում հարկային վճարումներից խուսափելու նպատակով ՓՄՁ սուբյեկտների զգալի մասը նախընտրում է իր գործունեությունը ծավալել սովերային դաշտում: Նման գործելաճը, չնայած որոշակիորեն նպաստում է նրանց ֆինանսական վիճակի ժամանակավոր բարելավմանը, միաժամանակ լուրջ խնդիրներ է ստեղծում այդ սուբյեկտների համար վարկային ռեսուրսների ձեռքբերման հարցում՝ պայմանավորված ֆինանսական վիճակի օբյեկտիվ պատերժ հավաստող փաստաթղթերի բացակայությամբ: Այս առումով տնտեսական գործիքների կիրառման և հարկային բեռի թեթևացման միջոցով նման սուբյեկտների օրինական դաշտ տեղափոխումը կարող է լուրջ քայլ հանդիսանալ ՓՄՁ սուբյեկտների ֆինանսական ապահովվածության մակարդակի բարձրացման հարցում:

3.2. ՓՈՔԻ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՆՆԱՐԿՈՒ ԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐԿՈՒՆԱԿՈՒ ԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԿԵՏՈՒ ԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ

Վարկունակության վերլուծությունը, ինչպես արդեն նշեցինք աշխատանքի նախորդ բաժիններում, սովորաբար հիմնվում է կազմակերպության ֆինանսական ցուցանիշների համալիր վերլուծության վրա և իր մեջ ներառում է վերջինիս կողմից իրականացված գործառնությունների, ֆինանսական հոսքերի դինամիկայի, ակնկալվող շահույթի և այլ ցուցանիշների վերաբերյալ ուսումնասիրությունները: Հիմնական նպատակը կայանում է տնտեսավարող սուբյեկտի պարտավորությունների

Նկատմամբ եկամուտների կայունության վերլուծության մեջ: Դրա արդյունքում ստացված քանակական ցուցանիշները այնուհետև ենթարկվում են մասնագետների կողմից փորձագիտական գնահատման, ինչի արդյունքում որոշվում է կազմակերպության տեղը վարկանիշային որոշակի սանդղակում: Պարագապես այս դեպքում փոքր և միջին ձեռնարկությունների պարագայում հաշվապահական հաշվետվություններում ներկայացվող \$ինանսական ցուցանիշները ոչ միշտ են լիարժեք կերպով արտացոլում կազմակերպության \$ինանսատնտեսական վիճակը, ինչի հետևանքով մեծանում է \$ինանսական վերլուծաբանների դերը, որոնց հիմնական խնդիրն է պարզել կազմակերպության սեփական պարտավորությունների իրականացման հնարավորությունները:

Հանրապետությունում վարկային ռիսկի կառավարման նպատակով Կենտրոնական բանկի կողմից հաստատվել է «Բանկերի վարկային ռիսկի կառավարման մեթոդական ուղեցույցը», որը վարկունակության գնահատման սեփական մոդելների մշակման հիմք է դարձել առևտրային բանկերի համար⁷⁵: Նշված փաստաթղթով առաջարկվում է վարկունակության գնահատումն իրականացնել եկամուտների, դրամական հոսքերի, հաշվապահական հաշվեկշռի, շուկայի, պարտքի սպասարկման գործակցի, կառավարման ունակության, ապահովության վերլուծության, ինչպես նաև փոխառուին այցելության և տեղեկությունների ստուգման միջոցով:

Ներկայումս վարկունակության գնահատման նպատակով հայաստանյան բանկերի կողմից հիմք ընդունված գործոնները ընդհանուր առմամբ կարելի է ներկայացնել հետևյալ խմբերի տեսքով⁷⁶:

- Գործունակություն՝ իրավական կարգավիճակը, սեփականատերերը,
- գործունեություն և վարկային պատմություն՝ գործունեության ոլորտը և ժամանակահատվածը, արտադրական

⁷⁵ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի խորհրդի որոշումը «Բանկերի վարկային ռիսկի կառավարման մեթոդական ուղեցույցը հաստատելու մասին»: 2001 թ.:

⁷⁶ Օգտագործվել է հայաստանյան բանկերի ինտերնետային կայքերում տեղադրված տեղեկատվությունը: www.banks.am

հնարավորությունները, վարկերի վերադարձի պատմությունը, տվյալ վարկատուի հետհարաբերությունների պատմությունը,

- գործարար շուկա՝ դիրքը, մրցակցությունը, գործընկերները, գործարքներում վճարումների մեխանիզմը, ապրանքի գները,
- ֆինանսական վիճակ՝ ֆինանսական տվյալների վերլուծությունը, ներդրումային ծրագրերում վարկառուի սեփական մասնակցության չափը,
- կառավարում՝ ղեկավարների որակավորումը, պաշարների և դեբիտորական պարտքերի շրջանառությունը,
- արտաքին ազդակներ՝ քաղաքական, իրավական, տնտեսական,
- ապահովվածություն՝ երաշխիքը, երաշխավորությունը, բարձր իրացվելի ակտիվները, անշարժ գույքը և այլն:

Վարկունակության վերլուծության համար օգտագործվում են տարբեր աղբյուրներից ստացված տեղեկություններ: Մասնավորապես՝

- հաճախորդից ստացված տեղեկություններ՝ հիմնադիր փաստաթղթեր, ֆինանսական, վիճակագրական հաշվետվություններ, պայմանագրեր և այլն,
- հաճախորդի վերաբերյալ բանկի արխիվում առկա տեղեկություններ՝ հաշիվների շրջանառության վերաբերյալ, նախկինում տրամադրված վարկերի պատմություն և այլն,
- պետական կամ մասնավոր վարկային ռեգիստրի գործակալություններից ստացված տեղեկությունները,
- այլ աղբյուրներից ստացված տեղեկություններ՝ այլ բանկեր, գնորդներ, մատակարարներ և այլն:

Ներակայումս Հայաստանի բանկերի հաճախորդների վերաբերյալ տեղեկություններ ստանալու նպատակով իրեն նպաստում է ՀՀ Կենտրոնական բանկում ստեղծված փոխառուների վարկարժանության տեղեկատվական համակարգը՝ վարկային ռեգիստրը, որի միջոցով բանկերը կարող են լիարժեք տեղեկություններ ստանալ հաճախորդի՝ այլ բանկերում ունեցած վարկային պատմության վերաբերյալ: Վարկային ռեգիստրը հնարավորություն է տալիս բանկերին խուսափել անպարտաճանաչ վարկառուների վարկավորումից: Միաժամանակ այն ստիպում է

վարկառուներին պարտաճանաչ կերպով կատարել սեփական պարտավորությունները՝ հետագայում վարկեր ձեռք բերելու հնարավորություն ունենալու համար:

Վարկունակության գնահատման մեթոդների վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանց զգալի մասը հիմնված է վիճակագրական տեղեկատվության վրա: Չնայած գոյություն ունեցող մեթոդների տարբերությանը՝ դրանք այս կամ այն կերպ հնարավորություն են տալիս որոշել.

- վարկառուի կազմակերպատնտեսական բնութագիրը,
- վարկառուի վարկային պատմությունը,
- ֆինանսական վիճակը և գույքային դրությունը, ինչպես նաև վճարունակությունը:

Ոչ պակաս կանոր է նաև վարկառուի վերաբերյալ որակական ցուցանիշների վերլուծությունը, մասնավորապես՝

- տնտեսավարող սուբյեկտի գործունեությունն ընդգրկող ճյուղի վիճակի գնահատականը,
- տվյալ տարածաշրջանում կամ ճյուղում վարկառուի դերի գնահատականը,
- կազմակերպության տնտեսական քաղաքականության գնահատականը,
- գործարար համբավը և այլն:

Ընդհանուր առմամբ վարկունակության գնահատման գոյություն ունեցող մեթոդները կարելի է բաժանել երկու խմբի՝ փորձագիտական և ավտոմատ համակարգերի վրա հիմնված մեթոդներ: Առաջինները որոշում են կոնկրետ վարկառուի վարկունակության վերաբերյալ որոշումների ընդունման բնույթը, իսկ երկրորդները՝ ներկայացված են բանկի կողմից վարկի տրամադրման մասին որոշումների կայացման մաթեմատիկական եղանակներով:

Բավականաչափ տարածված է նաև վարկառուի վարկանիշային գնահատումը: Վարկանիշային մեթոդները հիմնականում կապված են վարկային ռիսկի հետև բանկերի կողմից կիրառվում են վարկերի որակի գնահատման և ակտիվների մոնիտորինգի նպատակով: Շատ հաճախ բանկերը կազմում են սեփական վարկանիշային սանդղակները, որոնց հիմնական նպատակը վարկի տրամադրման

վերաբերյալ որոշումների կայացման գործընթացի հետ տացումն է⁷⁷: Այս դեպքում կիրառվում են հետևյալ հիմնական չափանիշները:

Աղյուսակ 11.

Վարկանիշային սանդղակի կազմման նպատակով կիրառվող չափանիշները

Գործարար համբավը	Վարկառուի ցանկության ունև վճարականությանը բավարարելու սեփական պահանջմունքները: Գնահատման գործընթացն իրականացվում է ելնելով կազմակերպության անձնակազմի (վարկառուի վերաբերյալ կարծիքներ, վարկային պատմություն) և գործարար (վարկառուի գործընկերներ, հաճախորդներ, մատակարարներ, վարկատուներ) որակներից
Չնարավորություններ	Վարկառուի ընդունակությանը ստանալ դրամական միջոցներ իր կողմից իրականացվող գործարքների մասով (կոնկրետ ծրագրի կամ ժամանակահատվածի համար իրականացված ձեռնարկատիրական գործունեությանից ստացված ընդհանուր դրամական մուտքերը և դրամական միջոցները կառավարելու վարկառուի ընդունակությունը)
Կապիտալ	Վարկառուի վճարականությանը օգտագործելու սեփական կապիտալը այն նախագծում, որի համար հայցում է վարկային ռեսուրսներ, այն է՝ վարկառուի ընդունակությանը բանկի հետ կիսելու նախագծի ռիսկը
Պայմաններ	Ազգային և տարածաշրջանային շուկաների, ինչպես նաև տնտեսական գործունեության

⁷⁷ Ендропова В., Хосянова С., Методика комплексной оценки кредитоспособности заемщика. Финансы и кредит. М., 2002 г., №14, стр. 2-10.

	տվյալ ճյուղի ընթացիկ վիճակի վերլուծություն և համապատասխան կանխատեսումների իրականացում
Գրավ	Գրավի առարկայով կամ երաշխիքներով ապահովվածության հետմիաժամանակ հաշվի են առնվում նաև այլ գործոններ, որոնք բնութագրում են գրավի առարկայի որակը (դրախտագվելիությունը, վարկային միջոցների հետևաբանական արժեքի համապատասխանությունը և այլն)

Վարկանիշային սանդղակի կազմման ժամանակ հիմնականում իրականացվում է որակական գնահատում և ինչ-որ առումով կրում է սուբյեկտիվ բնույթ, քանի որ կախված է կոնկրետ անձի որոշումից: Ծատ հաճախ վարկանիշների կազմման համար կիրառվում է նաև բալային համակարգը, երբ յուրաքանչյուր չափորոշիչի համար տրվում է կոնկրետ բալ: Վերջնական գնահատումն իրականացվում է բոլոր չափանիշների համար տրված բալերի հանրագումարի միջոցով: Այս դեպքում թերությունը կրկին կայանում է սուբյեկտիվ բնույթի մեջ, քանի որ շատ առումներով կախված է տվյալ բանկի մենեջմենթի որակից և գնահատում իրականացնող մասնագետների որակավորման ատճանից:

Հանրապետությունում ներկայումս ՓՄՁ սուբյեկտների վարկունակության գնահատման առանձնահատուկ մոտեցումներ գոյություն ունեն: Գնահատումն իրականացվում է այնպես, ինչպես մնացած տնտեսավարող սուբյեկտների պարագայում է: Ինչպես արդեն նշեցինք, վարկունակության գնահատման ավանդական եղանակները ՓՄՁ սուբյեկտների առումով այնքան էլ կիրառելի չեն, ինչը հիմնականում բացատրվում է նրանց կողմից ներկայացվող ֆինանսական հաշվետվություններում անճշտությունների մեծ քանակով: Հետևաբար ՓՄՁ սուբյեկտների վարկունակության գնահատման համար պահանջվում են նոր մոտեցումներ, որոնք հնարավորինս հաշվի կառնեն տվյալ սեկտորի առանձնահատկությունները: Իհարկե, դա բավականաչափ բարդ է, պայմանավորված է տվյալ սեկտորին պատկանող սուբյեկտների գործունեության յուրահատկություններով և պայմաններով`

հիմնականում կապված անորոշության, ինչպես նաև արտաքին միջավայրի հանդեպ խոցելիության մեծ աստիճանի հետ: Այս տեսանկյունից ՓՄՁ սուբյեկտների վարկավորման նպատակահարմարության վերլուծությունը, մեր կարծիքով, անհրաժեշտ է դիտարկել որպես անորոշության պայմաններում լուծման ենթակա խնդիր: Հետևաբար ՓՄՁ սուբյեկտների վարկավորման նպատակահարմարության վերլուծությունն իրենից ներկայացնում է վարկի տրամադրման վերաբերյալ որոշումների հնարավոր տարբերակներից մեկի ընտրություն՝ համակարգային վերլուծության համար անհրաժեշտ ՓՄՁ սուբյեկտի գործունեության վերաբերյալ վիճակագրական և ֆինանսատնտեսական տեղեկատվության բացակայության պայմաններում: Որոշումների կայացման ընթացակարգն իր մեջ ընդգրկում է՝

- այլ ընտրանքային որոշումների ձևակերպում և համադրում,
- առավել նախընտրելի որոշման ընտրություն,
- գործողությունների ծրագրի մշակում:

Եթե ներկայացնենք քայլերի հաջորդականության տեսքով, ապա այն կունենան հետևյալ ձևը:

1. Վարկավորման նպատակի և վարկառուի վարկային պահանջմունքների որոշում: Այս գործառույթը պետք է իրականացվի համատեղ՝ բանկի վարկային մասնագետի և պոտենցիալ վարկառուի հետ միասին:
2. Մուտքային տվյալների, այսինքն՝ հաճախորդի գնահատման համար քանակական և որակական ցուցանիշների որոշում, ինչպես նաև դրանց գնահատման չափորոշիչների ընտրություն: Վարկառուի վարկունակության գնահատման այս փուլում հիմնական խնդիրը պետք է լինի այնպիսի չափորոշիչների ընտրությունը, որոնք առավել ազույնս լիարժեք և ամբողջական կբնութագրեն ՓՄՁ սուբյեկտի վիճակը:

Փոքր և միջին ձեռնարկությունների վարկառունակության գնահատման համար առաջարկվում է կիրառել ինչպես որակական, այնպես էլ քանակական ցուցանիշներ: Հատկապես կարևոր

նշանակություն ունեն որակական ցուցանիշները, որոնք առաջարկվում է դասակարգել 3 խմբի:

Ա) ճյուղային առանձնահատկությունները բնութագրող ցուցանիշներ`

1. ճյուղի զարգացման դինամիկան,
2. ճյուղի զարգացման հեռանկարները,
3. արտադրման կամ մատուցման ենթակա ապրանքների ու ծառայությունների նկատմամբ շուկայի պահանջարկը:

Բ) Տարածաշրջանային առանձնահատկությունները բնութագրող ցուցանիշներ`

4. տվյալ տարածաշրջանի տնտեսության զարգացման դինամիկան,
5. տվյալ տարածաշրջանի տնտեսության զարգացման հեռանկարները,
6. արտադրման կամ մատուցման ենթակա ապրանքների ու ծառայությունների նկատմամբ տարածաշրջանային շուկայի պահանջարկը:

Գ) ՓՄՁ սուբյեկտի գործունեության ցուցանիշները`

7. վարկառուի վարկային պատմությունը,
8. անձնակազմի մասնագիտական որակավորման մակարդակը (հնարավորություն է տալիս պարզել ձեռնարկության մասնագետների որակավորման աստիճանը դրամական հոսքերի արդյունավետ կառավարման տեսանկյունից),
9. ՓՄՁ սուբյեկտում բարոյահոգեբանական վիճակի գնահատումը (հոգեբանական պատկերի գնահատումը պետք է իրականացվի հարցազրույցի միջոցով և հնարավորություն է տալ կողմնորոշվել տվյալ անձին վարկային միջոցներ հատկացնելու հարցում),
10. շուկայում գործունեության իրականացման ժամկետը,
11. ՓՄՁ սուբյեկտի տնտեսական քաղաքականությունը (պետք է դիտարկվեն ձեռնարկության կողմից նախկինում իրականացված ծրագրերը, ուսումնասիրվի ձեռնարկության բիզնես պլանը և գնահատվի դրա կատարման հնարավորությունը, ինչը թույլ կտա բանկին որոշել բիզնեսի արդյունավետությունը),
12. տեխնիկական հագեցվածության մակարդակը,

13. կադրային քաղաքականությունը (ձեռնարկության աշխատակիցների տարիքային կազմի և աշխատանքային ստաժի ուսումնասիրություն, աշխատանքային ռեսուրսներով ապահովվածություն, կադրերի հոսունություն ուսումնասիրություն):

Վերը թվարկված 13 ցուցանիշները պետք է կիրառել ՓՄՁ սուբյեկտի վարկունակության գնահատման համար: Նշվածներից յուրաքանչյուրը կարող է որոշակի պատկերացում ստեղծել ՓՄՁ սուբյեկտի գործունեության մասին, ինչն էլ հիմք կհանդիսանա քանկի համար վարկավորման վերաբերյալ որոշում կայացնելիս: Դրանցից յուրաքանչյուրն առաջարկվում է դասակարգել 0-1 միջակայքում (ցածր՝ 0, միջինից ցածր՝ 0.25, միջին՝ 0.5, միջինից բարձր՝ 0.75, բարձր՝ 1): Վերը բերված 13 ցուցանիշների գծով հաշվարկելով արդյունքային ցուցանիշներն առաջարկվող տարբերակով՝ հնարավոր կլինի կազմակերպության վարկունակության մակարդակը գնահատել որակական տեսանկյունից: Ինչ վերաբերում է քանակական ցուցանիշներին, ապա որպես այդպիսիք առաջարկվում է կիրառել հետևյալները:

Աղյուսակ 12.⁷⁸

ՓՄՁ սուբյեկտների վարկունակության գնահատման քանակական ցուցանիշները

Ցուցանիշ	Ցուցանիշի հաշվարկ	Ցուցանիշի բովանդակությունը
Ընթացիկ իրացվելիություն գործակից /ընդունելի մեծություն 1-2.5/	Շրջանառու ակտիվներ/Կարճաժամ-կետակտիվներ	Հնարավորություն է տալիս որոշել ձեռնարկության ակտիվների շարժունակությունը և գնահատել, թե ինչ քանով ժամանակին կարող են ծածկվել կարճաժամկետ պարտավորությունները ակտիվների իրացվելիության հաշվին
Ֆինանսական անկախության գործակից /ընդունելի մեծություն 0.5-0.6/	Սեփական միջոցներ/Ընդհանուր ակտիվներ	Փոխառու միջոցներից ձեռնարկության անկախության աստիճանը /ինչ քան մեծ է ցուցանիշը, այնքան բարձր է վարկունակությունը/
Սեփական շրջանառու կապիտալով պահուստների ապահովվածության գործակից	Սեփական կապիտալ – չշրջանառվող ակտիվներ Պահուստներ	Ցույց է տալիս, թե պահուստների ինչ քան մասն է ձևավորված սեփական աղբյուրների հաշվին

⁷⁸ Банковские операции. под ред. О.И. Лаврушина. М., КноРус, 2007 г., стр. 85-86.

/ընդունելի մեծություն 0.6-0.8/		
Կրիտիկական իրացվելիություն գործակից /ընդունելի մեծություն 1/	(Դրամական միջոցներ +կարճաժամկետ \$ինանսական ներդրումներ+կարճաժամկետ դեբիտորական պարտավորություններ) կարճաժամկետ պարտավորություններ	Ցույց է տալիս ձեռնարկության շրջանառում միջոցների բավարարության աստիճանը, որոնք կարող են օգտագործվել կարճաժամկետ պարտավորությունների մարման համար
Դեբիտորական պարտավորությունների շրջանառելիության ժամանակաշրջան	(Միջին կարճաժամկետ դեբիտորական պարտավորություն X օրեր)/ վաճառքից հասույթ	Բնութագրում է դեբիտորական պարտավորության լրիվ շրջանառության միջին ժամանակաշրջանը կամ կարճաժամկետ դեբիտորական պարտավորության մարման միջին ժամկետը
Վարկային պարտավորությունների շրջանառելիության ժամանակաշրջան	(Միջին վարկային պարտավորություն X օրեր)/ վաճառքից հասույթ	Բնութագրում է ձեռնարկության կախվածության աստիճանը արտաքին փոխառության ներքին, որոշում է վարկային պարտավորությունների մարման ժամկետը, ցույց է տալիս ձեռնարկության կողմից վարկային պարտավորությունների մարման համար անհրաժեշտ միջին ժամկետը
Ֆինանսական ակտիվության գործակից /ընդունելի մեծություն ≤1/	Փոխառում միջոցներ/Սեփական միջոցներ	Ցույց է տալիս ձեռնարկության կախվածության աստիճանը արտաքին փոխառում աղբյուրներից
Ծահույթ/ձեռք բերված գործակից	Ծահույթ/Ջասույթ	Ցույց է տալիս հասույթի յուրաքանչյուր դրամից շահույթի մասը


Կարծում ենք՝ վերը բերված որակական և քանակական ցուցանիշները հնարավորություն կտան միասին ապահովել վարկունակության համեմատաբար օբյեկտիվ պատկեր: Սակայն մեկ անգամ ևս հարկ ենք համարում ընդգծել, որ հատկապես ՓՄՁ սուբյեկտների մասով քանակական ցուցանիշների վերաբերյալ լիարժեք և արժանահավատ տեղեկատվությունը շատ դեպքերում բացակայում է, ինչի արդյունքում վարկավորման մասին որոշումների կայացման գործընթացում վճռորոշ դեր են ձեռք բերում որակական ցուցանիշները: Նման մոտեցման կիրառումը հնարավորություն կտա պարզեցնել վարկավորման վերաբերյալ որոշման կայացման գործընթացը, նվազեցնել բանկի ռիսկը վարկավորման առումով, ՓՄՁ սուբյեկտների վարկունակությունը

գնահատել՝ ելնելով նրանց գործունեության պայմաններից և տնտեսական իրավիճակից:

ՓՁՄ սուբյեկտների վարկունակության բարձրացման տեսանկյունից հատկապես պետք է կարևորել նրանց կողմից արտադրման կամ մատուցման ենթակա ապրանքների ու ծառայությունների նկատմամբ շուկայում առկա պահանջարկի վերլուծությունը: Կարծում ենք, որ այս գործունը կարող է խթանիչ հանգամանք հանդիսանալ առևտրային բանկերի համար, որոնք, կատարելով այդ ուղղությամբ համակողմանի վերլուծություններ և բացահայտելով հեռանկարային ու ոչ ռիսկային ոլորտները, կուղղորդեն ՓՄՁ սուբյեկտներին այդ ուղղությամբ գործունեություն ծավալելուն: Այլ կերպ ասած՝ առևտրային բանկերը կարող են իրականացնել որոշակիորեն խորհրդատվական բնույթ կրող գործունեություն, քանի որ ՓՄՁ սուբյեկտները շուկայի որակյալ ու խորը ուսումնասիրություններ իրականացնելու համար համապատասխան կադրեր ու այլ ռեսուրսներ չունեն: Նման վերլուծության արդյունքում կբացահայտվեն տնտեսական գործունեության համեմատաբար ցածր ռիսկային ոլորտները, ինչը կօգնի ՓՄՁ սուբյեկտներին մի կողմից կողմնորոշվել գործունեության ուղղության ընտրության հարցում, իսկ մյուս կողմից կնպաստի վարկավորման հետ կապված ռիսկերի որոշակի կրճատմանը:

Պետք է նշել, որ փոքր և միջին բիզնեսի սուբյեկտների վարկունակության գնահատման ժամանակ միայն ֆինանսական գործակիցների վերլուծությունը բավարար չէ, քանի որ դրանց դինամիկան, որպես կանոն, կայուն չէ և հնարավորություն է չի տալ իս բացահայտել ֆինանսական վիճակի վատթարացման բուն պատճառները: Վարկունակության գնահատման մեթոդաբանությունը կարող է առավել արժանահավատ կերպով բնութագրել կազմակերպության ֆինանսական վիճակն այն դեպքում, եթե վարկի տրամադրման ժամանակ հաշվի առնվեն փոքր և միջին բիզնեսի սուբյեկտների աշխատանքային և նյութական ռեսուրսների, շրջանառու միջոցների օգտագործման արդյունավետության ցուցանիշները: Վերջինս պետք է իրականացնել ապրանքների,

ծառայությունների և աշխատանքների իրացումից հասույթի գործոնային վերլուծության հիման վրա: Ընդ որում դրա առը կարող է կապված լինել ինտենսիվ և էքստենսիվ գործոնների հետ, որը նույնպես պետք է հաշվի առնել:



Գծապատկեր 6. Էքստենսիվ և ինտենսիվ գործոնների ազդեցությունը արտադրության ծավալների վրա

Մեր կարծիքով, փոքր և միջին ձեռնարկությունների վարկունակության գնահատման չափանիշ կարող է դիտարկվել էքստենսիվ և ինտենսիվ գործոնների ազդեցության չափը կազմակերպության գործունեության և, մասնավորապես, հասույթի ծավալների վրա: Վարկունակության տեսանկյունից ֆինանսական վիճակի բացասական դրսևորում պետք է համարել արտադրության զարգացման գործընթացում էքստենսիվ գործոնների

առկայ ու թյ ու նը: Մինչ դեռ ինտենսիվ գործունեությունը վկայում են գոյություն ունեցող այն ռեգերվների մասին, որոնց օգտագործումը կարող է կազմակերպությանը դուրս հանել սպասվող ճգնաժամային վիճակից: Այս առումով, նշված գործունեության միջև պետք է ապահովվի որոշակի հարաբերակցություն, որի պարագայում միայն կապահովվի կազմակերպության ֆինանսատնտեսական կայունությունը:

Հայաստանի Հանրապետությունում փոքր և միջին ձեռնարկությունների վարկունակության բարձրացման հարցում, մեր կարծիքով, կարևոր նշանակություն կարող է ունենալ այդ ուղղությամբ պետության կողմից իրականացվող արդյունավետ և հասցեական աջակցությունը: Այս նպատակով կիրառվող գործիքների շարքում հատկապես պետք է կարևորել տվյալ ոլորտի սուբյեկտներին պետական գնումների գործընթացի մեջ ներգրավումը: Այլ կերպ ասած՝ պետությունը պետք է օրենսդրական պահանջների սահմանման միջոցով ապահովի պետական գնումների որոշակի տեսակների գծով (կախված ապրանքներից, ծառայություններից և աշխատանքներից) ՓՄՁ սուբյեկտների պարտադիր մասնակցություն: Դա մի կողմից կնպաստի նրանց ֆինանսական ապահովվածության մակարդակի բարձրացմանը, իսկ մյուս կողմից առևտրային բանկերի համար կդառնա ուղղորդիչ հանգամանք վարկավորման հարցում: Նշված գաղափարի կենսագործման համար առաջարկվում է հետևյալ մեխանիզմը: Պետական պատվերների իրականացման արդյունքում ՓՄՁ սուբյեկտը ստանում է համապատասխան հավաստագիր, որը կվկայի նրա կողմից համապատասխան աշխատանքների պատշաճ իրականացման մասին և յուրօրինակ երաշխավորագիր կհանդիսանա առևտրային բանկի կողմից վարկավորման համար: Հակառակ պարագայում (այսինքն վարկը չվերադարձնելու դեպքում) հավաստագրի գոյությունը հիմք կհանդիսանա պետական միջոցների հաշվին տվյալ սուբյեկտի չմարված պարտավորությունների իրականացման համար:

Վարկունակությունը բնութագրող էական գործոն է տնտեսավարող սուբյեկտի հեռանկարային վճարունակությունը: Այս դեպքում վարկառուի ֆինանսական գործունեության

գնահատումը պետք է կրի կանխատեսումային բնույթ՝ ներառելով վարկային միջոցների օգտագործման արտենցիալ ժամանակահատվածը: Այս համատեքստում հատկապես ուշադրություն պետք է դարձնել տնտեսական գործունեության ոլորտային և ճյուղային առանձնահատկությունների, որոնք էականորեն կանխորոշում են տնտեսավարող սուբյեկտի գործունեության ֆինանսատնտեսական ցուցանիշները և, որպես դրա արդյունք, վճարունակությունը: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ տնտեսության տարբեր ոլորտներում տնտեսավարման պայմանները և հատկապես շահութաբերության մակարդակը տարբեր են: Այս տեսանկյունից, կարծում ենք, պետությունը ՓՄՁ սուբյեկտներին տրամադրվող վարկերի տոկոսադրույքի սուբսիդավորումը պետք է իրականացնի՝ հաշվի առնելով տնտեսական գործունեության ոլորտային ուղղվածությունը, հիմնականում թիրախավորելով ռիսկայնության բարձր աստիճան ունեցող ոլորտներում գործունեություն ծավալող ՓՄՁ սուբյեկտներին: Դա, անշուշտ, կնպաստի, վերջիններիս կողմից վարկային ռեսուրսների ձեռքբերման մատչելիության ապահովմանը: Պետք է նշել, որ պետության կողմից վարկային տոկոսադրույքի սուբսիդավորման ճկուն մեխանիզմի կիրառումը կարող է խթանել առևտրային բանկերին մասնագիտանալու կոնկրետ ոլորտում գործունեություն իրականացնող ՓՄՁ սուբյեկտների վարկավորման ուղղությամբ, ինչն էականորեն կնպաստի տվյալ բանկի կողմից վերջիններիս վարկունակության գնահատման արդյունավետության բարձրացմանը:

Ինչպես արդեն նշվեց աշխատանքի նախորդ մասերում, փոքր և միջին ձեռնարկությունների վարկունակության վերլուծության ժամանակ կարևոր խնդիրներից մեկը ներկայացվող փաստաթղթերում արտացոլված ցուցանիշների արժանահավատության գնահատումն է, ինչը պահանջում է բանկի վարկային մասնագետների կողմից հատուկ մոտեցումների ցուցաբերում: Անշուշտ, արտենցիալ վարկառուի բիզնեսի գնահատումը ամբողջությամբ կախված է վարկային մասնագետից, ով պարտավոր է տարբեր միջոցների կիրառմամբ օբյեկտիվորեն գնահատել հաճախորդի

վարկուհակոթյունը: Այս առումով, կարծում ենք, որ խնդրի լուծմանը կարող է եականորեն նպաստել խաչաձև ստուգումների մեթոդի (cross-check) կիրառումը, որի հիմնական գաղափարը կայանում է տնտեսավարող սուբյեկտի ֆինանսատնտեսական գործունեությունը բնութագրող տարբեր ցուցանիշների համադրման միջոցով տնտեսավարող սուբյեկտի կողմից ներկայացված փաստաթղթերում արտացոլված ցուցանիշների արժանահավատության որոշման և ֆինանսական դրության իրական պատկերի ներկայացման մեջ:

ԵԶՐԱԿԱՑՈՒ ԹՅՈՒՆՆԵՐ

Կատարված ուսումնասիրությունների և վերլուծությունների հիման վրա կարելի է մի շարք հետևություններ անել փոքր և միջին ձեռնարկությունների վարկուհական բարձրացման հիմնական ուղղությունների վերաբերյալ: Իրականացված վերլուծությունների և ուսումնասիրությունների ամփոփարդյունքներն արտացոլված են հետևյալ առավել հատկանշական եզրակացություններում:

1. Փոքր և միջին ձեռնարկությունների գործունեության ֆինանսական ապահովվածության հետ կապված խնդիրների լուծումն ամենից առաջ պայմանավորված է տվյալ ոլորտին պատկանող սուբյեկտների համար ֆինանսավորման աղբյուրների մատչելիությամբ և հասանելիությամբ: ՓՄՁ ոլորտի զարգացման բարձր տեմպերը և տնտեսական աճի ապահովման գործում ունեցած մեծ դերակատարությունը մեծապես պայմանավորված են այդ ձեռնարկությունների ֆինանսական ապահովվածության մակարդակով և ֆինանսավորման արդյունավետ մեխանիզմների ու գործիքների առկայությամբ: Ֆինանսական ապահովվածությունը ՓՄՁ ոլորտի բնականոն գործունեության ապահովման և զարգացման հիմնական երաշխիքն է:

2. Փոքր և միջին ձեռնարկությունների վարկավորման հետ կապված գոյություն ունեն որոշակի հիմնախնդիրներ՝ պայմանավորված տվյալ ոլորտին բնորոշ հետևյալ առանձնահատկություններով: Փոքր և միջին ձեռնարկությունների վարկավորման ընթացքում առաջացող ծախսերն ավելի մեծ են, քան խոշոր կորպորատիվ հաճախորդների դեպքում, արդյունքում փոքր և միջին ձեռնարկությունների վարկավորումը բանկի համար ավելի ծախսատար է դառնում: Մյուս առանձնահատկությունը կապված է փոխառուի ֆինանսական վիճակի վերլուծության հետ, որը հիմնվում է հաշվապահական հաշվետվությունների տվյալների վրա: Փոքր և միջին ձեռնարկությունների դեպքում դրանք հիմնականում օբյեկտիվ կերպով չեն արտացոլում ընկերության ֆինանսական վիճակը: Հատկապես հարկման արտոնյալ ռեժիմներից օգտվելու նպատակով ՓՄՁ սուբյեկտների գերակշիռ մասն արհեստականորեն նվազեցնում է շրջանառության ծավալները, ինչն էլ իր

անդրադարձն է ունենում բանկի կողմից հաշվապահական տվյալների հիման վրա ընկերության ֆինանսական վիճակի գնահատականի օբյեկտիվության վրա:

3. ՓՄՁ ոլորտի վարկավորման հարցում առևտրային բանկերը շահագրգռված չեն հետևյալ պատճառներով: Առաջին՝ փոքր և միջին ձեռնարկությունների վարկավորման մշակված տեխնոլոգիաների բացակայության հետևանքով բանկերի համար առավել հեշտ է ձևակերպել մեկ վարկային գործարք խոշոր գումարի չափով, քան հակառակը: Բացի այդ փոխառուների վարկունակության գնահատման մեթոդաբանությունը կիրառման տեսանկյունից զգալի բարդություններ է պարունակում ՓՄՁ սուբյեկտների հետ կապված, ինչն իր հերթին մեծացնում է տվյալ ոլորտի վարկավորման ռիսկերը: Երկրորդ՝ չնայած ավանդաբար ՓՄՁ ոլորտի բանկային վարկավորումը համարվում է ռիսկային, սակայն ոլորտին պատկանող սուբյեկտներն ունեն որոշակի առանձնահատկություններ՝ պայմանավորելով վարկավորման տեսանկյունից ռիսկայնության տարբեր աստիճաններ: ՓՄՁ ոլորտը պայմանականորեն կարելի է բաժանել գործող և սկսնակ բիզնեսների, որոնցից վերջինը վարկավորման տեսանկյունից բավականաչափ ռիսկային է: Յետևաբար կարելի է ասել, որ հաջողությամբ գործող ՓՄՁ սուբյեկտների պարագայում ռիսկը գոյություն ունի, սակայն առավել փոքր չափերով: Երրորդ՝ շատ դեպքերում վարկի ստացման նախապայմաններից է հեռանկարային ներդրումային նախագծի կամ բիզնես պլանի առկայությունը: Մինչդեռ նման փատաթղթերի մշակումը պահանջում է բարձր որակավորում ունեցող մասնագետների կամ ընկերությունների ներգրավում, ինչը ՓՄՁ սուբյեկտների հնարավորություններից դուրս է: Վերջիններս չունեն բավարար կադրային ռեսուրսներ գրագետ և հիմնավորված ծրագրեր մշակելու համար, իսկ ֆինանսական հնարավորությունները թույլ չեն տալիս դրսից համապատասխան մասնագետներ ներգրավել: Ակնհայտ է, որ դա էականորեն նվազեցնում է առևտրային բանկի կողմից ՓՄՁ սուբյեկտի վարկավորման հավանականությունը: Չորրորդ՝ ՓՄՁ սուբյեկտների ակտիվների կառուցվածքում գրավի պրոտենցիալ

առարկա հանդիսացող անշարժ գույքի մասնաբաժինը չափազանց փոքր է, ինչը պատճառ է հանդիսանում բանկերի կողմից վարկավորումից հրաժարվելու համար: Ինչպես նաև գրավադրված գույքի իրացումը, տարբեր օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով պայմանավորված, բավականաչափ բարդ է ու դժվար: Նման պայմաններում բանկերի համար առավել ձեռնտու է ունենալ քիչ թվով խոշոր տնտեսավարող սուբյեկտ հանդիսացող փոխառուներ, քան մեծաքանակ ՓՄՁ սուբյեկտներ:

4. Առևտրային բանկերի կողմից ՓՄՁ սուբյեկտների վարկավորման ռիսկայնությունը պայմանավորված է տրամադրված ֆինանսական միջոցների հետ չվերադարձման բարձր հավանականությամբ: Վերջինս իր հերթին կապված է այն հանգամանքի հետ, որ փոքր և միջին ձեռնարկությունները, ի տարբերություն խոշորների, խիստ զգայուն են շուկայական կոնյուկտուրայի տատանումների նկատմամբ և խոցելի են շուկայում տեղի ունեցող բացասական երևույթների հանդեպ: Բացի այդ նշված սուբյեկտների կախվածությունը բավականաչափ մեծ է շուկայի այլ մասնակիցներից, ինչն իր հերթին հանդես է գալիս որպես բանկային վարկերի չվերադարձման հավանականությունը մեծացնող գործոն: Վարկային միջոցներ ձեռք բերելու փոքր և միջին ձեռնարկությունների հնարավորությունները սահմանափակվում են նաև առևտրային բանկերի կողմից բանկային երաշխիքների տրամադրման խիստ պահանջների սահմանման պատճառով: Բանկային համակարգը որոշակի իրավիճակներում առավել հակված է խոշոր բիզնեսի վարկավորման հարցում, ինչն էլ իր հերթին ևս դժվարացնում է վարկեր ձեռք բերելու ՓՄՁ սուբյեկտների հնարավորությունները:

5. Վարկային միջոցների ներգրավումն ու օգտագործումը շուկայական հարաբերությունների հիմնական բնութագրիչներից է և ուղղված է տնտեսավարող սուբյեկտների ֆինանսական կարիքների բավարարմանը: Ընդհանուր առմամբ վարկավորման գործընթացի կարևոր բաղադրիչներից և պայմաններից մեկն է վարկառուի և վարկատուի միջև փոխվստահությունը, որի ապահովմանն է ուղղված հաճախորդի վարկուհանություն վերլուծությունը: Յուրաքանչյուր

բանկ սեփական հայեցողությամբ է որոշում այդ նպատակով տվյալ ների բազայի ձևավորման և օգտագործման առանձնահատկությունները, ինչպես նաև ընտրում վարկունակության գնահատման համապատասխան մեթոդը: Վարկունակությունը հիմնականում դիտարկվում է որպես տնտեսավարող սուբյեկտների և ֆիզիկական անձանց կողմից սեփական վարկային պարտավորությունները ժամանակին և ամբողջական ծավալով կատարելու հնարավորություն: Այն կարելի է սահմանել որպես վարկային միջոց ստանալու իրավասություն, այն արդյունավետ օգտագործելու հնարավորություն, ինչպես նաև ապագայում նախապես սահմանված ձևով, ժամկետներում և ծավալով վարկատուին փոխառու միջոցները վերադարձնելու պատրաստակամություն և ընդունակություն:

6. Վարկունակության վերլուծությունն իր մեջ ընդգրկում է վարկային հարաբերությունների բոլոր փուլերը և ենթադրում է տնտեսավարող սուբյեկտի գործունեությունն արտացոլող քանակական և որակական ցուցանիշների մանրակրկիտ ուսումնասիրություն՝ վարկունակության, վարկի ապահովվածության, վարկային ռիսկի աստիճանի և վարկավորման օպտիմալ սխեմայի ընտրության վրա դրանց ազդեցության տեսանկյունից: Փոխառուի վարկունակության և վարկավորման ռիսկերի միջև գոյություն ունի հակադարձ կապ: Ինչքան բարձր է վարկունակությունը, այնքան ցածր է բանկի ռիսկը կորցնելու սեփական դրամական միջոցները: Վարկունակության վերլուծության նպատակը տնտեսավարող սուբյեկտի գործունեության համալիր ուսումնասիրությունն է՝ տրամադրվող ռեսուրսների վերադարձման հնարավորությունները գնահատելու համար և ենթադրում է հետևյալ խնդիրների լուծում՝

- վարկատուի կողմից տրամադրվող ֆինանսական ռեսուրսների օպտիմալ մեծության և դրանց մարման եղանակների հիմնավորում,
- վարկառուի կողմից վարկային ռեսուրսների օգտագործման արդյունավետության որոշում,

- վարկառուի ընթացիկ ֆինանսական վիճակի գնահատում և վարկի տրամադրումից հետո դրա հնարավոր փոփոխությունների կանխատեսում,
- վարկատուի կողմից վարկառուի նկատմամբ մոնիտորինգի իրականացում՝ վերջինիս ֆինանսական վիճակը բնութագրող ցուցանիշների վերաբերյալ պահանջների պահպանման կտրվածքով,
- վարկատուի վարկունակության բավարար մակարդակի ապահովման ուղղությամբ կազմակերպությունում կայացվող որոշումների արդյունավետության և նպատակահարմարության վերլուծություն,
- վարկային ռիսկերի բացահայտում և վարկավորման վերաբերյալ որոշման կայացման վրա դրանց ազդեցության գնահատում,
- ֆինանսական տեղեկատվության բավարարության և դրա արժանահավատության վերլուծություն:

7. Փոքր և միջին ձեռնարկությունների վարկունակության գնահատման առումով գոյություն ունեն մի շարք բարդություններ, քանի որ այդ սուբյեկտների ֆինանսական վիճակի վերլուծության համար տեղեկատվության աղբյուր են հանդիսանում հիմնականում հաշվապահական (ֆինանսական) հաշվետվությունները, որոնք բավարար չեն նման վերլուծության իրականացման համար: Պայմանավորված փոքր և միջին բիզնեսի սուբյեկտների առանձնահատկություններով՝ վերջիններիս վարկունակության գնահատման համար պետք է կիրառել հատուկ մոտեցումներ, քանի որ ավանդական մեթոդները հնարավորություն չեն տալիս վարկունակության վերաբերյալ ստանալ օբյեկտիվ գնահատական: Վարկունակության գնահատման գոյություն ունեցող մեթոդները հիմնականում կենտրոնանում են որակական և քանակական ցուցանիշների վրա և այդ առումով չկա համալիր մոտեցում: Բավարար չափով ու շարժողություն չի դարձվում բիզնեսի սեփականատիրոջ գնահատմանը, ինչը խոչոր ձեռնարկությունների դեպքում ավելի փոքր նշանակություն ունի: Ուստի փոքր և միջին բիզնեսի վարկունակության գնահատումն ունի առանձնահատուկ

մոտեցումների ցուցաբերման կարիք: Այն է՝ վարկավորման նպատակահարմարության, ինչպես նաև տրամադրված վարկի էֆեկտի գնահատումը գոյություն ունեցող մեթոդներում գրեթե հաշվի չի առնվում: Մինչդեռ նշված գործոնը խիստ կարևոր է վարկառուի վարկունակության գնահատման համար, քանի որ եթե վարկի տրամադրումը հանգեցնում է կազմակերպության գործունեության ֆինանսատնտեսական ցուցանիշների և ֆինանսական վիճակի վատթարացմանը, ապա բանկը կարող է բախվել դժվարությունների վարկի վերադարձման հարցում: Հաշվի չեն առնվում նաև այնպիսի գործոններ, ինչպիսիք են բիզնեսի դիվերսիֆիկացման աստիճանը և ճյուղային առանձնահատկությունները: Ոչ բավարարող ադրություն է հատկացվում նաև ձեռնարկության սեփականատերերի և ղեկավարության կառավարչական փորձին և հմտություններին: Վարկունակության գնահատման գոյություն ունեցող մեթոդներից ոչ մեկը հաշվի չի առնում փոքր և միջին բիզնեսի յուրահատուկ բնույթը:

8. ՓՄՁ սուբյեկտների վարկունակության գնահատման ժամանակ պետք է հաշվի առնել այնպիսի առանձնահատկություններ, ինչպիսիք են.

- տեղեկատվական հաշվետվողականության բացակայությունը, ինչի հետևանքով բանկերը վարկունակության վելոսություն ժամանակ հնարավորություն չեն ունենում անհրաժեշտ տեղեկատվություն ստանալ փոքր և միջին ձեռնարկությունների գործունեության բոլոր ասպեկտների վերաբերյալ,
- հարկային պարտավորությունների հնարավորինս նվազեցման նպատակով ոչ լիարժեք հաշվապահական հաշվառման իրականացումը, ինչի հետևանքով փոքր և միջին բիզնեսի սուբյեկտների պաշտոնական հաշվետվությունների վերլուծությունը դառնում է ոչ կոռեկտ,
- վարկառուների ֆինանսական ցածր գրագիտությունը, հաշվետվությունների վարման վատ որակը, օրենքների չիմացությունն իրենց մեջ պարունակում են մեծ ռիսկեր բիզնեսի համար,

- պրտենցիալ վարկառուի կողմից տնտեսական գործունեության իրականացման կարճ ժամկետները: Փոքր և միջին բիզնեսի սուբյեկտներն ունեն կյանքի կարճ տևողություն և ավելի շատ ռեսուրսներ են պահանջում գործունեության իրականացման սկզբնական փուլում: Բանկերի համար նման իրավիճակը բավականաչափ ռիսկային է և շատ դեպքերում հանգեցնում է նոր գործունեություն սկսող փոքր և միջին բիզնեսի սուբյեկտների վարկավորումից հրաժարվելուն,
- փոքր և միջին բիզնեսի կենսունակության հարցում էական դեր ունեն հիմնադիրները և սեփականատերերը, որոնք շատ դեպքերում հանդես են գալիս որպես որոշում կայացնողներ: Նրանք են իրականացնում ձեռնարկության ղեկավարումն ու գործունեության պլանավորումը, բանակցություններ վարում գործընկերների և ֆինանսական հաստատությունների հետ: Բիզնեսի վարման նման մոտեցման դրական կողմը որոշումների կայացման օպերատիվությունն ու ճկունությունն է, իսկ բացասական կողմը սեփականատիրոջ հետաքրքրությունների գերակայությունը բիզնեսի շահերի հանդեպ, ինչպես նաև ազգակցական կապերի ազդեցությունը ֆինանսատնտեսական գործունեության վրա:

9. Փոքր և միջին ձեռնարկությունների վարկունակության գնահատման ժամանակ գոյություն ունեցող մեթոդներից ոչ բոլորն են կիրառվում անհրաժեշտ տեղեկատվության բացակայության պատճառով: Մասնավորապես, հաշվետվությունների ոչ ժամանակին ներկայացման, ինչպես նաև դրանցում ներառված ցուցանիշների ոչ բավարար արժանապատվության պատճառով ֆինանսական գործակիցների և դրամական հոսքերի լիարժեք վերլուծության իրականացումը դառնում է անհնար: Նման պայմաններում ձեռնարկության ներսում տիրող իրական վիճակի և վերջինիս վարկունակության գնահատման վերաբերյալ օբյեկտիվ արդյունքների ստացումը, ըստ էության, բացառվում է: Չնայած վարկունակության գնահատման համար գոյություն ունեցող մեթոդները համընդհանուր են բոլոր ձեռնարկությունների համար, սակայն փոքր և միջին բիզնեսի դեպքում անհրաժեշտ

տեղեկատվության բացակայության պատճառով դրանց կիրառումը դառնում է ոչ նպատակահարմար: Այս առումով անհրաժեշտ է դիտարկել այն խնդիրները, որոնք գոյություն ունեն փոքր և միջին ձեռնարկությունների գործունեության հետ կապված և որոնք զգալիորեն անդրադառնում են բանկի կողմից նման սուբյեկտների վարկունակության գնահատման գործընթացի վրա: Մասնավորապես՝

- փոքր և միջին ձեռնարկությունների գերակշիռ մասում բացակայում են գրավի առարկա հանդիսացող միջոցները, որոնք վարկի վերադարձելիությունն ապահովող երաշխիքներ են,
- փոքր և միջին ձեռնարկությունների գործունեության ցածր թափանցիկությունը,
- հարկման հատուկ ռեժիմները, որոնք ենթադրում են առանձին հարկերի գծով հարկային հաշվետվությունների պարզեցված ձևերի ներկայացում և ստեղծում են լուրջ հիմնախնդիրներ ֆինանսական գործակիցների գնահատման համար,
- արհեստավարժ հաշվապահության բացակայությունը մեծացնում է պաշտոնական հաշվետվություններում սխալների հավանականությունը, ինչը խանգարում է վարկունակության գնահատմանը,
- վարկերի փոքր ծավալը շատ հաճախ համադրելի է վարկառուի վարկունակության որոշման և մոնիտորինգի համար կատարվող ծախսերի հետ:

10. Հանրապետությունում ՓՄՁ ոլորտի վարկավորման պայմանները դեռևս չի կարելի համարել բարենպաստ, հատկապես վարկային բարձր տոկոսադրույքների, գրավի առարկայի բացակայության և մի շարք այլ գործոնների պատճառով: Միաժամանակ վարկային ռիսկերի բարձր մակարդակը փոքր և միջին ձեռնարկությունների վարկավորումը առևտրային բանկերի համար դարձնում է բարդ հիմնախնդիր: Դրա լուծման գործում իրենց համապատասխան մասնակցությունը պետք է ունենան ՓՄՁ սուբյեկտները (սեփական գործունեության թափանցիկության և ֆինանսական հաշվետվությունների արժանահավատության մակարդակի բարձրացման ուղղությամբ), պետությունը (բանկային երաշխիքների տրամադրման ուղղությամբ) և առևտրային

բանկերը (ՓՄՁ ու ռոբոտի առանձնահատկություններից բխող վարկային ծառայությունների մատուցման ուղղությամբ): Այս առումով, ՓՄՁ ու ռոբոտի բանկային վարկավորման կատարելագործման նպատակով անհրաժեշտ է հետևյալ միջոցառումների իրականացումը՝ ՓՄՁ աջակցության գործուն, հասցեական ու նպատակային մեխանիզմների օրենսդրորեն ամրագրում, ՓՄՁ վարկավորման ստանդարտների համակարգի կատարելագործում, վարկավորման պայմանների աստիճանական բարելավում, start-up նախագծերի զարգացում, վարկային բյուրոների գործունեության ակտիվացում:

11. Հանրապետությունում ներկայումս ՓՄՁ սուբյեկտների վարկունակության գնահատման առանձնահատկ մոտեցումներ գոյություն ունեն: Գնահատումն իրականացվում է այնպես, ինչպես մնացած տնտեսավարող սուբյեկտների պարագայում է: Քանի որ վարկունակության գնահատման ավանդական եղանակները ՓՄՁ սուբյեկտների առումով այնքան էլ կիրառելի չեն, ապա ՓՄՁ սուբյեկտների դեպքում վարկունակության գնահատման համար պահանջվում են նոր մոտեցումներ, որոնք հնարավորինս հաշվի կառնեն տվյալ սեկտորի առանձնահատկությունները: Իհարկե, դա բավականաչափ բարդ է, պայմանավորված է տվյալ սեկտորին պատկանող սուբյեկտների գործունեության յուրահատկություններով՝ հիմնականում պայմանավորված անորոշության, ինչպես նաև արտաքին միջավայրի հանդեպ խոցելիության մեծ աստիճանով: Այս տեսանկյունից ՓՄՁ սուբյեկտների վարկավորման նպատակահարմարության վերլուծությունն անհրաժեշտ է դիտարկել որպես անորոշության պայմաններում լուծման ենթակա խնդիր: Վարկառուի վարկունակության գնահատման համար հատկապես կարևոր նշանակություն ունի այնպիսի չափորոշիչների ընտրությունը, որոնք առավելագույնս լիարժեք և ամբողջական կբնութագրեն ՓՄՁ սուբյեկտի վիճակը: Վարկունակության գնահատման համար կիրառվող որակական ցուցանիշները մեր կարծիքով կարելի է դասակարգել 3 խմբի՝ ճյուղային, տարածաշրջանային և ՓՄՁ սուբյեկտի գործունեության ցուցանիշներ, որոնցից յուրաքանչյուրի գծով կիրառվում են լրացուցիչ ցուցանիշներ:

Դա թույլ կտա կազմակերպության վարկուևակուության մակարդակը գնահատել որակական ցուցանիշների տեսանկյունից:

12. ՓՄՁ սուբյեկտների վարկուևակուության բարձրացման տեսանկյունից հատկապես պետք է կարևորել նրանց կողմից արտադրման կամ մատուցման ենթակա ապրանքների ու ծառայությունների նկատմամբ շուկայում առկա պահանջարկի վերլուծությունը: Կարծում ենք՝ այս գործունը կարող է խթան հանդիսանալ առևտրային բանկերի համար, որոնք, այդ ուղղությամբ համակողմանի վերլուծություններ կատարելով և բացահայտելով հեռանկարային ու ոչ ռիսկային ոլորտները, կուղղորդեն ՓՄՁ սուբյեկտներին այդ ուղղությամբ գործունեություն ծավալելու: Առևտրային բանկերը կարող են իրականացնել որոշակիորեն խորհրդատվական բնույթ կրող գործունեություն, քանի որ ՓՄՁ սուբյեկտները շուկայի որակյալ ու խորը ուսումնասիրություններ իրականացնելու համար համապատասխան կադրեր ու այլ ռեսուրսներ չունեն: Նման վերլուծության արդյունքում կբացահայտվեն տնտեսական գործունեության համեմատաբար ցածր ռիսկային ոլորտները, ինչը կօգնի ՓՄՁ սուբյեկտներին մի կողմից կողմնորոշվելու գործունեության ուղղության ընտրության հարցում, իսկ մյուս կողմից կնպաստի վարկավորման հետկապված ռիսկերի որոշակի կրճատմանը:

13. Փոքր և միջին բիզնեսի սուբյեկտների վարկուևակուության գնահատման ժամանակ միայն ֆինանսական գործակիցների վերլուծությունը բավարար չէ, քանի որ դրանց դինամիկան, որպես կանոն, կայուն չէ և հնարավորություն է տալիս բացահայտել ֆինանսական վիճակի վատթարացման բուն պատճառները: Վարկուևակուության գնահատման մեթոդաբանությունը կարող է առավել արժանահավատ կերպով բնութագրել կազմակերպության ֆինանսական վիճակն այն դեպքում, եթե վարկի տրամադրման ժամանակ հաշվի առնվեն փոքր և միջին բիզնեսի սուբյեկտների աշխատանքային և նյութական ռեսուրսների, շրջանառու միջոցների օգտագործման արդյունավետության ցուցանիշները: Վերջինս պետք է իրականացնել ապրանքների, ծառայությունների և աշխատանքների իրացումից հասույթի գործոնային վերլուծության

հիման վրա: Դրա աճը կարող է կապված լինել ինտենսիվ և էքստենսիվ գործունեների հետ, որը նույնպես պետք է հաշվի առնել: Վարկուհիները յան տեսանկյունից ֆինանսական վիճակի բացասական դրսևորում պետք է համարել արտադրության զարգացման գործընթացում էքստենսիվ գործունեների առկայությունը: Մինչդեռ ինտենսիվ գործունեները վկայում են գոյություն ունեցող այն ռեզերվների մասին, որոնց օգտագործումը կարող է կազմակերպությանը դուրս հանել սպասվող ճգնաժամային վիճակից: Այս առումով նշված գործունեների միջև պետք է ապահովվի որոշակի հարաբերակցություն, որի պարագայում միայն կապահովվի կազմակերպության ֆինանսատնտեսական կայունությունը:

14. Հայաստանի Հանրապետությունում փոքր և միջին ձեռնարկությունների վարկուհիները յան բարձրացման հարցում կարևոր նշանակություն կարող է ունենալ այդ ուղղությամբ պետության կողմից իրականացվող արդյունավետ և հասցեական աջակցությունը: Այս նպատակով կիրառվող գործիքների շարքում հատկապես պետք է կարևորել տվյալ ոլորտի սուբյեկտներին պետական գնումների գործընթացի մեջ ներգրավումը: Պետությունը պետք է օրենսդրական պահանջների սահմանման միջոցով ապահովի պետական գնումների որոշակի տեսակների (կախված ապրանքներից, ծառայություններից և աշխատանքներից) գծով ՓՄՁ սուբյեկտների պարտադիր մասնակցություն: Դա մի կողմից կնպաստի նրանց ֆինանսական ապահովվածության մակարդակի բարձրացմանը, իսկ մյուս կողմից, առևտրային բանկերի համար կդառնա ուղղորդիչ հանգամանք վարկավորման հարցում: Նշված գաղափարի կենսագործման համար առաջարկվում է հետևյալ մեխանիզմը: Պետական պատվերների իրականացման արդյունքում ՓՄՁ սուբյեկտը ստանում է համապատասխան հավաստագիր, որը կվկայի նրա կողմից համապատասխան աշխատանքների պատշաճ իրականացման մասին և յուրօրինակ երաշխավորագիր կհանդիսանա առևտրային բանկի կողմից վարկավորման համար: Հակառակ պարագայում (այսինքն՝ վարկը չվերադարձնելու դեպքում) հավաստագրի գոյությունը հիմք կհանդիսանա պետական միջոցների հաշվին տվյալ սուբյեկտի չմարված պարտավորությունների իրականացման համար:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒ ԹՅԱՆ ՑԱՆԿ

ՀՀ օրենքներ և նորմատիվային այլ ակտեր

1. «Փոքր և միջին ձեռնարկատիրու թյան պետական աջակցության մասին» ՀՀ օրենք
2. «Կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենք
3. «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենք
4. «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք

5. «Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին» ՀՀ օրենք
6. «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենք
7. «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենք
8. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի որոշումը «Բանկերի վարկային ռիսկի կառավարման մեթոդական ուղեցույցը հաստատելու մասին»: 2001 թ.:
9. «Վարկային կազմակերպությունների գործունեության կարգավորումը, վարկային կազմակերպությունների գործունեության տնտեսական նորմատիվները» ՀՀ կենտրոնական բանկի Կանոնակարգ 14
10. «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» ՀՀ կենտրոնական բանկի Կանոնակարգ 2
11. «Գործառնական ռիսկերի կառավարման ձեռնարկ» ՀՀ կենտրոնական բանկ, https://www.cba.am/AM/laregulations/manual_29.01.09.pdf
12. «Սքորինգային համակարգի ձևավորման ձեռնարկ» ՀՀ կենտրոնական բանկ, https://www.cba.am/AM/laregulations/manual_scoring.pdf
13. «Իրացվելիության ռիսկի կառավարման ձեռնարկ» ՀՀ կենտրոնական բանկ, https://www.cba.am/AM/laregulations/cernark_16.02.11.pdf
14. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2015 թվականի հունվար-դեկտեմբերին: Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն:
15. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2016 թվականի հունվար-դեկտեմբերին: Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն:

Մանագիտական գրքեր և հոդվածներ

16. Հակոբյան Հ., Վարկառուի վարկուհական գնահատման արդի հիմնախնդիրները /ՀՀ նյութերով/: Առեկապուսակներ: Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան: Երևան, 2013 թ., 151 էջ:
17. Альгин А. Грани экономического риска. 1991г. 328 стр.
18. Банковское дело: современная система кредитования, учеб пособие. Под ред О. Лаврушина, О. Афанасьева, С. Корниенко. КНОРУС. М. 2007г. 261стр.
19. Банковское дело: Под ред. О. Лаврушина. М. 2005г. 672 стр.
20. Банковское дело. Учебник для студентов вузов. Под ред. В. Колесникова, Л. Кроливецкой. Финансы и статистика. М. 1998г. 464 стр.
21. Банковское дело. Под ред. Г. Белоглазовой, Л. Кроливецкой. 5-е изд., перераб. и доп. Финансы и статистика. М. 2003г. 592 стр.
22. Банковское дело. Под ред. Жарковской Е. ОМЕГА-Л. 4-е изд. М. 2006г. 452 стр.
23. Банковские операции. Под ред. О. Лаврушина и др. КНОРУС. М. 2007г. 384 стр.
24. Бернар И. Колли Жан-Клод. Толковый экономический и финансовый словарь. М.: 1994 г. стр. 1504
25. Блинов А., Шапкин И. Малое предпринимательство: теория и практика. Дашков и К. М. 2003г. 335 стр.
26. Большой экономический словарь. А. Азрилиян Институт новой экономики. М. 2010г. 1472 стр.
27. Брюмер С. Система поддержки малого предпринимательства в Германии. Деньги и кредит, 2001г. №7. стр. 13-20.
28. Бухвальд Е., Виленский А. Гарантии по европейским кредитам - реальная помощь малому бизнесу. Финансовый бизнес. 2000г. №6. стр. 29-33
29. Букирь М. Кредитная работа в банке: методология и учет. КНОРУС. М. 2012г. 240 стр.
30. Власова М. Анализ кредитоспособности клиента коммерческого банка. Банковское дело. 2006г. №5. стр.15-18.
31. Вулфел Чарльз Дж. Энциклопедия банковского дела и финансов. 2000г. 1600 стр.

32. Геронина Н. Актуальные вопросы банковского менеджмента: стратегическое управление, банковский маркетинг, финансовое планирование, управление инновациями. М. 2009г. 164 стр.
33. Грибов В. Менеджмент в малом бизнесе. Финансы и статистика. М. 2002г. 141 стр.
34. Деньги, кредит, банки: учебник под ред. Лаврушина О. Финансы и статистика, М. 2007г. 560 стр.
35. Дробозина Л. Финансы: учебник для вузов. ЮНИТИ. М. 2001г. 527 стр.
36. Ендовицкий Д., Бахтин К., Ковтун Д. Анализ кредитоспособности организации и группы компаний. КНОРУС. М. 2016г. 376 стр.
37. Ендовицкий Д. Анализ и оценка кредитоспособности заемщика: учебно-практическое пособие. КНОРУС. М. 2005г. 272стр.
38. Ендовицкий Д., Любушин Н., Бабичева Н. Ресурсоориентированный экономический анализ: теория, методология и практика. Экономический анализ: теория и практика. 2013г. № 38. стр. 2-8
39. Ендророва В., Хосянова С. Методика комплексной оценки кредитоспособности заемщика. М.: Финансы и кредит. 2002г. №14. стр. 2-10.
40. Зубченко Л. Тенденции во взаимоотношениях французских банков с малыми и средними предприятиями. Экономика. 2005г. №4. стр.85-90.
41. Ибадова Л. Финансирование и кредитование малого бизнеса в России: правовые аспекты. М. 2011г. 324 стр.
42. Качаева М. Оценка кредитного риска в коммерческом банке. Банковское кредитование. 2009г. № 1. www.garant.ru.
43. Косякова Т. К вопросу о контроле банком целевого использования кредитных средств. Банковское право. 2013г. № 2. стр. 41-45.
44. Краткосрочное кредитование сельскохозяйственных предприятий: Учеб. пособие для студентов вузов. М. Лишанский, И. Маслова. ЮНИТИ. М. 2000г. 287 стр.
45. Клейнер Г., Тамбовцев В., Качалов Р. Предприятие в нестабильной экономической среде: риски, стратегия, безопасность. М.: 1997г. 288 стр.
46. Лапуста М., Старостин Ю. Малое предпринимательство. Учебное пособие. Инфра-М. М. 2002г. 150 стр.
47. Лапуста М. Предпринимательство: учебник. ИНФРА-М. М. 2008г. 608 стр.

48. Лялин Е. и др. Развитие малого предпринимательства: отечественный и зарубежный опыт. Экономист. М. 2006г. 254 стр.
49. Любушин Н. Экономический анализ. Юнити. М. 2010г. 574 стр.
50. Луценко А., Лебедев. Е. Определение кредитоспособности физических лиц и риска их кредитования. М.: Финансы и кредит №32 (236). 2006г, стр.75-83.
51. Малые предприятия: организация, экономика, учет, налоги. Под ред. В. Горфинкеля, В. Швандара. Юнити. М. 2001г. 357 стр.
52. Майдан Н. Повышение эффективности венчурного финансирования. Проблемы современной экономики. 2013г. № 4. стр. 192-195.
53. Международная конвергенция измерения капитала и стандартов капитала: новые подходы. <http://www.cbr.ru/today/ms/bn/basel.htm>
54. Москвин В. Кредитование инвестиционных проектов: рекомендации для предприятий и коммерческих банков. Финансы и статистика. М. 2001г. 238 стр.
55. Мордвинкин А.Н. Кредитование малого бизнеса: Практическое пособие. Инфра-М. М. 2015г. 316 стр.
56. Муравецкий А. О возможностях снижения риска кредитного портфеля. Финансы и кредит. 2013г. № 16(544). стр. 61-66.
57. Нестеренко Ю. Малый бизнес: тенденции и ориентиры развития в современной России. РГГУ. М. 2007г. 224 стр.
58. Нешиной А. Инвестиции. М.: Дашков и К. 2007г. 372 стр.
59. Панова Г. Кредитная политика коммерческого банка. 1997г. 464 стр.
60. Поляк Г. Финансы. Денежное обращение. Кредит. Юнити-Дана. М. 2011г. 640 стр.
61. Полищук Л. Деятельность банковских кредитных организаций. Финансовая академия при Правительстве РФ. М. 1998г. 376 стр.
62. Просалова В. Проблемы оценки кредитоспособности клиентов коммерческих банков: монография. Владивосток: ВГУЭС, 2008г. 180 стр.
63. Роуз П. Банковский менеджмент. Дело Лтд. М. 1995г. 744 стр.
64. Романовский М. Финансы, денежное обращение и кредит. Дашков и К. М. 2006г. 544 стр.
65. Российская банковская энциклопедия. Под ред. Лаврушина О. 1995г. 552 стр.
66. Сенчагов В., Архипов А. Финансы, денежное обращение и кредит. ИНФРА-М. М.2007г. 356 стр.

67. Селезнева Н., Ионова А. Финансовый анализ. Управление финансами. Юнити, М. 2006г. 639 стр.
68. Севрук В. Банковские риски. Дело-ЛтД. М. 1995г. 72 стр.
69. Синки Джозеф Ф. Управление финансами в коммерческих банках. М.: 1994г. 820 стр.
70. Соколинская Н., Куприянова Л. Кредитование как важнейший фактор развития малого бизнеса в России. Изд. Кнорус. М. 2011г. 232 стр.
71. Соломин С. Банковский кредит: проблемы теории и практики. Юстицинформ, 2009г. 345 стр.
72. Смирнова Н. Специфика кредитования малого бизнеса в России в начале XXI века. Научный диалог. Экономика. Право. 2014г. № 7 (31). стр. 73–83.
73. Боброва Е., Каганов В., Устивицкая А. Заведеева В. Становление малого бизнеса. Национальное содружество бизнес-инкубаторов. М. 2003г. 135 стр.
74. Управление деятельностью коммерческого банка. Банковский менеджмент. Под ред. Лаврушина О. М.: 2002г. 688 стр.
75. Хесус Уэрта Де Сота. Деньги, банковский кредит и экономические циклы. Челябинск: Социум, 2008г. 663 стр.
76. Черненко А., Илышева Н., Башарина А. Финансовое положение и эффективность использования ресурсов предприятия. Юнити. М. 2009г. 208 стр.
77. Широков Б. Финансовая среда предпринимательства: Учеб.-метод. пособие. Финансы и статистика. М. 2006г. 496 стр.
78. Шевчук А. Финансы и Кредит. РИОР. М. 2006г. 415 стр.
79. Annual report on european smes 2013/2014. Final Report. European Commission 124 p.
80. Annual report on european smes 2012/2013. Final Report. European Commission. 99 p.
81. Annual report on european smes 2014/2015. European Commission 159 p.
82. Financing SMEs and entrepreneurs 2017 an OECD scoreboard. http://www.keepeek.com/Digital-Asset-Management/oecd/industry-and-services/financing-smes-and-entrepreneurs-2017_fin_sme_ent-2017-en#.Wc3sIY-CzGg#page28 <http://dx.doi.org/10.1787/888933465952>
83. Association of Small Business Development Centers, <http://www.asbdc-us.org/>

84. Siropolis Nicholas C. Small business management. NJ: Prentice Hall, 2001. 674 p.
85. Saunders A. Financial Institutions Management: A modern perspective. USA: 1994. 614 p.
86. Ong, C., Huang, J., Tzeng, G. Building Credit Scoring Models Using Genetic Programming. Expert Systems with Applications, 2005, 29 (1). pp. 41-47.
87. Huang, C., Chen, M., Wang, C. Credit scoring with a data mining approach based on support vector machines. Expert Systems with Applications, 2007, 33 (4) pp. 847-856.
88. Heffernan, S. Modern Banking. Chichester, West Sussex: John Wiley & Sons, Inc., 2005. 736p.
89. www.cba.am ՀՀ Կենտրոնական բանկի պաշտոնական ինտերնետային էջ :
90. www.banks.am
91. <http://smeinvest.am> «ՓՄՁ ներդրումներ» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության պաշտոնական ինտերնետային էջ :